# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԹ

ԺԷ ՏԱՐԻ

Մայիս

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1960

2854

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Սիրո և միության նոր կոչ Մայր Աթոռից . . . 3
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը նկարիչ Գրիգոր Ծիլթյանին . . . 6
Պաշտոնական հաղորդագրություն . . . 7
ԲԱԲԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈ— Հոգեգալուստ . . . 8
Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից . . . 11
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . 13
Վեհափառ Հայրապետի մեկնումը արտասահման . . . 15
Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Բեյրութում ապրիլի 1-ին զոհված 24 հայ ուսանողների եղերական և տխուր մահվան առթիվ . . . 16
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Հովհաննես Տավուշեցի— Վանական վարդապետը և Ոլոռուտ գյուղը որպես նրա կյանքի ու գործունեության մի կենտրոն . . . 17
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ—Խորեն եպիսկոպոս Ստեփանեի մանկավարժական գործունեությունը . . . 23
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ— Գրիգոր Արծրունի . . . 30
Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ— Հայկական խաչքարերի արվեստը . . . 37
Ս. ՓԱՅԱՃՅԱՆ— Սոֆիայի հայերը . . . 46
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . 51
Ա. Հ.—Նոնիկ ավագ քահանա Վարդանյան, «Դեպի Հայաստան» . . . 54
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . 56

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**
**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ**
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»
Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

*Երևան, 1960 թ.*

# ՄՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1960—1961 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով—երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերություններից և հիվանդություններից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՉ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

«Էջմիածին» ամսագրի 1960 թվականի Դ համարում տպագրվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 25 թվակիր սրբատառ կոնդակը, քրիստոսավանդ սիրո ողջույնով և հայրապետական օրհնությամբ, ուղղված Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Թուրքիայի հայոց Պատրիարքական Աթոռներին, Հայ Եկեղեցու հոգևորականության, թեմական խորհուրդներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին, որպես ՍԻՐՈ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՉ ՈՒ ՀՐԱՎԵՐ, Հայ Եկեղեցու հոգևոր իշխանության սուրբ բարձունքից, Անթիլիասի եկեղեցական ծանոթ տագնապի խաղաղ և համերաշխ լուծման ի խնդիր:

Ծանոթ են բոլորին Անթիլիասի եկեղեցական տագնապի շարժառիթները ու պատմությունը, որոնց տխուր հետևանքով, չորս տարուց ի վեր, «երկփեղկվեցան Ազգն ու Եկեղեցին», ինչպես տրտմությամբ նշում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում:

Ծանոթ են միաժամանակ այդ տագնապի խաղաղ ու դրական լուծման նվիրված ընդհանրապես Մայր Աթոռի և ի մասնավորի Վեհափառ Հայրապետի՝ որպես Հայ Եկեղեցու հոգևոր գերագույն իշխանության Պետի՝ անշահախնդիր վերաբերմունքը, բազմաթիվ ջանքերն ու հորդորները, խաղաղասիրական կոչերն ու հաշտության առաջարկները, որոնք, սակայն, դժբախտաբար միշտ մնացին «ձայն բարբառոյ յանապատի», որովհետև «մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է» (Հռովմ. ԺԱ 15):

«Մեր սիրո խոսքը, Մեր համերաշխության և միության հորդորները,— գրում է մի անգամ ևս վշտով Վեհափառ Հայրապետը,— չկրցան մեղմել ալեկոծվող կիրքերը»:

Ամենապատիվ Տ. Դարեգին պատրիարքի, Երուսաղեմի Աթոռի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և մեր բարձրաստիճան այլ հոգևորականների և սրտացավ ազգայինների փորձերը մնացին անարձագանք:

Այնուամենայնիվ Վեհափառ Հայրապետը չհուսահատվեց. չորս տարի շարունակ մրմռով տանջվեց, տագնապեց, որպես արթուն պահակը Հայ Եկեղեցու, հսկելով Հայ Եկեղեցու ապահովության վրա, քրիստոնեական անկոտրում հույսն ու հավատը սրտում, և արեց անհրաժեշտ ամեն ինչ՝ առաջքը առնելու համար եկեղեցական պառակտման:

«Ի տես այս բոլորին, Մեր սիրտը վիշտով լեցվեցավ, բայց երբեք չկորսնցուցինք Մեր հույսը և Մեր լավատեսությունը Հայ Եկեղեցվո միությունը և խաղաղությունը վերականգնելու Մեր ճիգին մեջ: Ծանոթ են բոլորին Մեր բազմաթիվ փորձերը այս աստվածահաճո և ազգաշեն ճամբուն վրա»:

Եվ ահա այսօր, եկեղեցական այս տխուր տագնապի առաջ մտահոգ, վշտահար բայց միշտ լավատես, Վեհափառ Հայրապետը խաղաղ սրտով, հստակ աչքերով և պայծառ մտածումներով գտնում է, որ ժամանակն է այլևս վերջ տալու եկեղեցական այդ տագնապին, և ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ վերականգնելու ազնիվ մտահոգությամբ, մի անգամ ևս սրտագին հրավեր է կարդում բոլորին ասելով. «Մեր հայացքը սևեռած Ս. Լուսավորչի անմար կանթեղին, անգամ մը ևս կողբանք մեր եկեղեցվո այս տխուր կացության վրա և վերստին սիրո և միության հրավեր կկարդանք բոլորին»:

Ապրիլ 25 թվակիր Հայրապետական կոնդակի ոգին շինարար է և դրական, որը մի անգամ ևս ամփոփում է մինչև այժմ կատարված հաշտության ջանքերը և միաժամանակ հանդիսանում է մի առաջընթաց քայլ՝ Անթիլիասի եկեղեցական տագնապը համերաշխությամբ և խաղաղությամբ լուծելու ճանապարհի վրա: Վեհափառ Հայրապետը Իր 3 մայիս թվակիր Գարեգին պատրիարքին ուղղած մի նամակում, խորհրդածելով կոնդակի ոգու և նպատակների մասին, գրում էր հետևյալը. «Վստահ ենք, թե կոնդակը Ձեր սրտին պիտի խոսի. ինչպես Դուք բազմիցս արտահայտված եք և բարի փորձեր ալ կատարած, ժամանակը հասած պետք է նկատենք ելք մը գտնելու Կիլիկյան Աթոռին ներս հաշտություն և բնականոն վիճակ ստեղծելու համար, կազմերու համաձայնությամբ և փոխադարձ զիջումներով: Մայր Աթոռը կողմ չէ և չուզեր ըլլալ: Մայր Աթոռը մեկ իղձ ունի միայն, որ վերջ գտնե երկփեղկումը, Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսության օրինականացումով և Աթոռներու պատմական իրավասությանց վերահաստատումով: Բաց սրտով, ուրախ սրտով գրեցինք Մեր այս կոնդակը և լավատեսությամբ: Եթե Անթիլիասի մերժումի կամ լռության քարին չզարնվինք, հույս ունինք, որ այս տարի հարմար տեղ մը կրնա տեղի ունենալ հաշտարար և խաղաղարար ժողով մը»:

Կոնդակը հարազատ և կենդանի արտահայտությունն է Վեհափառ Հայրապետի խաղաղասիրական խոհերի, հաշտության մտորումների, և կոչված է փարատելու այն ծանր տագնապը, որը ճնշում է հայ հոգիների վրա, ավելի քան անա չորս տարիներից ի վեր: Կոնդակում Վեհափառ Հայրապետը վառ կերպով և հանգամանորեն խոսում է եկեղեցական միությունը վերականգնելու անհրաժեշտության վրա: Վեհափառ Հայրապետը նաև հավատում է հայ ժողովրդի ողջմտության, կորովի և ազնվության վրա, և սրտագին կոչ է անում, որ վերջ գտնի եկեղեցական տագնապը, այն բարձր պատասխանատվության զգացումով, որ «Եկեղեցական և ազգային աղետի վերածվող այս կացության առաջ, անձնական հեղինակության խնդիր հարուցել պիտի նշանակեր հոգեկան տկարություն և ընդհանուր շահի գիտակցության պակաս»:

Ընդհանուր այս կացության առաջ, Վեհափառ Հայրապետը հաշտության գործնական առաջարկներ է բերում ամենաանկեղծ մտադրություններով. «Ուրեմն Մենք, անվարան և անկեղծավոր սրտով կոչ կընենք ամենուն անխտիր, որպեսզի պահվի ու պահպանվի, իբրև կյանքի սրբազան կանոն, Հայ Եկեղեցվո միությունն ու ամբողջությունը, Ամենայն Հայոց Նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնով. որպեսզի միացյալ ճիգերով և փոխադարձ զիջումներով վերահաստատվի համերաշխ գործակցությունը Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին և պառակտված թեմերին ներս մեր եկեղեցվո կանոններուն, ավանդություններուն և նվիրապետական Աթոռներու պատմական իրավասություններուն լույսին տակ»:

Հայրապետական կոնդակի հիմնական միտքն այն է, որ եկեղեցու մեջ պայքարներ և հերձումներ չլինեն ու եկեղեցու գավթում վար դրվեն բոլոր զենքերը: Ապրում ենք պատասխանատու ժամանակների մեջ. մեկ կողմ թողնենք հայ կյանքի մանրուքները, «լոկ անձնական, խմբակցական շահերը», և մեր ուշադրությունը կենտրոնացնենք առավել էական, համազգային հարցերի վրա, ինչպիսիք են Հայ Եկեղեցու միությունը, հայ կյանքի ներքին խաղաղությունը և Սփյուռքի մեջ հայապահպանման մեծ գործը, որը, Վեհափառ Հայրապետի բնութագրմամբ, «հրամայական թելադրանքն է մեր եկեղեցվո կանոններուն, մեր ազգային պատմության և մեր ժողովուրդի գերագույն շահերուն»: Վեճեր, տարակարծություններ կան ու կլինեն: Բայց այդ բոլորը չպետք է վերածվեն ազգային ողբերգության և խոչընդոտեն Ազգի միությունը և եկեղեցու միասնականությունը: «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ» (Եփես. Դ 26): Ի՞նչ է հարկավոր այսօր մեզ, որպես ժողովուրդ և եկեղեցի: ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. «պահել զմիաբանութիւն Հոգւոյն» (Եփես. Դ 3): «Քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած» (Ա. Կորնթ. Է 17):

Սիրո և միության այս նոր կոչը տագնապի լուծման բնական եղանակն է: Մայր Աթոռը առաջնորդվում է միշտ բարի մտադրություններով: Հաշտությունից և խաղաղությունից ոչ ոք չի տուժի: Հարցի լուծման ամենաճիշտ ճանապարհը Վեհափառ Հայրապետի առաջարկն է. «Ետ մեզ զպաշտօնն հաշտութեան» (Բ Կորնթ. Ե 18):

Վեհափառ Հայրապետի սիրո և միության կոչը առաջին հերթին հասցեագրված է «Անթիլիասի ներկա աթոռակալին՝ Զարեհ սիրեցյալ Եղբորը Մեր, որմե չորս տարիներ առաջ համբուրիվ բաժնվեցանք,— գրում է Վեհափառ Հայրապետը,— Մեր մեկնումի տխուր օրը, ուրախ օր մը վերստին ողջագուրվելու քաղցր հույսով»:

Վեհափառ Հայրապետի նոր նախաձեռնությունը հույս և հավատ է ներշնչում իր մտադրությունների անկեղծությամբ, բացորոշությամբ. կարելի է վստահ լինել, որ «անձնական հանդիպում մը» Վեհափառ Հայրապե-

տի և Անթիլիասի սրբազան աթոռակալի միջև, կարող է միայն օգտակար լինել և՛ Մայր Աթոռին, և՛ Անթիլիասին: «Այս ոգիով ներշնչված ու գոտեպնդված,— գրում է Վեհափառ Հայրապետը,— կառաջարկենք, որ այս տարվան ընթացքին, հարմար թվականի մը, տեղի ունենա ժողով մը, Մայր Աթոռի պատվիրակներու և Կիլիկյան Աթոռի Երկու կողմերու ներկայացուցիչներու միջև, նույժ փափագելի գտնելով նաև, որ Մենք Ես անձնական հանդիպում մը ունենանք Տանն Կիլիկիո սրբազան աթոռակալին հետ՝ համրավենզումն մեր սիրո միության և ի շինություն մեր Ս. Եկեղեցվո»:

Ապրիլ 25 թվակիր կոնդակը ընդունվեց գոհունակությամբ և ուրախությամբ: Վստահ ենք, որ Անթիլիասը ևս կբաժանի Մայր Աթոռի այս նույն մտահոգությունները և Էջմիածնից հասած նոր կոչը կգնահատի ըստ արժանվույն, հօգուտ Հայ Եկեղեցու և ի շահ հայ ժողովրդի, որովհետև «Մենք մեկ Ազգ ենք և մեկ Եկեղեցի, և մեկ հավատք ունինք՝ Փրկչի Իշման Ս. Տեղով, ամենայն հայոց Ս. Էջմիածնով, որ Ս. Լուսավորչի օրերեն մինչև մեր օրերը եղած է ու կմնա աստվածադիր միակ գլուխը Հայաստանյայց Եկեղեցվո և հոգևոր գերագույն հեղինակությունը մեր Եկեղեցվո նվիրապետության և համայն հայ հավատացյալ ժողովուրդի: Ս. Էջմիածնի օրհնությամբ, մեր Եկեղեցիեն ներս և մեր Եկեղեցիով պետք է պահենք և ամեն գնով պետք է պահպանենք ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդի հոգեկան միությունը»:

Վեհափառ Հայրապետի հաշտության և համերաշխության առաջարկը շատ կոնկրետ է, հստակ և արդար: Սիրո և միության այս նոր կոչի մեջ, միաժամանակ ևս մարմնավորվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ամբողջ հմայքը: Այդ կոչով նորից Մայր Աթոռն ու Վեհափառ Հայրապետը կանգնել են իրենց պատմական առաքելության նվիրական բարձունքի վրա: Մայր Աթոռն է միության ամուր կապը «մրրկավ քաժանված» հայության բեկորների միջև: ԵՒս՛նք միության այս նոր կոչը, որ գալիս է պատմության էջերով՝ Ս. Էջմիածնի հոգևոր քարձրր Դահից, որպես սրտագին հրավեր, որ սիրենք ու գուրգուրանք, պահենք ու պահպանենք «ամբողջ ու անխռով» այն միակ համազգային, սուրբ հաստատությունը, որ Հայաստանյայց Եկեղեցին է, խորհրդանշված Փրկչի հրաշափառ սուրբ իջման տեսիլքով և մարմնավորված, շոշափելի և զգալի դարձած Ամենայն Հայոց Հայրապետությամբ:

Այսօր, ինչպես անցյալում, Ս. Էջմիածինը իր հոգևոր և ազգային առաքելության հանապարհի վրա է կանգնած: Ս. Էջմիածինը համազգային սրբավայր և հավատի կենտրոն է, որպես «Սուրբ և աստուածային քրիստոսակերտ և լուսանկար ամենից հայոց Աթոռս Էջմիածին... Մայր ամենայն եկեղեցեաց և շնորհածին ծնող նոցին մանկանց և յԱթոռ յատկապէս Ազգիս Հայոց» («Ջամբռ». էջ 6), ու նաև որպես հոգեկան անքակտելի կապ, որ միացնում է հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Հայրապետի կոչի և քաղցր խոսքի առաջ պետք է լռեն բոլոր կրքերը: Մեղավորներ չփնտռենք և չճշտենք տագնապի մեջ կողմերի պատասխանատվության չափերը: Այդ տագնապը չպետք է ստեղծվեր: Ստեղծվեց, հակառակ Մայր Աթոռի կամքին: Բայց եղածը պատճա՞ռ է արդյոք, որ շարունակվի ողբերգությունը Հայ Եկեղեցու ծոցում և հայ հոգիների մեջ:

Վեհափառ Հայրապետի սիրո և միության հրավերը, վստահ ենք, թե անխտիր բոլորի սրտին պիտի խոսի և ճիշտ ժամանակին է գալիս: Զգում ենք, թե բոլորը սպասում էին նրան և ստեղծվել է տագնապի լուծման բարեբեր մթնոլորտ: Մնում է, որ իմաստությունը ունենանք արմատախիլ անելու ամեն թյուր և ծուռ մտածումներ: Համազգային միացյալ ճիգերով, ազգովին նվիրվենք, ինչպես սրտցավորեն նշել է Վեհափառ Հայրապետը, «Ս. Եկեղեցվո հովանիին ներքև... մեր ժողովուրդի հոգևոր, իմացական և նյութական ուժերու» մեկտեղումով, «Սփյուռքի հայության ազգապահպանության սրբազան գործին, մեր օրերու մեծագույն հարցը, որ դրված է մեր առաջ»:

«Անա օր փրկութեան» (Բ Կորնթ. Զ 2): Անա «ամ փրկութեան եկեալ հասեալ» (Եսայի ԿԳ 4):

«Թող իմաստության լույսը և ավետարանական սերն ու խաղաղությունը իջնեն մեր բոլորիս վրա և առաջնորդեն մեզ, որպեսզի ձեռք-ձեռքի տված խաղաղության ընենք մեր Արարքի տունին մեջ և լծվինք ազգաշեն գործի».— բարեմաղթում է Վեհափառ Հայրապետը:

Իսկ բովանդակ հավատացյալ հայ ժողովուրդը, հեռվից և մոտիկից, ձայնակցում է իր խաղաղասեր Հայրապետի բարի ցանկություններին.

«ԵՂԻՑԻ՛, ԵՂԻՑԻ՛ ԵՒ ԵՂԻՑԻ՛»:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԹՅԱՆԻՆ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԹԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Տիրոջ ողորմությամբ, այսօր, 20 ապրիլ 1960-ին, հոգեկան մեծ ուրախություն ունեցանք Մայր Տաճարիս Ավագ Սեղանի Աստվածամոր նորակերտ նկարը օծելու և զետեղելու իր տեղը, Ձեր իսկ ներկայությամբ:

Աստվածամոր սույն նկարը Ձեր ձեռակերտն է, արգասիքը Ձեր արվեստին, Ձեր փայլուն տաղանդին, Ձեր հայ ստեղծագործ ոգիին, զոր Դուք երջանիկ ներշնչումով մը անվանեցիք «Հայաստանի Տիրամայր», և զոր Մենք կնկատենք Ձեր սրտի պարգևը՝ մատուցված աստվածակառույց Ս. Էջմիածնին և հայ հավատացյալ ժողովուրդին:

Սույն հայրապետական կոնդակով կշնորհավորենք և կօրհնենք զՁեզ և Ձեր գործը, և կաղոթենք առ Տեր՝ Ձեր քաջառողջության և արևշատության համար, որպեսզի տակավին երկա՜ր, երկա՜ր տարիներ շարունակեք Ձեր ազնիվ ու ստեղծարար աշխատանքը՝ ի փառս նկարչական արվեստի և ի պարծանս Հայ Ազգի, որուն հարազատ զավակն եք Դուք, ծնած Նոր-Նախիջևանի աստվածասեր մեր ժողովուրդի ծոցեն:

«Շնորհք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և զօրութիւն Սուրբ Հոգւոյն եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ: Ամէն»:

Վազգէն Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն ապրիլի
1960 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
ի Ս. Էջմիածին:

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընդառաջելով Հյուսիսային Ամերիկայի Հայոց թեմական խորհրդի հրավերին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսն Ամենայն Հայոց որոշել է հովվապետական այցելություն տալ Ամերիկայի հայ եկեղեցիներին, անձամբ տանելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը անխտիր բոլոր հայ հավատացյալներին՝ համրապնդումն մեր սուրբ հավատքի և Հայաստանյայց Եկեղեցու սիրո միության ու ներքին խաղաղության:

Իր ճանապարհորդության ընթացքին Նորին Վեհափառությանը կուղեկցեն Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը (գավազանակիր) և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

7 մայիսի 1980 թ.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԲԱԲԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈ

# ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

*Սիրելի՛ հայորդի, Հոգեգալստյան տոնով կվերջանա և կկնքվի Պենտեկոստեից կամ Հիսնանց շրջանը։*

*Պենտեկոստե հունարեն բառ մըն է, որ կնշանակե տոն Հիսնօրյա կամ տոն Հիսնանց, իբրև թարգմանություն եբրայեցերեն Խակխամիշիմ բառին։ Իսկ Խակխամիշիմ հին հրեից մեջ տոն մըն էր շնորհակալության, որ կկատարվեր հունձքի առթիվ, Պասեքեն (Զատիկ) յոթը շաբաթ ետքը։ Այս տոնը հետո փոխվեցավ և նվիրվեցավ Սինայի օրինաց (Տասնաբանյա պատվիրանաց) հրատարակության հիշատակին։*

*Հոգվույն Սրբո գալուստը տեղի ունեցած է այս Խակխամիշիմ կամ Պենտեկոստեից տոնին օրը, և այս պատճառով ալ Քրիստոնեական եկեղեցվո մեջ պահված է Պենտեկոստե պատմական անունը՝ բոլորովին իր նոր նշանակությամբ, այսինքն՝ «Տոն գալստեան Հոգւոյն Սրբոյ», կամ իր հայերեն կարճ ձևով՝ Հոգեգալուստ։*

*Հոգվույն Սրբո գալստյան պատմությունը կարդա՛ Գործքի երկրորդ գլխուն մեջ։*

*Հայաստանյայց եկեղեցին մեծ հանդիսավորությամբ կտոնախմբե Հոգեգալուստը Ս. Ներսես Շնորհալի հայրապետի ժամանակեն ի վեր։*

*Նախկին եկեղեցիներ, ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցին, միօրյա կտոնեին Հոգեգալուստը, կիրակի օրը, և հաջորդող յոթնյակը կանցնեին պահոք։*

*Հույն եկեղեցին մինչև ցայսօր կպահե հին կարգադրությունը։ Լատին եկեղեցին, Ը դարուն, արդեն կտոներ յոթնյակով։*

*Եթե Հոգեգալստյան շարականներուն հեղինակները նկատի առնենք, կտեսնենք. թ Հայաստանյայց եկեղեցին ալ Շնորհալիե հառաջ յոթնյակով կտոնախմբեր Հոգեգալուստը։ Վասնզի առաջին օրվան կանոնը որու սկիզբն է «Առաքելոյ աղաւնոյ», ըստ ոմանց կընծայվի Մովսես Խորենացվո, կա Հովհան Մանդակունվո։ Իսկ ամբողջ յոթնյակի Կանոնները միանգամայն կընծայվի Անանիա Շիրակացվո (է դար)։ Այս այլազան և հակասական տեղեկություններե կհետևի, թե Հոգեգալստյան տոնը Հայաստանյայց եկեղեցվո մեջ, Շնորհալիեն հառաջ կատարված է թե՛ միօրյա և թե՛ բազմօրյա հանդիսավորությամբ, բայց Ներսե Շնորհալին է, որ ըրած է վերջնական կարգադրությունը յոթնօրյա տոնախմբության*

*Երկրորդ օրվան շարականը, «Նոյն նման», իր ծայրանունով մատնանիշ կըն արդեն իր հեղինակը, Ներսես։ Զ և Է օրվա Կանոնները ըստ ոմանց կընծայվին Լամբրոնացի Ներսեսին։*

*Շնորհալին յոթնօրյա տոնախմբություն հաստատելով հանդերձ՝ չվերցուց շաբաթապահքը, անշուշտ հարգելով հին եկեղեց վո կարգադրությունը։ Այս պահքը, որ հի Տոնացույցներու մեջ «Ամառան աղուհացք» կըսվի, նորերուն մեջ եղած է «Եղիակա պահք», որովհետև Հոգեգալստյան հաջոր կիրակին ճաշու ընթերցվածները Եղի մարգարեի, այդ խիստ և նախանձախնդի պահեցողին պատմությունը կըսեն (Գ Թագ. ԺԸ 19—46 և Դ Թագ. Բ 1—15։ — Կաթ. Յակ. Ե 16—20։ — Ղուկ. Դ 25—30)։*

***

Սիրելի՛ հայորդի, այս տեղեկությունները կուտամ քեզի ո՛չ միայն իբրև պատմական հետաքրքրություն, այլ նաև դիտել տալու համար քեզ, թե ո՛րչափ հաջողությամբ ըմբռնված է Հոգվոյն Սրբո խորհուրդը Հայաստանյայց Եկեղեցվո մեջ։

Ավետարանի դասերուն մեջ Ս. Հոգին տիրող է, Ս. Հոգվույն գիտությունը լավ պետք է յուրացնել Ավետարանի կյանքը ապրելու ատեն։ Փրկիչն ըսավ. Ես պիտի երթամ, որ Մխիթարիչ Ս. Հոգին գա ձեզի։ Ան է, որ պիտի առաջնորդե ձեզի, ան է, որ պիտի լրացնե իմ սկսած գործը։

Սիրելի՛ զավակս, այս խոսքերը աստվածաբանական վճիռներ չունին. մի՛ շփոթիր ամենևին։

Ս. Հոգին կանձնավորե և կխորհրդավորե գերագույն, աստվածային իմաստությունը, գիտությունը։ Եվ Ավետարանի դասերուն մեջ այդ իմաստությունը, այդ գիտությունը պիտի առաջնորդե հավատացյալներուն՝ իրենց բովանդակ կյանքին մեջ։

Կուզեմ, որ խմբագիր Ավետարաններու մեջ ուշադրությամբ կարդաս Մատթ. ԺԲ, Մարկ. Գ և Ղուկ. ԺԲ գլուխները և մա՛նավանդ այդ գլուխներու մեջ Ս. Հոգվույն նշանակությունը շեշտող պարագաները։

Փրկչին երդվյալ հակառակորդները խոսք չէին ուզեր հասկնալ, և Անոր հրաշալի գործերը կնկատեին իբրև սատանայական կամ կախարդական գործեր և կջանային այսպես ալ համոզել ժողովուրդը, որպեսզի չհետևին Անոր, որ միշտ կըսեր, թե Ինքն եկած էր աշխարհ Իր Հոր կամքը հայտնելու և կատարելու համար։ Ասիկա աստվածային գործ մըն էր, որ հրաշալի արդյունքներով կպսակվեր։

Դիտե, որ մասնավորապես դիվահար կամ այսահար ըսված հիվանդներ Փրկչին աստվածային ազդեցության շնորհիվ կբժշկվեին։ Եվ ասկե օգտվելով էր, որ Իր թշնամիները կըսեին.— Նայեցե՛ք, այս մարդը մոլեգներ է, խենթեցեր է. այս մարդը դևերը կհանե ո՛չ թե Աստուծո զորությամբ, այլ դևերու իշխանին միջոցով. վասնզի կըսեին, թե «Բէեղզեբուղ գոյ ի դմա»։

Փրկիչը սուր տրամաբանությամբ մը պապանձեցուց Իր թշնամիները.— մի՞թե ասանկ բան կարելի է. «Զիա՞րդ կարէ Սատանայ զՍատանայ հանել»։ Ինքն Սատանայի դեմ կռվող մըն է արդեն, ի՞նչպես ուրեմն Սատանան պիտի կռվեր ինքնիրեն դեմ։

Ասոր վրա հայտարարեց ավետարանական սա՛ ճշմարտությունը.— «Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի մարդկան մեղք և հայհոյութիւնք, որչափ և հայհոյեսցեն։ Բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենից մեղաց։ Զի ասէին, թէ այս պիղծ գոյ ի նմա» (Մարկ. Գ 28—30. Համմտ. Մատթ. ԺԲ 31—32 և Ղուկ. ԺԲ 10)։

Սիրելի՛ հայորդի, անշուշտ պիտի չցավիս՝ երբ դիտել տամ քեզ, թե մեր հայ ժողովուրդին մեջ Հոգվույն Սրբո դեմ հայհոյությունը ուշագրավ կերպով կմշակվի, և հայ գաղութը այս պատճառով մատնված է բարոյական դժվարությանց կամ այնպիսի դժբախտության մը, որով կջլատվին իր ուժերը, իր ընկերային կյանքին մեջ, իր ազգային գործունեության մեջ։ Վասնզի ճշմարիտ խոսքի արժեքը ինկած է. մերթ անգիտորեն և ավելի հաճախ գիտակցությամբ մերայինք կմեղանչեն ճշմարտության սրբության դեմ, և այսպիսով կտրտմեցնեն ճշմարտության Ս. Հոգին։ Այս մեղանչումն է պատճառը, որ սերը, ընկերային կյանքին ամենեն բնական և ամենեն զորեղ կապը, կթուլնա և մարդիկ իրարու հանդեպ կասկածոտ կըլլան ու անվստահ. և անհասկցողությունն ու թյուրիմացությունը կկործանեն սիրո կյանքին, հոգեկան կյանքին հոյակապ ամրությունները։

Հոգին և հոգեկան ճշմարտություններ անտեսանելի են, բայց տեսանելի են ատոնց արդյունքները։ Ինչպես որ կհիշես, Փրկիչն անգամ մը քամիով առակեց Հոգվույն ազդեցությունը։ Հողմը կփչե, զայն չես տեսներ, բայց գիտես, բայց կզգաս։ Ատոնք վերացական բաներ չեն, այլ դրական արդյունքներն են մեր կյանքին։

Եթե Հայաստանյայց Եկեղեցին այնքան կարևորություն տված է Հոգեգալստյան տոնախմբությունը յոթնօրյա հանդիսավորությամբ փառավորելու, խոստովանինք, թե շատ լավ կարգադրություն մըն է եղածը։ Վասնզի այս հանդեսներուն նպատակն է ո՛չ միայն Քրիստոնեական Եկեղեցվո մեջ Ս. Հոգվույն դերն ու դիրքը աստվածաբանել, այլ նաև Ավետարանին դասերը մատչելի և հասկնալի ընծայել այս կենսական խնդրին մեջ ալ։

Կրնանք այս իմաստով ըսել, թե Հոգեգալուստը տոնախմբությունն է աստվածային իմաստության, աստվածային գիտության, աստվածային շնորհաց, որով կօծվին Ավետարանին դասերը։

Երանի՜ թե մեր Ազգը իր հալածանքի այս շրջանին մեջ հրավիրվեր Ս. Հոգիով. վասնզի Ա՛ն է, որ կքննե «զխորս Աստուծոյ», Ա՛ն է, որ Իր «կենդանարար» ազդեցությամբ կժողովե ցրվյալները և կլուսա-

վորե զանոնք «միաբանական սիրով», կվերցնե անջրպետները մարգոց մեջեն, կայրե, կոչնչացնե թյուրիմացությունները. և լեզուներ կուտա սրբագործյալներուն, որպեսզի դյուրավ հասկնան գիրար և հասկըցնեն ուրիշներու։

— «Որք արբին զհուրն կենդանի, և ընթացեալ արբուցին տիեզերաց. որք արբինն կենդանացանէ»։

— «Առատապէս ծաւալեալ ի մեզ հուրն կենդանի. քանզի արբեալ առաքելոցն և արբուցին տիեզերաց»։

Հոգեգալստյան շարականներն ու երգերը ծայրե ի ծայր գեղեցիկ են իրենց հորինվածքով և իրենց հոգեհույզ գույներով, ինչպես որ դիտել տվի, մեծ մասամբ Շնորհալիի գրչեն ու շունչեն։

Շնորհալին, այո՛, պահ մը հափշտակված սիրո թևերեն, ինչպես որ երգած էր Փրկիչը իբրև սեր իր «Առաւօտ լուսոյ» երգին մեջ, Հոգեգալստյան տոնին երկրորդ օրվան Օրհնության վերջին տան մեջ ալ կերգաբանե միևնույն սերը, ուղղելով իր խոսքը Ս. Հոգվույն, թե Սեր-Հիսուս, իբր արդյունք Իր սիրույն՝ գնաց և Սեր-Հոգին ղրկեց, և Քու միջոցավ Իր անդամները (հավատացյալները) կապեց Իրեն. և Իր շինած Եկեղեցին հաստատեց Քու յոթը սյուներուն վրա. և առաքյալները Եկեղեցվույն վրա տնտես գրավ և Քու յոթը շնորհներովդ զարդարեց զայն. այսօր ալ սրբե՛ մեր մեղաց մեզը և անոր տեղը մեզի հավեցուր փառաց լույսը։

— «Սէրն ի սիրոյ զՍէրդ առաքեաց,
Ցինքըն զանդամս իւր Քև յօդեաց.
Զեկեղեցի իւր, զոր շինեաց,
Եօթն սեամբ Քո հաստատեաց.
Տընտես ի սմա եդ զառաքեալս,
Եօթնեակ շնորհօք Քո զարդարեաց։
Մաքրեա՛ ի մէնջ ըզմէգ մեղաց,
Եւ ըզգեցո՛ ըզլոյս փառաց»։

Մեր Եկեղեցին այսպես կհասկնա և կբարեբանե Հոգեգալուստը։

Ոսկեբերանին երեք աղոթքները, և Լամբրոնացվույն «Սոփպիմ ի սիրոյ» քարոզը, որոնք կկարդացվին Հոգեգալստյան տոնին առթիվ, կվառեն Եկեղեցվո լրության մեջ հոգևոր կյանքի հուրը։

Մենք, սիրելի՛ բարեկամս, ազգովին պետք ունինք հոգեկան մաքրագործության. նոր և հրազինյալ և սիրազինյալ կյանքին, չմեղանչելու համար Ս. Հոգվույն դեմ։

Մեր մեջ՝ դիտմամբ. գիտակցաբար խոսք չհասկանալու մեղքը սկսած է հասնիլ վտանգավոր չափերու։ Ասիկա մեղք մըն է պարկեշտության դեմ, արժանապատվության դեմ, նկարագրի սրբության դեմ, և Ս. Հոգվույն դեմ։

Հայ Ազգը կարժե. որ գիտակցությամբ տոնե Հոգեգալուստը. որովհետև. նայելով ավանդության մը, Պենտեկոստեի հրաշալի դեպքին հայեր անձամբ ներկա գտնված են Երուսաղեմ և ուղղակի լսած առաքյալներուն լեզվախոսությունը։ Ըստ Լամբրոնացվո, նույնիսկ Թադեոս առաքյալ ՆայիրԻՆ խոսեր է հո՜ն։

Չեմ գիտեր, թե Լամբրոնացվույն աղբյուրը ի՞նչ է, այսինքն՝ գրավո՞ր ավանդություն թե բերանացի, բայց հայոց ներկայության կվկայեն Լատին Եկեղեցվո նշանավոր հայրերեն Տերտուղիանոս և Օգոստինոս, որոնք Ս. Գրոց Իտալյան կոչված թարգմանության համեմատ, Գործքի Բ գլխույն 9-րդ համարին մեջ հիշված «Հրէաստանի»-ին տեղ կկարդան «Հայաստանի»։

Կհիշե՞ս, հայորդի՛, թե Հովհաննու Ավետարանին ԺԲ գլխույն 20—22 համարներուն մեջ հիշված «հեթանոսք» ալ. որ ուզեցին Հիսուսը տեսնել, Փիլիպոս առաքյալի միջոցավ, ըստ ավանդության հայեր եղած են։

Այս ավանդությունները սիրուն են, գեղեցիկ են, և եթե արժեք մը ունին, այն ալ սա՛ է ըստ իս, թե հայք Ավետարանի դասերուն հետաքրքրված և հետևած են շատ կանուխ ժամանակներե ի վեր։ Ասիկա թանկագին վարկ մըն է Հայաստանյայց ժողովուրդին համար։

Մաղթենք, որ զորությամբ Ս. Հոգվույն, այդ վարկը այսուհետև ալ իր արժեքը բարձր պահե մեր Ազգին մեջ։

(«ԴԱՍԵՐ ԱՎԵՏԱՐԱՆԷՆ», Երկրորդ շարք, Անթիլիաս, 1936 թ.):




# ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### 1960 Թ. ԱՊՐԻԼ 22-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում գոհունակությամբ ծանոթացավ Վեհափառ Հայրապետի սիրո և միության սրբատառ նոր կոնդակի գրության՝ Անթիլիասի Աթոռի հետ բանակցություններ վերսկսելու համար, հօգուտ Սփյուռքի եկեղեցական միասնության վերականգնման և հայ կյանքի խաղաղության։*

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության շուրջ ստեղծված նոր կացությունը հանգամանորեն ուսումնասիրելու և Մայր Աթոռին ու Վեհափառ Հայրապետին մանրամասն ու ճշգրիտ զեկուցագիր ներկայացնելու համար, որոշեց հանուն Մայր Աթոռի պատվիրակություն ուղարկել Երուսաղեմ և Բեյրութ։ Պատվիրակությանը կգլխավորի Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։*

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում որոշեց հայտարարել փակ մրցանակաբաշխություն՝ Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի բարձրաքանդակների նախագծի պատրաստության մասին, որտեղ պատկերված կլինեն Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի կերպարները։*

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Մայր Աթոռի 1959 թվականի ամփոփ բյուջեի կատարողականի մասին զեկուցեց Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանը։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը, զեկուցումը ընդունելով ի գիտություն, հանձնարարեց Վերստուգիչ հանձնաժողովին ստուգել բոլոր ծախսերը ըստ հոդվածների և ներկայացնել Գերագույն Հոգևոր Խորհրդին։*

*Ապա նույն նիստում Մայր Աթոռի 1960 թվականի ամփոփ նախահաշվի մասին զեկուցեց նորից Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչը։*

*Հետ քննության, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց հաստատել 1960 թվականի ամփոփ նախահաշիվը՝ մի շարք դիտողություններով։*

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կազմվեց Մայր Աթոռի շրջափակում և նրանից դուրս կատարվող շինարարական աշխատանքները հսկելու համար հատուկ հանձնախումբ, որի կազմի մեջ ընտրվեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ա. Աղաջանյանը և Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Ե. Ալեքսանյանը։*

## 1960 Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Վեհափառ Հայրապետը հաղորդեց Ամերիկայի Միացյալ Նահանգները կատարելիք Իր ուղևորության մասին՝ ընդառաջելու համար ամերիկահայ թեմերի պաշտոնական, ջերմ հրավերներին։*

*Վեհափառ Հայրապետը, արտասահման կատարած Իր հովվապետական ուղևորության ընթացքում, կայցելի Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայ գաղութները։*

*Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին կընկերանան Վրաստանի հայոց թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը որպես գավազանակիր և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը։*

*Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետի այս հաղորդումը և այն գնահատեց որպես Հայ Եկեղեցու և Սփյուռքի հայ կյանքի խաղաղության, միասնության և համերաշխության ազնիվ նպատակով կատարվող հովվապետական առաքելություն։*

*ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ միևնույն նիստում որոշում ընդունեց մասնավոր կոչով դիմել Սփյուռքի ազգային-եկեղեցական մարմիններին, մշակութային հաստատություններին, մամուլին՝ Մայր Աթոռի թանգարանը հնագիտական, եկեղեցական արվեստի վերաբերյալ նոր ցուցանմուշներով հարստացնելու համար։*



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ»-Ը ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ՎՐԱ



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, առավոտյան ժամերգության վերջավորության, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում կատարեց Ավագ Ս. Սեղանի Աստվածամոր նորակերտ նկարի օծումը։

Մայր Մաշտոցում կա մասնավոր «Կանոն օրհնելոյ զպատկեր Սուրբ Աստուածածնին», ըստ որի «զերեն զպատկերն յեկեղեցին առաջի բեմին և լուանան նախ ջրով և ապա գինեաւ», սաղմոսների, շարականների, համապատասխան քարոզների և աղոթքների ընթերցմամբ։ Ապա կատարվում է նորակերտ նկարի օծումը, «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի պատկերս ամենօրհնեալ Ս. Աստուածածնի», որից հետո միայն, հրահանգում է Մայր Մաշտոցը, «դնեն զպատկերն ի բազմոցի՝ առաջի Սրբոյ Սեղանոյն»։ Այնուհետև երգվում են Ս. Աստվածածնին նվիրված ընտիր շարականներ՝ «ըստ պատշաճի նկարագրութեան պատկերին և խունկ ծխեն և երկրպագեն»։

Աստվածամոր նկարի հեղինակն է իտալահայ ծանոթ արվեստագետ նկարիչ Գրիգոր Շիլթյանը։ Արվեստագետը իր նոր ստեղծագործությունը անվանել է «Հայաստանի Տիրամայր»։

Նկարը, օծվելուց հետո, զետեղվեց Մայր Տաճարի նորակերտ մարմարյա Ավագ Ս. Սեղանի վրա՝ իր մասնավոր տեղը։

Վեհափառ Հայրապետը այս առթիվ հոգեկան խորունկ գոհունակությամբ օրհնելով նկարիչ Գրիգոր Շիլթյանին և նրա նոր ստեղծագործությունը, ապրիլ 20 թվակիր տրված օրհնության իր կոնդակում գրում էր, որ Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա դրված Աստվածամոր նոր նկարը «Մենք կնկատենք Ձեր սրտի պարգևը՝ մատուցված աստվածակառույց Ս. Էջմիածնին և հայ հավատացյալ ժողովուրդին»։

***

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Կրկնազատիկ և «յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և քարոզեց՝ ոգեկոչելով Ապրիլյան եղեռնի և համաշխարհային երկրորդ պատերազմի նահատակների խնկելի հիշատակը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ կատարվեց հոգեհանգիստ։

***

ՄԱՅԻՍԻ 1-ԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը, ծանրանալով Քրիստոսի հարության մեծ խորհրդի բարոյական նշանակության վրա։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի գլխավորությամբ, էքսկուրսիա կատարեցին դե-

պի Թյուրական և Արագածի լանջերին գըտնըվող այլ գյուղեր։ Էքսկուրսանտները այցելեցին պատմական Ամբերդը և եկեղեցին։ Ամբերդը կալվածն է եղել Վաչուտյան իշխանների։ Բերդը և եկեղեցին կառուցվել են Ժ դարում։

Ճեմարանականները երեկոյան Մայր Աթոռ վերադարձան լավագույն տպավորություններով։

* * *

ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «տօն երևման Ս. Խաչի»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

Պատարագիչ սրբազանը քարոզեց «Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս» բնաբանով. պատմականը տվեց Երևման խաչի դեպքին, ծանրանալով Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի Կոստանդ կայսեր գրած թղթի պատմական տվյալների վրա։

Սուրբ պատարագին ներկա էին Սիրիայից և Լիբանանից ժամանած ուխտավորները, որոնք հավարտ սուրբ պատարագի հաղորդվեցին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանում վերջացան 1959—1960 ուսումնական տարվա դասավանդությունները։

Ճեմարանի ուսանողությունը մինչև մայիսի 31-ը կպատրաստվի ամավերջի քննություններին, իսկ հունիսի 1-ից կսկսվեն բանավոր և գրավոր քննությունները։

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

*Մայիսի 20-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Հյուսիսային Ամերիկայի Հայոց ազգային-եկեղեցական իշխանությունների և թեմերի հրավերներին, մեկնեց արտասահման՝ հովվապետական այցելություն տալու նախ Հյուսիսային Ամերիկայի և ապա Հարավային Ամերիկայի հայ եկեղեցիներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին։*

*Առավոտ կանուխ Վեհափառ Հայրապետը իջավ Մայր Տաճար՝ աղոթելու միաբանության հետ՝ բարվոք և խաղաղ ուղևորության համար։ Մայր Տաճարում, հանուն միաբանության, Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթեց Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։*

*Վեհափառ Հայրապետը, հայրապետական Իր օրհնությունը տալուց հետո միաբանության, մեկնեց դեպի Երևանի օդանավակայանը։*

*Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Երևանի քահանայից դասը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը, Սիրիայից և Լիբանանից ժամանած ուխտավորները և հավատացյալների հոծ բազմությունը։*

*Վեհափառ Հայրապետին ողջերթ մաղթելու համար օդանավակայան էր եկել Վեհամայրը։*

*Վեհափառ Հայրապետին ճանապարհում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։*

*Ժամը 11-ին ինքնաթիռը անջատվեց երկրից և ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա։*

*Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և դիվանապետ պր. Հ. Առաքելյանը։*

*Բարի ճանապա՜րհ և սրտագին հաջողությո՜ւն սիրելի Վեհափառ Հայրապետին և ողջամբ վերադարձ Մայր Աթոռ և Հայրենիք։*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ԶՈՀՎԱԾ 24 ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՂԵՐԱԿԱՆ և ՏԽՈՒՐ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

*Բեյրութում ապրիլի 1-ին պատահեց ավտոմեքենայի մի սրտաճմլիկ և եղերական դեպք, որին զոհ գնացին Բեյրութի Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի ուսուցիչներից և աշակերտներից 24 երիտասարդ և խոստումնալից կյանքեր։*

*Շշմեցնող դեպքը խորունկ վիշտ պատճառեց Ամենայն Հայոց Հայրապետի սրտին, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության։*

*Ապրիլ 7 թվակիր հեռագրով, Վեհափառ Հայրապետը, ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի միջոցով, հետևյալ ցավակցական հեռագիրը ուղղեց Բեյրութ՝ հանձնելու համար Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի տնօրինության.*

«Մեծ վիշտ կպատճառէ Մեզ վարժարանիդ 24 աշակերտներու մահվան աղիտալի գույժը: Դառնօրեն կողբանք կորուստը անոնց մատաղ կյանքերուն և կաղօթենք Փրկչի Իրման Սեղանի առաջ անոնց արդար հոգիներուն համար և հոգվո մխիթարություն կհայցենք հարազատներուն:

Ձեզ և բոլորիդ աստվածային ողորմություն և օրհնություն»:

*Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ապրիլի 24-ին, Մայր Տաճարում, հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ ապրիլյան նոր զոհերի խնկելի հիշատակին։*

*13 մայիս թվակիր նամակով, Բեյրութի Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի տնօրեն պր. Հակոբ Պուճիգանյանը գրում էր Վեհափառ Հայրապետին հետևյալը.*

*«Վեհափառ Տե՛ր.*

*Վարժարանիս պաշտոնեության և աշակերտության, զայն հովանավորող եկեղեցվո և ժողովուրդին և ապրիլ 1-ի աղետյալներու ծնողներուն և լիբանանահայության համար մխիթարության իրական աղբյուր մը եղավ Ձեր ցավակցական հեռագիրը։ Որքա՜ն սփոփիչ էր մեզ համար գիտնալ, թե մեր պատվական Հայրապետին սիրտը կբաբախե ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր հայերուն համար անխտիր և թե Ձեր այնքան այլազան ու ծանր զբաղումներուն մեջ չեք մոռնար հեռավոր անկյան մը մեջ կսկծացող սրտերուն ցավը ամոքել։*

*Դժբախտաբար չենք կրնար անձամբ գալ ու մեր սրտագին շնորհակալությունները ծնկաչոք մատուցանել Ձերդ Վեհափառության և Ձեր հայրական օրհնությունները հայցել։ Սակայն միշտ երախտագետ սիրտ մը կպահենք Ձեզի հանդեպ ու հիացմունքով կհետևինք Ձեր բոլոր բարի, շինարար և խաղաղասիրական ջանքերուն։*

*Մեր ջերմագին մաղթանքն է, որ Տերը Ձեզի պարգևե երկար տարիներ, որպեսզի կարենաք հետզհետե մեր ազգային և եկեղեցական բոլոր տարակարծությունները փարատել ու Հայ Եկեղեցին պայծառացնելու։*

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճնագետ)

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԱՎՈՒՇԵՑԻ—ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՈՒԼՈՌՈՒՏ ԳՅՈՒՂԸ ՈՐՊԵՍ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ԿԵՆՏՐՈՆ

*Պատմությանը հայտնի են Հովհաննես Տավուշեցի անունով երկու վարդապետներ։ Նրանցից մեկն ապրել է ԺԲ դարում և եղել է ժամանակի նշանավոր գիտնական Մխիթար Գոշ վարդապետի ուսուցիչը, ինչպես այդ մասին տեղեկացնում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին. «Եւ հանդիպեցաւ Յովանէս վարդապետի Տաւուշեցի անուանեալ, որ ի ժամանակին յայնմիկ երևելի էր նա գիտութեամբ... Առ սմա կացեալ Մխիթար ամս յոլովս, ուսման Գրոց պարապեալ»[1]։*

*Մյուս Հովհաննես Տավուշեցի վարդապետը, որը մատենագրության մեջ հայտնի է Վանական մականունով, ապրել է ԺԲ դարի ութսունական թվականներից մինչև ԺԳ դարի կեսերը (ծնվել է 1181 թվականին և վախճանվել 1251-ին), եղել է նույն Մխիթար Գոշի արժանավոր աշակերտներից մեկը. «Թազումք էին որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս... Բայց երկու ոմանք ինոցանէ իմաստնագոյնք էին քան զայլսն որք կարող էին զայլս ուսուցանել, առաջնոյն Թորոս անուն՝ ի սահմանացն Միլտենւոյ Հայոց... Եւ երկրորդին Վանական անուն, այր սուրբ և պարկեշտ...»[2]։*

*Որոշ ուսումնասիրողներ թյուրիմացաբար նույնացնում են այդ երկու տարբեր անձնավորություններին։ Ստանալով վարդապետական կոչում, Վանականը թողնում է Նոր Գետկա վանքի դպրոցը և հիմնադրում Խորանաշատ վանքը, ուր և կազմակերպում է իր ինքնուրույն դպրոցը։ Խորանաշատ վանքը գտնվում է այժմյան Շամշադինի շրջանի Չինարի գյուղին մոտիկ, անտառի մեջ։ Վանքն իր Խորանաշատ անունը ստացել է այն բազմաթիվ խորան-խորշերից, որոնք համաչափ դասավորված են գլխավոր եկեղեցու արևելյան աբսիդի և գավթի արևմտյան պատի մեջ։*

*Որոշ բանասերներ վանքի կառուցումը դնում են 1191 թվականին։ Մինչդեռ վանքի վրա պահպանված շինարարական չորս արձանագրությունները կրում են 1211, 1216, 1220 և 1222 թվականները. ահա այդ արձանագրությունները հաջորդաբար.*

---

1 «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909 թ., էջ 195—196։

2 Նույն տեղում, էջ 205—206։

ՀԱՅԿ ՍՍՀ Գ.Ա. ՀԻՄՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի շրջանակի վերի շերտի վրա.

*«Մին խորան պատարագ մատչի Սերոբին ի տանի Սրբո Խաչին, զի դուռս նորա իրաւք շինեցաւ ի ՈԿ թվ.» (1211)։*

2. Նույն եկեղեցու արևելյան աբսիդի հյուսիսային կողմի խորանի մուտքի վերևում.

*«ՈԿԵ (1216) Ես Վարհամ Կանաչողկեցի և ամուսին իմ միաբանեցայ ի Խորանաշատոյ Աստուածածինս. ետու զծախս խորանիս և վարդապետն հաստատեց ինձ Բ ժամ ի տանի Սուրբ Գրիգորի՝ անխափան»։*

3. Նույն եկեղեցու արևելյան աբսիդի խորշերից մեկում.

*«ՈԿԹ (1220) Ես Աւեյդատ Ստրժեցի միաբանեցայ ի Խորանաշատոյ Սուրբ Աստուածածինս և ետու զծախս այսմ խորանիս՝ յիշատակ ծնողաց և եղբարց իմոց՝ Նաւուրին և Ապիրատին։ Եւ վարդապետն հաստատեց Բ ժամ յայսմ խորանիս—Ա ի տանի Վարդավարին և Ա Վարագա Խաչին՝ անխափան։ Հաստատ է կամաւն Աստուծոյ»։*

4. Գավթի հարավ-արևելյան անկյան խորանի մուտքի ճակատակալ քարի վրա.

*«Ես Սաւղոմոն միաբանեցա ի վանս Խորանաշատոյ և ետու զծախս շինութեան խորանիս. և վարդապետն հաստատեց Բ ժամ ի տանի առաքելոցն Պաւղոսի և Պետրոսի։ ՈՀԱ» (1222)։*

Վերը մեջ բերված արձանագրություններից որոշակի կերպով երևում է, որ 1220 թվականին դեռ ավարտված չէր եկեղեցու շինարարությունը, իսկ 1222 թվականին՝ նաև գավիթը։ Դրանից հետևում է, որ Խորանաշատ վանքի կառուցումը 1191 թվականին վերագրելը հակասում է գոյություն ունեցող պատմական փաստերին։ Անհավանական է նաև այն ենթադրությունը, ըստ որի վանքի կառուցումը պետք է սկսված լինի 1191 թվականին, որովհետև այդ ժամանակ Վանականը դեռ գտնվում էր Նոր Գետկա վանքում։ Վանականը Նոր Գետկա վանքից հեռացած պետք է լինի այն ժամանակ, երբ Մխիթար Գոշը կամովին հրաժարվում է վանքի առաջնորդությունից և այն հանձնարարում իր սիրելի սան Մարտիրոս վարդապետին. իսկ դա, ամենայն հավանականությամբ, տեղի պետք է ունեցած լինի 1209—1210 թվականներին։ Հենց այդ տարիներին էլ պետք է սկսված լինի Խորանաշատ վանքի շինարարությունը։ Այդ արձանագրություններից, ինչպես և տեղում կատարված ուսումնասիրություններից միաժամանակ պարզվում է, որ Վանականը, եկեղեցու կառուցումը դեռ չավարտած, սկսում է նաև գավթի շինարարությունը. «Անսէր նա շինուածս երևելիս, գաւիթ շինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր»[3]։

Խորեզմի շահ Ջալալեդդինը՝ Պարսկաստանից Դվին և Գանձակ քաղաքների վրայով դեպի Թբիլիսի կատարած իր արշավանքների ճանապարհին, 1225 թվականի վերջերին ասպատակում է նաև Խորանաշատ վանքը։ Վանականին հաջողվում է իր մի խումբ սաների հետ փախչել, իրենց հետ տանելով վանքի ձեռագիր գրքերն ու թանկարժեք սպասները։ Գալով Վանականի հայրենի գյուղը, նրանք Տավուշ ամրոցի հարավային կողմում, Ոլորուտ գյուղի դիմաց, ժայռի մեջ փորում են այր, որի մեջ նաև եկեղեցի և շարունակում ուսուցումը։ Իսկ երբ ունկնդիրների թիվը շատանում է և այրը բոլորին չի տեղավորում, նրանք իջնում են քարափի ստորոտը, ուր կառուցում են իրենց համար բնակելի շենքեր և եկեղեցի.

«Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մեծ վարդապետն, որ կոչի Վանական, իւրովք աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս ի կատարս բարձրագոյն քարի միոյ, որ կայ հանդէպ գեղջն՝ որ Ոլորուտն կոչի, ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. և շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դադարէր գաղթութեամբ. իբրև աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Նորգեվանից, ի Ջալալադին Սուլթանէն. և անդ կայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածասէր. և բազումք գային առ նա, և ուսանէին զբանս վարդապետական ի նմանէ։ Եւ իբրև շատացան մարդիկն, հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադարեալ էր»[4]։

Հնագիտական և տեղագրական հետազոտություններից պարզվել է, որ Տավուշ գետը՝ հյուսիսային ուղղությամբ, դուրս գալով բարձր լեռնային տեղանքից, մի մեծ ոլորապտույտ է գործում՝ շեշտակի կերպով թեքվելով դեպի արևմուտք։ Ոլորապտույտի վերջում և դեպի արևմուտք թեքվող մասում գետի հունը խիստ նեղանում է՝ կիրճի ձևով,

3 Կիրակոս Գանձակեցի, էջ 333։

4 Նույն տեղում, էջ 280։

ուր երկու ափերից ուղղաձիգ ձևով վեր են ձգվում բարձր քարափներ։ Աջ կողմի քարափի գագաթին նկատելի են Հայաստանի երբեմնի նշանավոր ամրոցներից մեկի՝ Տավուշ բերդի ավերակները, իսկ բարձունքի առջևի ընդարձակ սարահարթի վրա պահպանվել են Վանական վարդապետի ծննդավայրը հանդիսացող Տավուշ ավանի հազիվ նկատելի հետքերը։

Գետի ձախ քարափի հակադիր կողմը նույնպես ժայռոտ է, ուր նկատելի են առանձին քարայրների մնացորդներ. քարափը



ՏԱՎՈՒՇ ԳԵՏԻ ԿԻՐՃԸ ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԻ ՄՈՏ,
ԴԻՄԱՑԻՑ՝ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԸ։

աստիճանաբար փլվելով, քանդել է նաև եղած քարայրները։ Այդ քարափի առջևում, գետի մեծ ոլորապտույտի մեջ, ընդարձակ սարահարթի վրա մինչև այսօր էլ պահպանվել են մեծ բնակավայրի բազմաթիվ շենքերի հետքերը՝ դար ու փոսերի ձևով։ Կիրակոս Գանձակեցու վերը մեջ բերված նկարագրությունը ճշտիվ համապատասխանում է այդ վայրին, ուստի անկասկած է, որ Վանական վարդապետը հենց այդ վերջին քարափի մեջ պետք է փորած լինի իր քարայր-եկեղեցին. իսկ դրա առջևում, սարահարթի վրա եղած բնակավայրի մնացորդները պատկանելիս պետք է լինեն Ոլորուտ գյուղին։ Շատ հավանական է, որ գյուղն իր Ոլորուտ անունը ստացած լինի գետի այդ ոլորապտույտից։ Դժբախտաբար, առանց հնագիտական պեղումների, հնարավոր չէ ճշտիվ որոշել, թե որո՞նք են այն եկեղեցու և բնակարանների շենքերի մնացորդները, որոնք Վանականը կառուցեց քարափի ստորոտում, գյուղի եզրին։

Վանական վարդապետի՝ Ոլորուտ գյուղի մոտ եղած այդ դպրոցը երկար գոյություն չի ունենում՝ վրա հասնող մոնղոլական արշավանքների հետևանքով։ Խորանաշատ վանքի Ջալալեդդինի զորքերի կողմից ասպատակումից մեկ տասնամյակ հետո, 1235 թվականին, մոնղոլական հսկա բանակը Մուղանի դաշտից շարժվում է Աղվանքի, Հայաստանի և Վրաստանի վրա։ Այդ զորաբանակի մի զորախումբ, Մոլար Նուինի գլխավորությամբ, Շամքոր քաղաքի վրայով առաջ է շարժվում Տավուշ գետի վրայով։ Այդ զորախմբի զորամասերից մեկը 1236 թվականի ամռան սկզբներին գրավում

է Տավուշ ամրոցը։ Վանականը իր աշակերտների հետ, ինչպես և գյուղի բնակչության մի մասը, փախչում և ապաստանում են քարափի այրում։ Մոնղոլական զորքը երեք օր քարափը պաշարելուց հետո գերի է վերցնում բոլորին։

Կիրակոս Գանձակեցին, որը մասնակից է լինում այդ անց ու դարձերին, որովհետև այդ ժամանակ նա նույնպես թողել էր Գոշավանքը և եկել էր աշակերտելու Վանականին, հետևյալ կերպ է նկարագրում այդ անցքերը.

«Իբրև եղև այս կործանումն աշխարհի ի յայրի անդ, անկանէին առ ոտս վարդապետին, աղաչէին զնա և ասէին. «Գնեա զաբիւն մեր ամենեցուն, և էջ առ նոսա. և արա սէր ընդ նոսա»[1]։

Այնուհետև Գանձակեցին մանրամասն նկարագրում է Վանականի կողմից գլխավորած պատգամավորության հանդիպումը մոնղոլ հրամանատարի հետ, բանակցությունները նրա հետ, իրենց անձնատուր լինելը, կողոպտվելը և գերի տարվելը։ Առանձնապես ուշագրավ են Գանձակեցու տեղեկությունները գերեվարության ընթացքում



ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

Թաթարէն, և եկն Մօլար Նուինն յայն սահման, բնակիչք գեղջիցն այնոցիկ յայր անդ փմեցին, և լցաւ արամբք և կանամբք և մանկտօք. և եկեալ թաթարն պաշարեաց նոսա յայրի անդ. և նոքա համբարս ոչ ունէին և ոչ ջուր. և էր եղանակն ամառնային, էր տօթ յոյժ. և սկսան տապիլ յարգելանի նդ՝ իբր ի բանտի. և մանկունքն պապաէին ի ծարաւոյ, և մերձ էին ի մեռանել. և շնամիքն ձայնէին արտաքուստ, թէ ընդ ր մեռանիք. ելէք առ մեզ, և տացուք ձեզ րակացուս, և թողցուք զձեզ ի տեղւոջն րում. և կրկնէին երդմամբ։ Ապա որք էին

իրենց կրած անսպասելի տառապանքների, վշտերի ու զրկանքների մասին։

Գերիների այդ տանջանքներն ու տառապանքներն ավելի են սաստկանում, երբ վրա են հասնում աշնանային ցուրտ եղանակները։ Նրանց համակում է ահն ու սարսափը, մանավանդ երբ իմանում են, որ գերիներին քշելու են հեռու՝ օտար երկրներ։ Ուստի միաձայն որոշում են, ինչ գնով էլ լինի, թեկուզ իրենց կյանքը վտանգի ենթարկելով՝ փախչել ով ուր կարող է։ Իսկ

[1] Կիրակոս Գանձակեցի. էջ 290—291։

պատահում էր, որ ոմանց չէր հաջողվում փախչել-ազատվել, այդպիսիներին բռնում, բերում էին բանակը և բոլորի ներկայությամբ տանջամահ անում՝ գերիներին ահաբեկելու նպատակով։

Այնուհետև շարունակելով առաջ շարժումը, այդ զորամասը հասնում է Գագա բերդին և միանում իր զորախմբին, որին ղեկավարում էր վերը հիշատակված Մոլար նուինը։ Չնայած Վանականի բազմիցս խնդրանքներին ու թախանձանքներին՝ ազատ արձակելու իրենց, միշտ մերժում էին ստանում մոնղոլ զորավարի կողմից։ Միայն Գագա դաշտի բնակիչների կողմից ութսուն ոսկի փրկագին վճարելուց հետո հաջողվում է ազատել Վանականին. իսկ Կիրակոս Գանձակեցուն հրաժարվում են, թեկուզ որևէ պայմանով, ազատել։ Բայց այդ նույն գիշեր հաջողվում է փախչել նաև իրեն՝ Գանձակեցուն, և նա գալիս նորից ապաստանում է Նոր Գետկա կամ Գոշա վանքում.

«Եվ խնամօքն Աստուծոյ պատահեաց մեզ ի նմին գիշերի գաղտնագնաց լինել ի նոցանէ և գերծանիլ. և եկաք ի տեղի սննդեան մերոյ ի վանքն՝ որ կոչի Գետիկ, և նա աւերեալ էր ի նոցանէ, և այրեալ շինուածքն որ ի նմա, և անդ դադարեցաք»[6]։

Թէ ե՞րբ է Կիրակոս Գանձակեցին թողել Նոր Գետիկ վանքը և գնացել աշակերտելու Վանական վարդապետին, ստույգ հայտնի չէ։ Գանձակեցու այն վկայությունը, թե «բազում ժամանակս կացաք առ նա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ յանապատի անդ՝ զոր ստացաւ ի բնակութիւն» (էջ 206), ցույց է տալիս, որ նա թողել է Գետիկ վանքը և Վանականի մոտ է եկել այն ժամանակ, երբ նա Ոլորուտ գյուղի մոտ եղած իր նոր հիմնած անապատումն էր, այսինքն 1225 թվականից հետո։

Վանականի և իր աշակերտների՝ մոնղոլների մոտ գերի լինելու ժամանակը տևում է մի քանի ամիս, 1236 թվականի ամռան սկզբներից. «զի ի տօնի Վարդավառին արգելին զմեզ» (էջ 231), մինչև աշնան վերջերը։ Ոլորուտ գյուղից կամ Տավուշ ամրոցից մինչև Գագա դաշտն ու Գագա բերդը, ինչպես հարկ է ենթադրել, ճանապարհը պետք է անցած լինի Կապտավանքի (Շամշադինի շրջանի Չինչին գյուղի մոտ), Երխմուրատի վանքի (նույն շրջանի Վելիգեղ, այժմ Ծաղկավան գյուղի մոտ) և Մորո-Ձորո կամ Ծովիգի վանքի (Իջևանի շրջանի Ծովիգ գյուղի մոտ) վրայով։ Այդտեղից նրանց գնացած ճանապարհը իջել է Աղստև գետի հովիտը և անցնելով գետը, դուրս է եկել՝ միջազգային տարանցիկ առևտրի, Դվին քաղաքից դեպի Թբիլիսի քաղաքը տանող ուղեգիծը։ Ապա այդ ուղեգծով քիչ առաջ ընթանալուց հետո, այժմյան Իջևանի շրջանի Ձողազ գյուղի մոտ անցել է Ոսկեպար գետը և դուրս եկել Գագա դաշտը, որի, համարյա կենտրոնում բարձրացող Ս. Սարգիս լեռան գագաթին գտնվում է Գագա բերդը։

Որ գերիները մինչև Գագա բերդը հասնելը անցել են վանքերի վրայով, այդ պարզ երևում է Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունից.

«... և տարան զմեզ ի փոքրագոյն աղբիւր մի, որ կայր ի մէջ վանիցն, և ետուն մեզ ջուր, զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս, և ապա տարան արկին զմեզ ի տեղի ինչ յարգելանի և աշխարհականս ի գաւիթս եկեղեցւոյն. և ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերին. զի ընդ երեկոյ էր օրն, և ի վաղիւ անդր հանին զմեզ ի գլուխ վանիցն ի բարձրավանդակ տեղի ինչ, և խուզեալ առին որ ինչ կայր առ ումեք, որ պիտոյ էր նոցա. և որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք եկեղեցւոյն կամ շուրջառ, կամ այլ անօթ ինչ, կամ խաչ արծաթի...»[7]։

Գանձակեցու այդ վկայությունից որոշակի կերպով իմացվում է, որ նրանք դուրս գալով Ոլորուտ գյուղի մոտ գտնվող բարձր քարայրից, ուր երեք օր շարունակ քաղցած ու ծարավ մնացել էին պաշարված վիճակում, նույն օրը երեկոյան հասնում են այդ վանքին։

Ինչպես պարզում են հնագիտական հետազոտությունները, Տավուշ ամրոցից դեպի Գագա բերդ՝ այդ ուղղությամբ ուրիշ վանք գոյություն չունի, բացի Կապտավանքից, որ հնարավոր լիներ մեկ օրում հետիոտն, մանավանդ գերեվարության պայմաններում հասնել դրան։ Բացի դրանից, Գանձակեցու նկարագրությունը ճշտիվ համապատասխանում է Կապտավանքին՝ ինչպես աղբյուրը, վանքից վերև գտնվող բարձունքը, որն այժմ կոչվում է «Խաղանքար», որտեղ խուզարկում են գերիներին, հափշտակելով նրանց ողջ ունեցվածքը։

Ազատվելով գերությունից, Վանականը վերադառնում է իր հիմնադրած Խորանաշատ վանքը և շարունակում իր ուսումնադաստիարակչական գործը։ Վանականը եղել է ժամանակի ամենաուսյալ և բանիմաց անձնավորություններից մեկը՝ օժտված մարդկային վսեմ հատկություններով։ Նրա մոտ են ուսել ժամանակի նշանավոր հայ

6 Նույն տեղում, էջ 289։

7 Նույն տեղում, էջ 283—284։

պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրբերդցին, Մաղաքիա աբեղան և շատ ուրիշներ։

Կիրակոս Գանձակեցին մեծ գովեստով է խոսում իր արժանավոր ուսուցչի և վարդապետի մասին։ Թվելով հոգևոր, իմացական և մարդկային այն վսեմ հատկությունները, որոնցով օժտված էր նա և որը կարող էր օրինակ ծառայել յուրաքանչյուր մարդու և հոգևորականի համար.

«Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Վանական,... այր սուրբ և պարկեշտ, և յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի, և վարդապետական բանիւ քան զամենեսին՝ որ ի ժամանակին էին գերազանցեալ, ծննդական մտօք և յարմար բանիւք։ Վասն որոյ դեգերէին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն։ Եւ զայս ոչ թէ միայն ականջալուր ասեմ, այլ և ականատես իսկ եմ, զի բազում ժամանակս կացաք առ նա ի վարժս կրթութեան...»[8]։

Վանական վարդապետը վախճանվում է 1251 թվականի մարտի 18-ին, շաբաթ օրը և թաղվում իր կառուցած վանքում. «Եւ տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն յարևելից կուսէ, մօտ ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանք աղքատացն. զի ինքն այսպէս հրամայեաց»[9]։ Նրա անշուք գերեզմանը մինչև այսօր էլ պահպանվում է վանքի արևելյան կողմի փոքր գերեզմանոցում և ծառայում է որպես ուխտատեղի հավատացյալ ազգաբնակչության համար։

---

8 Նույն տեղում, էջ 206։

9 Նույն տեղում, էջ 334։

Մ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

# ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԵԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## (ԾՆՆԴՅԱՆ 120 Ե ՄԱՀՎԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

*Տասնիններորդ դարի երկրորդ կեսի հայ մանկավարժության ականավոր ներկայացուցիչներից է Խորեն եպիսկոպոս Ստեփանեն։ Նա հայտնի է որպես արևելահայերի իգական դպրոցների կազմակերպիչ, «Հայկական աշխարհ» հասարակական-մանկավարժական թերթի և «Մանկավարժանոց» ժողովրդական ամսագրի անվանի խմբագիր, մանկավարժական առաջավոր գաղափարների կրքոտ պրոպագանդիստ, գրական-հասարակական անխոնջ գործիչ, խոսքի վարպետ և հայտնի քարոզիչ։ Նա իր 40-ամյա բեղմնավոր գործունեության ընթացքում պահպանողականներից և ցարական կառավարությունից հալածանքների է ենթարկվել, երկար տարիներ տառապել է աքսորավայրերում, բայց միշտ էլ հավատարիմ է մնացել իր ժողովրդին անձնվիրաբար ծառայելու վեհ գործին։*

*Խորեն եպիսկոպոս Ստեփանեն իր ժամանակի առաջավոր մանկավարժության գաղափարները տարածել է ինչպես մամուլի, այնպես և գործնականորեն՝ դպրոցների միջոցով։*

*Խորեն եպիսկոպոսը բարենորոգչական մեծ աշխատանք է կատարել հայ դպրոցի պատմության մեջ։ Նա մի կողմից խիստ քննադատում էր գոյություն ունեցող դպրոցների վիճակը, մյուս կողմից, օգտագործելով ռուսական և եվրոպական առաջավոր մանկավարժների լավագույն աշխատությունները և նրանց ուսանելի փորձի դրական կողմերը, նրանցից կատարած թարգմանական և իր գրած ինքնուրույն հոդվածներով, ծանոթացնում էր հայ ուսուցիչներին, թե ինչ է պահանջվում ժողովրդական դպրոցից։*

*Դեպի մատաղ սերունդը անսահման սեր ունեցող, «գիտության լուսո ավետաբեր վարդապետ» Ստեփանեն «իր կրակոտությամբ դառն է եղել, բայց և անչափ քաղցր»։ Այդ է վկայում իր պաշտոնակիցների և մանավանդ աշակերտների կողմից մեծարվելը։*

*Էջմիածնի Գևորգյան ճեմարանի նախկին ուսուցիչ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրյանը 1889 թվականին գրում է. «Ուրիշն յուր փառաց աթոռի վերա գուցե այնչափ աշխարհի աչքի առաջ չէ և մեծարանք չի վայելում, որչափ Դուք Ձեր անհայտության մեջ և մեկուսացած կյանքումս»։*

*Նրա աշակերտներից Ղ. Հովսեփյանը 1892 թվականին Մոսկվայից գրում է. «Ձեր ազգօգուտ արդյունավոր գործունեության ընտիր պտուղներն են Ձեր բազմաթիվ սաները, ո-*

րոնց մեջ սերմանել են ազնիվն ու բարին, բարձրն ու վսեմը, գեղեցիկն ու գաղափարականը»[1]։

Աշակերտների գրած մի այլ նամակում ասվում է. «...Կգա ժամանակ, երբ անաչառ քննադատը և սառնարյուն պատմաբանը անժխտելի փաստերով կապացուցեն, որ իսկական գործիչները և լուսավորության տարածման սկզբնապատճառ եղողները ովքե՞ր են»։

1896 թվականին գրված նամակներից մեկում էլ ասվում է, որ «այսօրվա կենդանության և մտավոր առաջադիմության հիմքը ձգել է» Խորեն վարդապետ Ստեփանեն, որովհետև եթե նա «մեծամեծ դժվարություններով 1869 թվականին Թբիլիսիում չբանար օրիորդաց Մարիամյան դպրոցը, մենք այնքան բազմաթիվ հոյակապ օրիորդական դպրոցներ չէինք ունենա»։ Այդ նույնը դեռևս 1875 թվականին պնդում էր «Մշակ» թերթը (№ 38)։

Եվ ահա այս հայրենասերը «ընտրեց հոգևորական ասպարեզը, համոզված լինելով, թե այդպես ավելի օգտակար կլինի իր ազգին։ ...Նա իր բազմաշարչար կյանքով չկարողացավ այնպես օգտակար լինել, ինչպես ինքն էր ցանկանում, բայց ապագա սերունդները անշուշտ ցույց կտան, որ Խորեն եպիսկոպոս Ստեփանեն ուներ անսահման հավատ, որ մի օր ճշմարտությունը պետք է հաղթանակե, և արժանավոր համեստ մշակը իր վարձը և հատուցումը ստանա պատմության գնահատման մեջ»,— գրում է «Մշակ» թերթը 1900 թվականին նրա մահվան առթիվ։

Իսկապես, մանկանվեր Խորեն եպիսկոպոս Ստեփանեն, որպես դպրոցական անդուլ գործիչ և բեղմնավոր մանկավարժ-հրապարակախոս, մեծ հաջողությամբ և անձնվիրաբար է կատարել իր պարտքը հայ ժողովրդի հանդեպ, ուստի նա իր պատշաճ տեղը պիտի գրավի հայ մանկավարժության պատմության մեջ։

Հենց այդ նպատակով ներկա հոդվածով մեր առջև խնդիր ենք դնում, դիվանային չհրապարակված վավերագրերի ուսումնասիրության հիման վրա, իսկական գնահատական տալ Խորեն եպիսկոպոս Ստեփանեի մանկավարժական գործունեությանը։

[1] Այն բոլոր քաղվածքները, որոնց աղբյուրները չեն նշված, բերված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում պահվող՝ Բ. Նավասարդյանի Դիվանի № 504, 509ե, 509գ, 510, 521, 526ա, 526բ, 526գ, 533ը, 534ա, 550, 552, 554ա, 562բ, 563, 568դ, 568ե, 584, 599բ, 630, 657 և այլ վավերագրերից։

Ստեփան (այդպես էր նրա անունը մինչև հոգևորական դառնալը) Ստեփանեն (մինչև համալսարան ավարտելը ազգանունը եղել է Ստեփանյան) ծնվել է 1840 թվականին Թբիլիսիում։ Նա սկզբում երեք տարի սովորում է իր ծննդավայրի Ներսիսյան հոգևոր միջնակարգ դպրոցում, իսկ հետո՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որի դասարանական բաժինն ավարտում է 1858 թվականին։ Նույն թվականին նա ընդունվում է Մոսկվայի համալսարանը, որի պատմա-լեզվաբանական ֆակուլտետն ավարտում է 1862 թվականին՝ «համալսարանի թեկնածու» կոչումով։ Մոսկվայի հայ ուսանողական շրջանը շատ մեծ ազդեցություն է ունենում Ստեփանեի վրա։ Ամեն շաբաթ երեկո հայ ուսանողները ունենում էին հավաքույթ, որ կոչվում էր «Ժողով»։

Այդտեղ բոլոր ուսանողները միայն հայերեն լեզվով էին խոսում, որևէ գիտական կամ ազգային հարց քննարկում, կարդում էին իրենց ինքնուրույն ստեղծագործությունները, գիտական զեկուցումները, ռուսերենից կատարած թարգմանությունները, կազմակերպում էին թատերական ներկայացումներ, զբաղվում նաև ուսանողական կենցաղի հարցերով («Արարատ», Էջմիածին, 1916, էջ 717)։

Ստեփանեի ուսանողության տարիներին «Ժողով»-ի գործունյա անդամներից էին Ն. Ալադաթյանը, Գ. Հեչուրյանը, Ռ. Ջալալյանը, Մ. Սիմոնյանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ, որոնք հետագայում հայտնի դարձան որպես դպրոցական գործիչներ Թբիլիսիում, Երևանում, Լենինականում, Ագուլիսում։ Դրանք հանդիսանում էին Ստ. Նազարյանի անմիջական շրջապատողները և նրա խմբագրած «Հյուսիսափայլ» ամսագրի աշխատակիցները։ Ստեփանեն իր թղթակցությունների տակ ստորագրում էր Ս. Ստեփանյան, Ստուգենտ Ս. Ս., իսկ բանաստեղծությունների տակ՝ Իշխան Բագրատունի («Աղքատ աղջիկը», 1860 թվականին)։

Ալադաթյանը Հեչուրյանի հետ Մոսկվայում լույս է ընծայում մի մանկական ժողովածու, իսկ մենակ՝ «Վա՜յ իմ կորած հիսուն ոսկին» կատակերգությունը, որ 1859 թվականին Մոսկվայում բեմադրում են Ստեփանեն և իր հայ ուսանող ընկերները։

Ստեփանեն 1862 թվականին վերադառնում է Թբիլիսի և մինչև 1868 թվականը պատմության դասատու է լինում տեղի մի շարք պետական դպրոցներում՝ արական գիմնազիայում, Ս. Նունեի իգական ինստիտուտում, ռազմական ուսումնարանում։ Ստեփանեն, գիմնազիայի վերատեսչի առաջարկությամբ, 1865 թվականին ռուսերեն

լեզվով գրում և հանձնում է նրանց «Հայոց համառոտ պատմությունը», որը պիտի ծառայեր որպես ձեռնարկ գիմնազիայի հայ աշակերտների համար[2]։

1868 թվականին Ստեփանեն հեռացվում է պետական պաշտոններից որպես «անբարեպետական պաշտոններից որպես «տերության հակառակ և ըմբոստ մարդ», ինչպես այդ մասին հայտնել է Կովկասյան փոխարքայի դիվանապետ Նիկոլային[3]։

Այդ ժամանակամիջոցում նա իր տանը ունենում է փոքրիկ գիշերօթիկ դպրոց «կրկնողական դասեր աշակերտների համար», և կարճ ժամանակ ուսուցիչ է լինում նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։

1868 թվականի սկզբին Ստեփանեն ձրի դասեր է տալիս Թիֆլիսի հայկական առաջին իգական դպրոցում, որը Պ. Պռոշյանի օժանդակությամբ 1863 թվականին հիմնել էր Ս. Ջմշկյանը։ Վերջինիս հետ որոշ տարաձայնության պատճառով նա հեռանում է դպրոցից և նույն թվականի վերջում Նորաշենի եկեղեցու բակում հիմնում է Մարիամյան իգական դպրոցը, իսկ 1869 թվականին էլ՝ Հավլաբարում առաջին երկսեռ դպրոց, որոնց տեսուչն է լինում ինքը մինչև 1871 թվականը։ Այդ դպրոցներում ձրիաբար պարապում են Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններն ավարտած Ն. Ալադաթյանը, Զ. Գրիգորյանը, Մ. Սալամբեկյանը և ուրիշներ, որոնք դասավանդում էին կրոն, հայոց լեզու, հայոց պատմություն, ռուսաց լեզու, ֆրանսերեն, թվաբանություն, երգեցողություն, հայոց և ռուսաց վայելչագրություն, ձեռագործ, մարմնամարզություն։

Ստեփանեի հիմնած այդ դպրոցներն ընդունվում էին նաև 4—7 տարեկան երեխաներ, որոնց հետ ունենում էին նախադպրոցական պարապմունքներ՝ երգ, խաղ, ձեռարվեստ, նկարչություն, խոսել։

1864 թվականի նոյեմբերից Ստեփանեն Թիֆլիսում սկսում է խմբագրել և հրատարակել «Հայկական աշխարհ» խորագրով մի նոր ամսագիր, որի նշանաբանն էր հայկական կյանքի վերաբերմամբ՝ «քննադատել, խայտառակել նախապաշարմունքները, քանդել հին կուռքերը»։ Նա, որպես առաջադեմ լրագրողի, իր ամսագրի էջերը բաց արեց ոչ թե ժամանակի «հայ գիտուններին», այլ նոր, թարմ, առաջադեմ ձգտումներով տոգորված երիտասարդների առաջ, որոնք գլխավորապես պատկանում էին «Հյուսիսափայլ»-ի ուղղությանը։ Ստեփանեն լի հավատով դիմում էր երիտասարդներին հետևյալ կոչով. «Ձեզանով, միշտ ձեզանով հայկական ազնիվ ու խելացի երիտասարդնե՛ր։ Ձեզանից մեզ տված թևերով պիտի կարողանանք առաջ տանել մեր գործը»։

Եվ նա չէր սխալվում։

Ստեփանեն, որպես խմբագիր, իր շուրջը համախմբեց ուսանող երիտասարդներին (Գ. Արծրունի, Զ. Գրիգորյան, Հ. Թուսիկյան և այլն), որոնց արժեքավոր հոդվածները և թարգմանությունները տպագրվում էին նրա հանդեսում։

Խմբագիրը շատ չէր խոստանում և քիչ կատարում, ինչպես անում էին շատերը։ Նա հետևում էր իր ամսագրի ճակատին դրած համեստ նշանաբանին. «Ինչ կարող եմ, կատարում եմ, թող կատարե առավել լավ, ով կարող է»։ Բայց Ստեփանեն իսկապես հրապարակային գործ կատարեց։ Նրա խմբագրած «Հայկական աշխարհ»-ը հիմնականում մանկավարժական ամսագիր էր, որն իրեն նպատակ էր դրել դպրոցների առաջադիմությանը և մանուկների կրթությանը նպաստել։ Նա բազմաթիվ ինքնուրույն հոդվածներ և թարգմանություններ էր տալիս դաստիարակության, դպրոցների անելիքների, մասնավորապես իգական դպրոցների և հայ մայրերի կրթության մասին։ Այդ թարգմանությունները մեծ մասամբ կատարվում էին Դոբրոլյուբովից, Պիսարևից, Բելինսկուց, ռուսական մանկավարժական ամսագրերից։

Ստեփանեն գտնում էր, որ «հայերեն կարդացող հասարակություն պատրաստելու համար անհրաժեշտ է, որ շատ դպրոցներ ունենանք, մանավանդ օրիորդաց դպրոցներ, որովհետև մի աղջիկ կրթելով վերջ ի վերջո համարյա մի ամբողջ ընտանիք կունենանք կրթված։ Հետևապես օրիորդաց դպրոցներ պետք է շատ բաց անել»։

1871 թվականի հունիսին Ստեփանեն գնում է էջմիածին և դառնում հոգևորական, «ոչ թե վանական և խցի վարդապետ,—ինչպես գրում է նրան իր նամակում Խրիմյան Հայրիկը,—այլ ժողովրդի վարդապետ լինելու համար, ավելի ևս անձնվիրաբար հայոց աշխարհի և նրա մանուկների առաջադիմության, ժողովրդին լույս տալու համար»։

Եվ այդպես էլ լինում է։ Նա հենց առաջին տարվանից էջմիածնում իրեն նվիրում է դպրոցին, մատաղ սերնդի կրթության գործին։

Բնական է, որ էջմիածնի վանական («ժառանգավորաց») դպրոցում և Վաղարշապատի նորաբաց ծխական տարրական դպրոցում լոկ դասատուական աշխատանքը չէր կարող բավարարել Մոսկվայի համալսարա-

---

2 Ծանուցմունք խմբագրության («Հայկական աշխարհ» ամսագիր, Թիֆլիս, 1865, էջ 387—388)։

3 Վահան վարդապետ Բաստամյան, «Տարեգրություն» (անտիպ), էջ 429։

նի թեկնածուին։ Մեկ տարուց հետո, 1872 թվականի հունիսին, Խորեն վարդապետ Ստեփանեն գնում է Երևան՝ որպես թեմական հոգևոր և ծխական դպրոցների «կառավարիչ-վերատեսուչ»։

Երևանում այդ ժամանակ հայկական դըպրոցները գտնվում էին քայքայման վիճակում. կային միայն մի քանի միամյա ծխական դպրոցներ և թեմական հոգևոր դպրոց, որտեղ մնացել էին շատ քիչ աշակերտներ և գտնվում էր փակման վտանգի առաջ։

Եվ ահա խանդավառ տեսուչը ամենից առաջ կազմակերպում է մանկավարժական ժողով, որ մինչ այդ գոյություն չուներ այդ դպրոցում, և նրա միջոցով մշակում է այնտեղ դասավանդվող առարկաների ծրագրեր։ Նա ստեղծում է երգեցիկ խումբ, կազմակերպում է շքեղ երեկույթներ, որպիսի բան Երևանը չէր տեսել և չի տեսնում մինչև 1883 թվականը, երբ իբրև տեսչուհի Գայանյան իգական դպրոցում աշխատում էր Գայանե Հովհաննիսյանը («Պսակ», 1883, № 1)։

Հոկտեմբերի 1-ին Խորեն վարդապետը գումարում է հասարակական երկրորդ ժողովը, որտեղ ծխականները իրենց նոր գործունյա տեսչի հաջողություններով ոգևորված (արդեն դպրոց էին հաճախում 115 աշակերտ), հօգուտ դպրոցի ստորագրություն են տալիս 4000 ռուբլու, որը մի քանի օրից հետո քաղաքում հասցնում են 8 000 ռուբլու։

Տարեվերջին դպրոցի նորընտիր հոգաբարձությունը Խորեն վարդապետ Ստեփանեի «Երևանում դպրոցական գործունեության մեջ դաստիարակչական պաշտոնում հաջողություններ ունենալու համար» շնորհակալություն է հայտնում Սինոդին, որի պատճառով Գևորգ Դ կաթողիկոսը անձնվեր տեսչին պարգևատրում է ծաղկյա փիլոնով։

Սակայն Խորեն վարդապետ Ստեփանեն հնարավորություն չի ունենում զարգացնելու իր սկսած դպրոցական շարժումը, որովհետև չկարողանալով տանել Երևանի կլիմայական պայմանները. մի տարուց հետո, 1873 թվականին փոխադրվում է Շուշի, որպես Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տեսուչ և ռուսաց լեզվի դասատու։

Այստեղ ևս Խորեն վարդապետ Ստեփանեն կարճ ժամանակում բարեկարգեց թեմական դպրոցը, ինչպես և «մեռած օրիորդաց դըպրոցը կենդանացրեց, մտցրեց աշակերտական միակերպ հագուստ, ուսուցիչներին տվեց պրոգրամ» («Մշակ», 1873, № 41)։

Խորեն վարդապետը 1876 թվականի վերջերին փոխադրվում է Թիֆլիս, որտեղ մի քանի ամիս մնալով, տեսչություն է անում իր. հիմնած Մարիամյան դպրոցում, ամեն կերպ բարելավում է նրա վիճակը, կարգ ու կանոն է մտցնում, նյութական միջոցները հարստացնում, աշակերտների թիվը շատացնում և ծնողներին կապում դպրոցի հետ։

1877 թվականին Բաքվի Մարդասիրական ընկերությունից և հասարակությունից հրավեր ստանալով, Խորեն վարդապետը գնում է այնտեղ՝ երկսեռ դպրոցների վերատեսչի պաշտոնով։

Այդ ժամանակ Բաքվի Մեսրոպյան երկսեռ դպրոցը գտնվում էր ողբալի վիճակում և Մարդասիրական ընկերությունը նույնիսկ մտածում էր փակել այն. նրա տեսուչն էր նույն ծխական դպրոցն ավարտած Ավագ Գրիգորյանը։

«Խորեն վարդապետը ամեն կերպ աշխատում էր մինչև նոր տարին ուսումնարանի մեջ մի նկատելի առաջադիմություն մտցնել և դրանով գրավելով ժողովրդի սիրտը՝ կործանել այն անտարբերությունը, որ նա ցույց էր տվել մինչև իր գալը դեպի այդ ուսումնարանը։ Նա անխոնջ աշխատում էր օր ու գիշեր և կարողացավ Ծննդյան տոնին այնպիսի երգեցիկ խումբ ունենալ և փառահեղ հանդես կազմակերպել երեխաների երգով, արտասանությունով, բեմադրությունով թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն, որ բոլորը հիացան և անմիջապես ժողովարարություն կազմակերպվեց և հավաքվեց 7 000 ռուբլի.... Նա ձրի էր տանում թե՛ այդ դպրոցի տեսչի և թե՛ ամենալքավոր Շամախու թեմի դպրոցների վերատեսչի պաշտոնները։ Խորեն վարդապետը իր ապրուստը հայթայթում էր առանձին ուսումնարանի 10 հարուստ աշակերտներով, որտեղ ամեն մինը տարեկան վճարում էր 100 ռուբլի» («Հայկական աշխարհ», 1878, էջ 43—52)։

Նոր տեսուչը «դասավանդության կերպերը փոխում էր և նորաձևություններ էր մտցընում ուսումնարանի մեջ»։

Գևորգ Դ դպրոցասեր կաթողիկոսը Խորեն վարդապետ Ստեփանեին 1878 թվականին պարգևատրում է ականակուռ խաչով Բաքվում ունեցած բեղմնավոր գործունեության համար և հրավիրում է Էջմիածին Հոգևոր Ճեմարանում, որը նա հիմնադրել էր 1874 թվականին՝ ֆրանսերեն, ընդհանուր և ռուսաց պատմություն դասավանդելու համար։ Այստեղ նա մնում է երկու տարի և միաժամանակ լինում է նաև «Արարատ» ամսագրի խմբագիրը։

Խորեն վարդապետի առաջարկով ֆրանսերենը մտցվում է Ա դասարանից, իսկ Դ դասարանում տրամաբանությունը, որը դասավանդում է ինքը։ Հատուկ ուշադրություն է դարձվում վայելչագրության վրա, բարձրացվում է ձայնագրության դասավանդման վի-

ճակը, մտցվում է դասարանական դաստիարակների պաշտոն։ Խորեն վարդապետը նշանակվում է Գ դասարանի դաստիարակ, շատ է կապվում աշակերտների հետ և նրանց սովորեցնում է ընթերցասիրություն և ինքնակրթությամբ պարապելը։ Աշակերտները շատ էին սիրում Խորեն վարդապետին և տարիներ անց խորին երախտագիտությամբ և պատկառանքով են նրան հիշել։

1879 թվականի ամռանը Խորեն վարդապետը երկու ամսով գնում է Թբիլիսի, Մոսկվա և Պետերբուրգ և Գևորգյան հոգևոր ճեմարանի ննջարանի շենքի կառուցման համար հանգանակում 27 000 ռուբլի։

1880 թվականին ճեմարանում բացվել էր Ա լսարանը։ Հետզհետե բացվելու էին Բ և Գ լսարանները, որոնց համար անհրաժեշտ էր ունենալ մանկավարժության դասախոս և վարժոցի ղեկավար։ Այդ նպատակով ճեմարանի վարչությունը Խորեն վարդապետին գործուղում է Եվրոպա՝ Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Բելգիայում դպրոցական գործն ուսումնասիրելու։ Խորեն վարդապետը 14 ամիս մնում է այդ երկրներում և մանրամասն ծանոթանում մանկավարժական կրթության դրվածքին ու դպրոցավարական խնդիրներին։ Սակայն Եվրոպայից փոխանակ Էջմիածին վերադառնալու, նրան ստիպում են գնալ Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքը։ Այստեղ նա բաց է անում գիշերօթիկ դպրոց, բարեկարգում է այն և մի տարուց հետո, 1882 թվականին գնում Աստրախան, որպես տեսուչ։ Նա այդ թեմի հայկական դպրոցների համար լույս է ընծայում «Համակենտրոնական պրոգրամներ» գործնական ձեռնարկը, երկու տարվա ընթացքում հիմնում է նոր իգական դպրոցներ Վլադիկավկազում և այլ տեղերում և մի մեծ գումար է հավաքում այդ նպատակով։

1884—1887 թվականներին Էջմիածնում, Ախալցխայում, Թբիլիսիում և Պետերբուրգում Խորեն վարդապետը խմբագրում և հրատարակում է «Մանկավարժանոց» ամսագիրը, որը այդ ժամանակվա միակ մանկավարժական պարբերականն էր։ Նկատի ունենալով խմբագրի ստանդական կյանքը և հալածվելը, ցարական կառավարության կողմից հայկական դպրոցների փակումը և ուսուցիչների նյութական ծանր պայմանները, ամսագրի վճարող բաժանորդների թիվը 40-ից չէր անցնում, բայց դպրոցասեր խմբագիրը ամսագիրը անվճար բաժանում էր հայկական դպրոցներին, չնայած, որ բացի յուր աշխատանքի վարձը չստանալուց, յուր գրպանից տարեկան մոտ 400 ռուբլի տալիս էր տպագրության ծախսը։ Բնական է, որ այսպիսի պայմաններում նա շատ քիչ թղթակիցներ կունենար, այդ պատճառով թե՛ ինքնուրույն և թե՛ բազմաթիվ թարգմանությունները ռուսական մանկավարժական ամսագրերից ինքը խմբագիրն էր կատարում զանազան ծածկանուններով (Ս. Գուլամիրյան, Իշխան Բագրատունի, Թ. Պալյան, Իգնատիոս, Հայասեր, Թիֆլիսեցի հայ, Տարեգրող և այլն)։ Իր բազմապիսի հոդվածներով, եվրոպական դպրոցների օրինակելի դասերի նկարագրություններով, ժողովրդական բարեկարգ դպրոցների տեղեկագրերով Խորեն վարդապետը պայքարում էր ազգային ինքնուրույն դպրոցի համար։

Ախալցխայի հասարակությունը, ցանկանալով հրավիրել Խորեն վարդապետ Ստեփանեին, 1884 թվականի մայիսի 30-ին հետևյալ դիմումն է ուղարկում Էջմիածին՝ Մակար Ա կաթողիկոսին. «Մենք աչքի առաջ ենք ունեցել Խորեն վարդապետի լեզվագիտությունը, մանկավարժական հմտությունը, դպրոցասեր և ժողովրդասեր վարքն ու բարքը և գործունեությունը և մյուս կողմից էլ մեր դպրոցների անհրաժեշտ կարևորությունը ունենալ մի այսպիսի արժանավոր անձի… որ … ամեն մի զգայուն հայ սրտի համար ես փափագելի պետք է որ լինի…»։

1884 թվականի հոկտեմբերից Խորեն վարդապետը նշանակվում է Ախալցխայի և Ախալքալակի առաջնորդական փոխանորդ և հայկական դպրոցների մանկավարժական ժողովներում, որ լինում էին ամեն շաբաթ օր, քննվում էին մեթոդական հարցեր և տրված փորձնական դասերը։ Ուշադրություն է դարձվում դաստիարակչական խնդիրների վրա, նշանաբան դարձնելով «նախ մարդ պատրաստել, ապա՝ կարդացող»։ Մտցվում են սև և կարմիր տախտակներ, աշակերտական համազգեստ, լքավորներին և երգեցիկ խմբի անդամներին ձրի հագուստ է տրվում։ Ուսուցիչները պարտավոր էին տարեկան ծրագիր և եռամսյա հաշվետվություն ներկայացնել տեսչին, ցածր դասարանների աշակերտներին շարադրություն գրել տալ, պահանջել, որ աշակերտներն ամեն երեկո տանը կարդան և գրեն, դասարանում հետևեն մաքրությանը, կարգապահ լինեն ոչ միայն դպրոցում, այլև փողոցում։

Խորեն վարդապետը ծրագրում էր Կարապետյան դպրոցի համար նոր շենք կառուցել, իսկ դպրոցը վերածել «մանկավարժանոցի» (մանկավարժական ուսումնարան)։ Այդ նրան չի հաջողվում, որովհետև ուսումնական տարին չավարտած, 1885 թվականի մարտի 6-ին փակվում են կովկասահայ 500 դպրոցները, և 900 դասատու, որոնց մեջ նաև

*Ախալցխայի դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները, փողոց են նետվում։*

*Հուսահատության դառն օրեր է ապրում մանկավարժ վարդապետը, երբ ոչ միայն ինքը, այլ իր նման ուսուցիչներ և ուսուցչուհիներ զրկվել էին հայ մատաղ սերնդի դաստիարակության ամենաքաղցր և վեհ իրավունքից։*

*Նրա ծանր հոգեկան ապրումներն արտահայտում են հետևյալ տողերը. «...Մի՞թե այսպես պիտի վերջանա կյանքս, և փրկությունն չտեսած մահ տեսնեմ և բոլոր մտքերս, փափագներս, դիտավորություններս գերեզման տանեմ... Մենք ուխտած ենք մեր վերջին շունչը հայկական դպրոցում ավանդել և կփափագեի, որ գերեզմանս ես հայկական դպրոցի կողքին ամփոփվեր, որտեղից անցուդարձ անողը գուցե կլսե. «Աստվա՛ծ, օրհնի՛ր, բարեկարգի՛ր, պահպանի՛ր հայ դպրոցը» մաղթանքը»։*

*1887 թվականի հունվարից Խորեն վարդապետը քարոզիչ է նշանակվում Պետերբուրգում, որտեղ մնում է 9 ամիս, որովհետև այստեղ ես դավեր են լարում նրա դեմ։ Տեղի հայ եկեղեցիների երեցփոխ Արամելիք իշխանը դժգոհ էր, որ վարդապետը չի թողնում իրեն ինքնագլուխ, առանց ծխականների համաձայնության, իր ցանկացածի պես տնօրինելու եկեղեցու գործերը և նրա եկամուտները։ Եվ ահա այդ պատճառով, ներքին գործերի մինիստրության լրտեսելով, կարողանում է արգելել Խորեն վարդապետին պետական դպրոցներում հայ երեխաներին կրոն դասավանդելը և նողկալի զրպարտություններ անելով կարողանում նրան աքսորել տալ Ղրիմի Ս. Խաչ վանքը, այնինչ դրանից քիչ առաջ ծխականների ընդհանուր ժողովը իր անհուն գոհունակությունն ու երախտագիտությունն է հայտնել իրենց սիրելի քարոզչին՝ նրա արդյունավոր գործունեության համար։ Նա Ջեյթունի հրկիզյալների համար Պետերբուրգում հանգանակել էր 1 500 ռուբլի։*

*Որպես «կառավարության համար անվստահելի անձնավորություն», ժողովրդասեր վարդապետը վեց տարի «կենդանի թաղվեց» Ս. Խաչ վանքում։ Սակայն այստեղ ես նա անգործ չմնաց։ Զրկված լինելով մանկավարժությամբ պարապելու հնարավորությունից, նա զբաղվում է գրական գործունեությամբ, թարգմանում է Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ը, որ վեց ամսում տարածվում է 2 300 օրինակ։ Իսկ դա այն ժամանակվա համար հսկայական տպաքանակ էր։ Գրքերի մի մասը թարգմանիչը նվիրում է դպրոցներին և գրադարաններին, իսկ մյուս մասից ստացված արդյունքը նույնպես ամբողջապես նվիրաբերում է Կիլիկիայի, Վանի և այլ տեղերի նորաբաց հայ դպրոցներին։ Նա նույնիսկ ժամանակ է գտնում ավերակ վանքը վերանորոգելու և բարեկարգելու։*

*Երբ 1893 թվականի օգոստոսի վերջերին նորընտիր կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Երուսաղեմից գնում էր Էջմիածին, նա ճանապարհին Խորեն վարդապետին կանչում է Օդեսա, նշանակում է իր թարգմանիչն ու անձնական քարտուղարը, տանում է Էջմիածին և կարգում իր դիվանապետ։ Շուտով նա նշանակվում է նաև նորահաստատ ուսումնական հանձնաժողովի նախագահ, իսկ Գևորգյան ճեմարանի լսարաններում դասախոսում է բեմբասացություն։*

*1894 թվականի սեպտեմբերի 25-ին Խորեն վարդապետը ձեռնադրվում է եպիսկոպոս, իսկ 1895 թվականին նշանակվում է Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ։ Չնայած այս պաշտոնում նա մնում է ընդամենը վեց ամիս, բայց նա լինում է թեմի բոլոր հայաշատ քաղաքներում, բարեկարգում դպրոցները, մինչև անգամ իր սուղ նյութական միջոցներից դրամական նվիրաբերություններ է անում հօգուտ չքավոր վարժարանների։ Նա բաց է անում դպրոցներ Աստրախանում, Ղզլարում, Վլադիկավկազում։ Սակայն ցարը չի հաստատում նրան թեմական առաջնորդի պաշտոնում և Խրիմյան Հայրիկը 1895 թվականի օգոստոսի 24-ին գրում է, որ չնայած իր պաշտպանությանը, ներքին գործերի մինիստրը դեմ է եղել նրան հաստատելուն, ասելով, որ ադիվանատան մեջ կան այնպիսի փաստեր, որ նա չի կարող առաջնորդ լինել այսպիսի ընդարձակ վիճակին...»։ Այդ նամակում ասված է. «Այժմ պիտի վերադառնաք Դուք դարձյալ Ղրիմի Ս. Խաչ վանքն՝ այն սքանչելի մենարան, ուր մարդոց ոխութենեն ազատ լինելով Ձեզ բարեկամ կլինեն միայն անխոսուն անտառները... Դու փոքր մի ժամանակ պիտի սպասես։ Գիտես դու իմ մտադրությունը, որ Ձեր բաղձանքն այն է, եվրոպա ուղևորվել իբրև այցելու հովիվ։ Արդեն Մանչեստրի ազգայիններեն երկու անգամ խնդիրներ եկած են, բայց ես դեռ փոքր մի պիտի սպասեմ մինչև Հայոց խնդիր պսակվի և այդ մոտ է։ Սորա պատճառը Ձեզ շատ հայտնի է. չեմ ուզեր Ռուսիո կարծիք հրավիրել մեր վերա, թե ես զքեզ Հայոց խնդրույն համար ղրկած եմ։ Այսչափս գրելով Ձեզ, կհուսամ, որ Ձեր ոգին չի խռովի. համդարտ ու միամիտ կացեք ի Ձեր մենարան և ես Ձեզ լուր կուտամ ի պատեհ ժամանակին»։*

Եվ Խորեն եպիսկոպոսը, 2 տարվա ընդմիջումից հետո, երրորդ անգամ գնում է իր աքսորավայրը, որտեղ նա անցկացրել է 7—8 տարի։

Այս անգամ Խորեն եպիսկոպոսը երեք տարի մնում է նույն աքսորավայրում՝ Ղրիմի Ս. Խաչ վանքում։ Խրիմյան Հայրիկը ցանկանում էր նրան որպես քարոզչի Ամերիկա ուղարկել, բայց այդ չի հաջողվում։

Խորեն եպիսկոպոսը Ս. Խաչ վանքում մնում է մինչև 1900 թվականի վերջերը, երբ Խրիմյան Հայրիկը նրան Էջմիածին է կանչում, բայց նա տեղ չհասած, մեռնում է Թբիլիսիում։

Հայկական դպրոցների առաջին փակումից մինչև իր մահը՝ 15 տարի, Խորեն եպիսկոպոս Ստեփանեն փաստորեն դադարեց գործելուց որպես դպրոցական գործիչ։ «Վատ նշան է այս,— ասում էր նա,— այո՛, ուղեղս ասում է վատ է, բայց սիրտս չի դադարում հուսալուց»։ Եվ այդ հույսի արդյունքն էր նրա կտակը, որը 130 տարուց հետո պիտի գործադրվեր գլխավորապես Թուրքիայում հայկական դպրոցների և այլ մշակութային հիմնարկների բացման նպատակով, երբ իր թողած 25 000 ռուբլի գումարը բարդ տոկոսներով կգառնար 14 000 000 ռուբլի։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

# ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

(1845—1892)

*Գրիգոր Արծրունու պապը՝ Գևորգ աղա Երանյան Արծրունի բուն վանեցի էր։ Ժառանգական կալվածների պատճառով Օսմանյան կառավարության կողմից հալածանքի ենթարկվելով՝ սպառնացող մահվան վտանգից ազատվելու համար փախուստ է տալիս Թիֆլիս՝ անցյալ դարի սկիզբները՝ 1819 թվականին։ Նա ներկայացնում է ռուսաց կառավարության մի տոհմագրություն, որով ցույց է տալիս, թե իր ցեղը Վասպուրականի հին Արծրունիների սերնդից էր, և սրանով ստանում է ժառանգական ազնվականություն ռուսաց Ալեքսանդր Ա կայսրից։*

*Գևորգ Արծրունին իր ընդունակության և իր պատկառելի հարստության շնորհիվ խոշոր ազդեցություն ձեռք բերավ ամբողջ Թիֆլիսում և Թիֆլիսի հայ հասարակության փառքը դարձավ։ Նա Ներսես Աշտարակեցու մտերիմ բարեկամն ու աջակիցն էր. նա հիմնեց Թիֆլիսի մեջ առաջին հայ տպարանը, որի տառերը անձամբ բերավ Ամստերդամից։ Նա վաճառական էր, միևնույն ժամանակ գրականության հետամուտ և մինչև իր մահը Նորակերտ Ներսիսյան դպրոցի պահապան սյունն եղավ։*

*Իր որդին Երեմիա մտավ զինվորական ասպարեզը և հասավ զորապետության աստիճանին։ Նա հայտնի էր իր անաչառ բնավորությամբ, միևնույն ժամանակ խրոխտ և բռնավորական վարմունքով, որի պատճառով և հասարակությունից սիրված չէր։*

*Երեմիայի որդին է Գրիգոր Արծրունին, որ ծնվել է 1845 թվականին Մոսկվայում։ Իբրև ազնվական ընտանիքի զավակ՝ նա շրջապատված էր ընտանեկան ուսուցիչներով և վարժուհիներով, որոնք գիմնազիոնի ընտրելագույններն էին։ Մանկության ժամանակ նա հայերեն երբեք չգիտեր և խոսում էր ռուսերեն ու ֆրանսերեն։ Դեռ տասը տարեկան էր Գրիգորը, երբ մայրը վախճանվելով, հայրն իր ընտանիքը Մոսկվայից փոխադրեց Գերմանիա, ուր մի տարի մնալուց հետո դարձավ Թիֆլիս 1858 թվականին։ Հաստատվելով Թիֆլիսում, Գրիգորը իր եղբոր Անդրեասի հետ առաջին անգամ սովորել սկսեց կրոն և հայերեն, առաջնորդությամբ Գրիգոր քահանա Տեր-Թարսեղյանի և հետո Պետրոս Սիմեոնյանցի, որ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիրն էր։ Հորը խիստ բնավորությունը և որդիների հետ պաշտոնական հարաբերությունը, ռուս ուսուցիչների տված կրթությունը, մայրական խնամքների բացակայությունը, վերջապես ընտանեկան բոլորովին փակված կյանքը Գրիգորի մեջ մանուկ հասակից աճեցրին արհամարհանք դեպի ուրիշները, հեգնական վերաբերմունք և ծաղր դեպի հայերն ու հայերենը, որ ավելի շեշտվեց ռուսական գիմնազիայում։*

*1863 թվականին Գրիգորն ավարտեց ռուսական գիմնազիան և նույն տարին մտավ Մոսկվայի համալսարանի բնագիտական բաժինը. մի տարի հետո փոխադրվեց Պետերբուրգ՝ համալսարանի նույն բաժնում շարունակելու համար։*

*Նույն ժամանակները ռուսաց բարենորոգչական ու ազատական շարժումների արձագանքն սկսել էր մտնել նաև հայոց մեջ. Դորպատի, Մոսկվայի և Պետերբուրգի հայ ուսանողները կազմում էին ժողովներ, ապրում էին հայկական կյանքով, աշխատում էին գրքեր հրատարակել և առհասարակ հայ ժողովրդի լուսավորության զարկ տալ։ Արծրունին Մոսկվայում եղած ժամանակ ուղղակի ծաղրում էր հայ ուսանողների ժողովը և ամենևին մասնակցություն չունեցավ նրա հետ։ Նա Պետերբուրգում էլ նույն ձևը շա-*

րունակեց. բայց կրթական հոսանքը ուժեղ լինելով՝ Գրիգորն էլ տարվեց այդ հոսանքով և 1865 թվականին տպեց իր անդրանիկ հոդվածը «Մեղու»-ի մեջ, «Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ» խորագրով։ Հոդվածի գլխին դրված էր Գյոթեի այս նշանավոր խոսքը. «Դու չես կարող մի մեծ բան շինել, և ահա սկսում ես փոքր բանից»։

Ջդիմանալով հյուսիսային ցուրտ կլիմային՝ Արծրունին սաստիկ հիվանդացավ նույն ձմեռը. բժիշկներն ասում էին, թե հազիվ երկու ամսվա կյանք ունի. նրանց խորհրդով նա անցավ Հարավային Ֆրանսիայի Նիցցա քաղաքը, ուր մի տարի մնալուց հետո բոլորովին կազդուրվելով դարձավ Զվիցերիա։ Այստեղ Ցյուրիխի և Ժընևի համալսարաններում սովորում էր գլխավորապես քաղաքական տնտեսագիտություն։ Այնուհետև անցավ Գերմանիա և մտավ Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայական բաժինը, ուր սովորում էր քաղաքատնտեսության պատմություն և հասարակական գիտություններ, ինչպես և փնագիտություն։ Երկու տարի հետո ավարտեց՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան (1869 թ.)։ Այստեղից նա անցավ Փարիզ և հետո Վիեննա, ուր թե՛ հայ միաբանությունից հայերենի դասեր էր առնում և թե՛ համալսարանում լսում էր քաղաքատնտեսություն։ Վիեննայից գնաց Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ հայերենը շարունակելու համար և մի քանի ամիս մնալուց հետո՝ դարձյալ Հայդելբերգ գալով՝ վերջապես 1870 թվականին դարձավ Թիֆլիս։

Եվրոպան, մանավանդ գերմանական կրթությունը, մեծ ազդեցություն ունեցավ Արծրունու վրա. արդեն Պետերբուրգում եղած ժամանակից Արծրունին սկսել էր հետևել ռուսաց գրական հասարակական այն նոր շարժման, որի գլուխը կանգնել էր երիտասարդ ռուս գրող Պիսարևը։ Պիսարևը, որի գրվածները հափշտակությամբ կարդում էր ամբողջ կրթված Ռուսաստանը, ռեալիստ ուղղության էր հետևում և իր իսկական ոգին օգտակարապաշտությունն (utililarisme) էր. նա քարոզում էր անհատի կատարյալ ազատագրությունն ու զարգացումը դրական գիտությունների միջոցով. նա հրավիրում էր գրողներին՝ ժողովրդականացնել պատմական և բնական գիտությունները և ինչ որ դրական կյանքի տեսակետից որևէ օգուտ չունեն, համարում էր բոլորովին ավելորդ բան։ Արծրունին հետևելով այս շարժմանը, յուրացնելով Պիսարևի գաղափարները, հրապարակ է իջնում և նույնիսկ իր մի քանի հոդվածներում ցույց է տալիս լիակատար հետևողություն Պիսարևի հոդվածներին։ Եվրոպական կյանքը ավելի է շեշտում Արծրունու դրական և օգտակարապաշտ ուղղությունը։ Ավելացնենք և այն, որ այստեղ՝ ազգայնական գաղափարների ընդհարման մեջ, զորանում է նաև Արծրունու ազգայնական ոգին և այնուհետև նա իր գործունեությունը ամեն կողմից դարձնում է դեպի իր Ազգը, դեպի հայ հասարակությունը։ Եվ այն օտարասեր, դեպի հայն ու հայերենը արհամարհանքով նայող Գրիգորի տեղ, մենք այժմ տեսնում ենք եռանդուն երիտասարդ Արծրունուն, որ ամենից ավելի հետաքրքրվում է հայի ներկա ու անցյալի կյանքով, ուսումնասիրում է հայոց պատմությունը, հին մատենագրությունը՝ սովորում է գրաբար լեզուն Վենետիկի և Վիեննայի միաբանների մոտ՝ իր ուսումնասիրությանց համար ավելի ամուր կռվաններ ձեռք բերելու նպատակով։

Եվրոպայում եղած ժամանակ Արծրունին շարունակ թղթակցել է «Մեղու» և «Հայկական աշխարհ» թերթերին՝ առանց խտրություն դնելու սրանց մեջ, թեև այս երկուսը իրար հակառակ ուղղության թերթեր էին։ Մինչև «Մշակ» թերթը հիմնելը (1865—1871 թ. թ.) նա գրել է 46 հոդված, որոնք վերջում հավաքվելով հրատարակվեցին մի հատորի մեջ «Գրիգոր Արծրունու աշխատությունները» անունով (Թիֆլիս, 1904 թ., 406 էջ)։

Արծրունու հոդվածները պարունակում էին շատ օգտակար մտքեր, որոնք բոլորովին նոր լինելով հայ ժողովրդի համար՝ առանձին հետաքրքրություն էին զարթեցնում և կամաց-կամաց տարածում Արծրունու անունը, ինչպես՝ աղջկանց դաստիարակություն, ժողովրդի մեջ գիտություն մտցնելու համար ընկերություններ, լեզվի նորոգություն, ազգային դրադարաններ, արդյունագործության զարգացումը Կովկասում, կանանց ազատագրություն, ժողովրդական թատրոններ, ազգային լրագրություն, մտքի և մամուլի ազատություն, վերջապես եվրոպական նոր շարժումների և ազատամիտ սկզբունքների նկարագրությունը։ Բայց սրանց հակառակ Արծրունին երբեմն հայտնում էր նաև շատ տարօրինակ մտքեր, ինչպես օրինակ՝ «Գրականություն չկա» և «Իդեալիստներ» հոդվածները, որոնցով պնդում է, թե հայերեն սովորել հարկավոր չէ։

«Վերադառնալով Եվրոպայից՝ այդ ուսյալ, իր հոդվածներով արդեն հայտնի դարձած երիտասարդի առջև բացվում է գործունեության լայն ասպարեզ։ Բնությունը տվել էր նրան աշխույժ, տպավորվող բնավորություն. նրա սուր հայացքից չէին խուսափում հասարակական հարցերը։ Կրթությունը դարձրեց նրան առաջադեմ, համարձակ, հեղափոխիչ գաղափարների համոզված զինվոր։ Եվ նա

դուրս եկավ մեր մեջ։ Ոչինչ չկարողացավ արգելք դառնալ նրա առջև. ոչ մանկությունից ստացած օտար կրթությունը, ոչ մայրենի լեզվին խորթ լինելը, ոչ փակված կյանքը հայրենի տան մեջ և ապա երկար բացակայությունը Հայրենիքից։

Թիֆլիսում առաջին անգամ մտնում է գրական աշխարհը և ստանձնում է Գայանյան և Մարիամյան օրիորդաց դպրոցների տեսչի պաշտոնակատարի պաշտոնը. սակայն այդտեղ քիչ է մնում. մանկավարժությունը չի հրապուրում նրան. այլ նա գրավվում է գրականության գաղափարով։ Հայրը առաջարկում է նրան զանազան արքունական պաշտոններ, բայց որդին խիստ դիմադրելով հորը մերժում է ամեն ինչ, և հակառակ զորապետի ընդդիմադրության, որոշում է նվիրվել լրագրական ասպարեզին։ Վերջապես 1872 թվականին հիմնում է նա իր «Մշակ» լրագիրը։ Հիմնելով «Մշակ»-ը՝ Արծրունին նպատակ ուներ տարածել հայոց մեջ եվրոպական քաղաքակրթության այն սկզբունքները, որոնցով սնվել էր ինքը։

Երբ Արծրունին սկսեց իր թերթի հրատարակությունը, ոչ մի հայ լրագիր գոյություն չուներ Կովկասում. մինչև այն ժամանակ գոյություն ունեցող թերթերը, ինչպես «Կռունկ», «Գարուն», «Հայկական աշխարհ» անհաջողության էին մատնվել և մեկը մյուսի ետևից դադարել էին։ Մնում էր միայն «Մեղու Հայաստանի»-ն, որ հազիվ կարողանում էր իր գոյությունը պահպանել բաժանորդների չափազանց սակավության պատճառով։ Ուստի և Արծրունու համարձակությունը ընդհանուր զարմանք պատճառեց։

Բայց Արծրունին ուրիշ կերպով էր ըմբռնում լրագրի նշանակությունը. լրագիրը պետք է լիներ ժողովրդի համար և պետք է տակար գրկանքների, մինչև որ ժողովուրդը ընթերցանության վարժվելով պահեցներ թերթը։

Կանոնավոր, իսկական նշանակությամբ թերթ ունենալու համար Արծրունին նաև կազմակերպեց խմբագրական ժողով, որը առաջին նորությունն էր հայոց մեջ։ Բայց այսպիսի մի մարմին կազմելու համար հարկավոր էին մեծ ուժեր, իսկ Թիֆլիսը զուրկ էր այդպիսի ուժերից։ Արծրունին որքան կարողացավ իր գլխին հավաքեց այդ անփորձ, երբեմն անուս, բայց ազատ գաղափարների տեր, առաջադիմական ոգով տոգորված երիտասարդներին, և ինքը ուղղիչ հանդիսանալով նրանց, ձևակերպեց «Մշակ»-ի խմբագրական կազմը։

Թերթի առաջին համարը լույս տեսավ 1872 թվականի հունվարի 1-ին։ Երբ Մշակը հրատարակվել սկսեց, նա միայն 50 բաժանորդ ուներ. բայց հազիվ տարին անցավ և բաժանորդների թիվը հասավ 500-ի։

«Մշակ»-ը իր երկար գոյության ընթացքում մինչև Արծրունու մահը եղավ հայոց գլխավոր լրագիրը. դեմ էր խոսում բոլոր այն հին սկզբունքներին, որոնք չլատում էին Ազգի առաջադիմական ուժերը և հակառակ կանգնում եվրոպական նոր քաղաքակրթության տարածվելուն հայոց մեջ։ Եվրոպական կյանքի ամեն ազատամիտ սկզբունք, որ պետք է բարձրացներ մեզ և հավասարեցներ կրթված ազգերին՝ ընդունում էր Արծրունին։ Նա հենց առաջին տարվանից հարվածել սկսեց հայ կրթված երիտասարդությանը, որ գվարճության և անձնական հաճույքի անձնատուր, անտարբեր էր մնում դեպի ազգային առաջադիմությունը, հին սերնդին, որ նախապաշարմունքներով տոգորված՝ չէր ուզում բնավ շարժվել իր մեռյալ ճահճային դրությունից։

«Մշակ»-ի առաջադիմական ու ազատամտական սկզբունքներն այսպես կարելի է համառոտել.— Ազգային հարցի մեջ նա քարոզում էր կրոնական անխտրականություն. կրոն և ազգություն տարբեր բաներ են. հայությունը հավասարապես պատկանում է և՛ լուսավորչականին, և՛ կաթոլիկին, և՛ բողոքականին։ Ազգության հիմքը կրոնը չէ, այլ մայրենի լեզուն. այս պատճառով Արծրունին անխնայորեն կռվում էր այն հայերի դեմ, որոնք մայրենի լեզուն մոռացած, անփույթ էին նրա գործածության ու վերակենդանության մասին։ Մայրենի լեզուն Արծրունու համար առաջին կենսական նշանակությունն ուներ և հայության հոգին հիմնում էր հենց հայ լեզվի վրա։

Եկեղեցական հարցերի մեջ Արծրունին հակառակ էր կղերնավորների անջատման և առանձին իշխանավոր դասակարգ կազմելուն։ Նա քարոզում էր վերադարձ դեպի Լուսավորչի ժամանակը, ուր հոգևորականությունը ժողովրդական բնավորություն էր կրում. մեզ հարկավոր են այնպիսի քահանաներ, որոնք իրենց կրթությամբ ավելի բարձր կանգնած լինեին իրենց ժողովրդից և առաջնորդեին նրան դեպի լույսը. այս պատճառով Արծրունին անդադար խոսում էր քահանաների կրթության հարցի առթիվ։ Նա պահանջում էր նույնպես, որ Եկեղեցուց վերացվի գրաբարը, որից ժողովուրդը ոչինչ չի հասկանում, ուստի հարկավոր է աշխարհաբարի թարգմանել մեր բոլոր եկեղեցական գրքերը։ Սրա կարելիությունը գործնականապես ապացուցելու համար Արծրունին նույնիսկ «Մշակ»-ի մեջ Ս. Գրքից կտորներ թարգմանելով հրատարակեց։ Արծրունին պահանջում էր նույնպես վարչական փոփոխություններ մեր Եկեղե-

ցում, ամուսնական հարցի կանոնավորություն, հաստատուն օրենսդրություն, հասարակության վերահսկողությունը եկեղեցական գործերի մեջ և այլն։

Բայց այս չի նշանակում, թե Արծրունին անտարբեր էր դեպի եկեղեցին. ընդհակառակը, նա միշտ գովաբանել է քրիստոնեական կրոնի բարձրությունն ու սրբությունը, նա միշտ քարոզել է կրթված հոգևորականների պետքը, կաթողիկոսական ընտրության ժամանակ ահեղ պատերազմ է մղել իր հակառակորդների դեմ՝ առաջարկելու համար մի այնպիսի անձի՝ որ չլիներ հնադարյան, այլ կողմնակից նոր առաջադիմական ուղղության։

Առանձին ու տնտեսական հարցերի մեջ Արծրունին պահանջում է հիմնական փոփոխություն. մեր մեջ գյուղատնտեսություն չկա, երկրագործությունը գտնվում է խիստ նահապետական դրության մեջ, անտառների մշակության մասին հոգ տանող չկա. ասում ենք, թե հայը վաճառական ժողովուրդ է, բայց ընդհակառակը հայը բնավ վաճառական չէ, այլ օտար վաճառականության միջնորդ, և այս միջնորդությունն էլ պիտի խլվի նրա ձեռքից, եթե մեր երկրում ճանապարհները կանոնավորվեն և հաղորդակցական դյուրություններ ստեղծվեն. ա՛յն ժամանակ կսկսի հայ վաճառականությունը, երբ գործարաններ կբացվեն և արդյունագործությունը կսկսի մեր մեջ։

Դպրոցական հարցը և եվրոպական կրթության պահանջը հատուկ ուշադրության առարկա են դարձել «Մշակ»-ում։ Արծրունին մասնավորապես դեմ էր խոսում հայ կնոջ տրված կիսատ եվրոպական կրթության, որով հայ կինը ո՛չ միայն չի կրթվում, այլև հեռանում է հայությունից. հայ կինը հին ժամանակ ընտանիքի պահապանը և հայկական ավանդությանց պաշտպանն էր. այժմ եվրոպական այդ կիսատ կրթության պատճառով նա դարձավ մեր ընտանիքի մեջ բոլորովին հակառակ դեր կատարող մի ուժ։

Արծրունին կողմնակից էր կանանց ազատագրության։ Կինը առհասարակ համարվում է մի թույլ էակ, որ կարող չի ապրել առանց տղամարդու հովանավորության, հայրը կամ եղբայրը և կամ ամուսինը պիտի հսկի միշտ նրա վրա. ապա թե ոչ անկումը անխուսափելի է։ Արծրունին պահանջում է, որ վերանա այս խնամակալությունը. կինն էլ ազատ լինի ինքնագլուխ գործելու, կատարելու այն բոլորը, ինչ որ տղամարդու առանձնաշնորհն է, ազգային և հասարակական գործերին մասնակցելու։ Սրա համար նախ հարկավոր է աղջկանց էլ տալ նույն ուսումը ինչ որ տղամարդկանց, այն է տարրականից սկսած մինչև բարձրագույնը։ Բայց կանանց ազատագրության հիմնական սկզբունքը նա գտնում է աշխատանքը, ի՛նչ ձևի և որակի տակ էլ լինի նա. կինն աշխատանքով պիտի ստեղծի իրեն համար անկախ դիրք և այնուհետև զգալով իրեն ազատ՝ ազատորեն պիտի սիրի, ազատորեն պիտի ապրի, ազատորեն պիտի մտնի մարդկության բոլոր ասպարեզները։ Ահա ա՛յս պատճառով Արծրունին պահանջում է, որ աղջկանց դպրոցներում բացի ուսումից՝ անպատճառ սովորեցնեն նաև զանազան արհեստներ։ Արծրունու այս բոլոր հոդվածները, որ պատկանում են կանանց հարցին, իր մահվանից հետո հավաքվելով հրատարակվել են առանձին հատորով («Մշակ» և հայ կինը», Թիֆլիս, 1912 թ.)։

Արծրունին քարոզում էր նաև կովկասյան տարբեր ազգերի մեջ համերաշխության սկզբունքը, նպատակ ունենալով ընդհանուր Հայրենիքի առաջադիմությունը. ինքն առաջին անգամ քարոզելով այս հարցը, կարողացավ մերձեցում առաջ բերել վրացի և թուրք երիտասարդության հետ։

Արտաքին տեսության մեջ Արծրունին ուշադրություն էր դարձնում արևմտահայոց և պարսկահայոց վրա, մանավանդ վերջինների, որ մանրամասն և բազմակողմանի կերպով ներկայացրել է։ Արևմտահայերի մասին Արծրունին ունեցավ միշտ վատ կարծիք. հատկապես խոսելով Կոստանդնուպոլսի հայության մասին, նա ասում էր, որ նրանք գործի մարդիկ չեն, միայն խոսել գիտեն։ Նա նույնիսկ հակառակորդ էր Կոստանդնուպոլսից բերված դերասաններին, հայտնի Ադամյանին և Սիրանույշին, որովհետև սրանք Կոստանդնուպոլսից էին։ Եվ այս թյուր, անտեղի կարծիքը երկար թագավորեց և հազիվ հետագա շարժումների միջոցին սկսեց հանգել։ Այս տեսակետից կարող ենք ասել, թե «Մշակ»-ը կատարեց մի բոլորովին բացասական դեր՝ հեղինակ լինելով այս եղբայրադավ ատելության։

Իսկ արտասահմանյան կյանքի այնպիսի կարևոր երևույթները, որոնք նշանակություն ունեին և մեր Ազգի համար, ինչպես բանվորական շարժումները, կանանց քաղաքական իրավունքներ տալու հարցը, կրթական դրությունները և այլն չէին կարող աննկատելի անցնել «Մշակ»-ում։

Տարակույս չկա, թե այս բոլոր ազատամիտ սկզբունքները չէին կարող մի անգամից ընդունելի դառնալ հասարակության կողմից. «Մշակ»-ի դեմ դուրս եկավ հակառակորդների ահագին մեծամասնություն. «Մշակ»-ի հետևորդների փոքրիկ խմբակը, որ սակայն հետզհետե ստվարանում էր.

կավում էր այդ մեծամասնության դեմ. Հայոց գրական մեռյալ կյանքի մեջ շարժումն սկսվեց. «Մշակ»-ի համակիրները, որոնք այժմ արդեն հազարավորների հասնելով կազմում էին «Մշակական»-ների մեծ կուսակցությունը, իբրև հակառակամարտ ունեցան իրենց դեմ պահպանողականների խոշոր կուսակցությունը, որ խմբվեց նախ «Մեղու Հայաստանի» թերթի շուրջը և կոչվեց «Մեղվական». իսկ «Մեղու»-ից հետո կազմվեցին երկու ուրիշ մեծ կուսակցություններ, որոնք խմբվեցին «Արձագանք» և «Նոր դար» թերթերի շուրջը և կոչվեցին «Արձագանքյան» և «Նոր-դարական»։ 1890-ական թվականներին Կովկասը վարակված էր այս ահեղ կուսակցություններով, մանավանդ երկուսով («Մշակ» և «Նոր-դար»), որոնց գործունեությունը երևում էր մեր ամեն մի ասպարեզում և կարելի չէր մի քայլ անել առանց ընդհարվելու այս երկուսից մեկն ու մեկին. բայց Արծրունու մահից հետո, երբ մանավանդ նորանոր թերթեր սկսեցին երևան գալ, կուսակցության ուժեղ թափը հանգել սկսեց և կարող ենք ասել, թե նորագույն շարժումների առաջ նա բոլորովին մոռացվեց։

1875—1878 թվականներին բացվեց բալկանյան ազգերի ապստամբությունը. Բոսնիան, Հերցեգովինան ու Բուլղարիան ապստամբեցին։ Արծրունին հրապարակ եկավ «Մշակ»-ում իր կրակոտ առաջնորդողներով. Նա պահանջում էր, որ ազգերի ազատության այս ամենահարմար րոպեին հայն էլ շարժվեր. Նա պաշտպանում էր այն միտքը, թե հայոց փրկությունը միայն ռուսաց ձեռքով կարելի է, և հայոց համար ամենալավ դրությունը կստեղծվի այն ժամանակ միայն, երբ Հայաստանը ամբողջովին ռուսաց ձեռքը կանցնի։

1878 թվականից սկսած «Մշակ»-ը դարձավ ամենօրյա թերթ։

Անկարելի է մի առ մի հիշել Արծրունու գործունեությունը, մինչև իսկ համառոտ կերպով, որովհետև հրապարակախոսական ամեն մի հոդված որոշ աստիճանի գործունեություն է և այս գործունեությանց ամփոփումը միայն կարելի է մատնանիշ անել։

Չպետք է կարծել, թե Արծրունին միայն գրական գործունեություն ունեցավ. Նա մտավ նաև գործնական կյանքի մեջ՝ որչափ պայմանները և իր կուսակցության ուժերը թույլ կտային։ 1872 թվականին Ներսիսյան դպրոցի հոգաբարձության պայմանաժամը լրացած լինելով՝ նոր ընտրության համար Արծրունին ընտրողական պայքար հայտարարեց և իր կուսակցությամբ մտնելով այդ պայքարի մեջ, հաջողվեց իր համախոհներով ընտրվել հոգաբարձու. 1875 թվականին Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնավոր ընտրվեց և այդ պաշտոնը վարեց մինչև 1887 թվականը։ Ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր սպանությունից հետո, երբ ռուս քաղաքականությունը փոխվելով՝ նախկին կայսերական շարժման տեղ հայատյաց քամիներն սկսեցին փչել, Արծրունին ևս սկսեց հետզհետե սանձել իր լեզուն, ամփոփել իր սահմանները և մոռացության տալով հայկական ընդհանուր հարցերը՝ տեղական մասնավոր խնդիրներով զբաղվել։ 1883 թվականը «Մշակ»-ի ամենաթույլ տարին է. Արծրունին զբաղված լինելով իր կալվածական վեճերով՝ հարկավոր ուշադրությունը չկարողացավ դարձնել իր թերթին և նա օրեցօր ընկնում էր։ Անձնական գործերի վրա ավելացավ և լրագրի գոյության սպառնացող մի հանգամանք. Արծրունին կասկածի տակ ընկավ կառավարության առաջ, խմբագրության մեջ տեղի ունեցավ խուզարկություն. «Մշակ»-ը առժամանակյա կերպով դադարեց, այնուհետև սկսեց շաբաթական երեք անգամ երևալ, վերջապես շատ անկանոն կերպով էր հրատարակվում։ Կալվածական վեճերի արդյունքը շատ ձախորդ եղավ Արծրունու համար. իր ամբողջ հայրական ժառանգությունից, ահագին կալվածներից, շենքերից ու խանութներից զրկվելով նա ընկավ հետին կարոտության մեջ և այս պատճառով ստիպվեց փակել թերթը 1888 հուլիսի 11-ին և իր կնոջ հետ հեռանալ Զվիցերիա՝ հանգստանալու համար։ Այս միջոցին «Մշակ»-ը հանձնել էր նա Րաֆֆուն և հույս ուներ ապրել նրա եկամուտով. բայց տերությունը նոր խմբագիր չէր ընդունում. Արծրունին հազիվ մի տարի մնաց Զվիցերիայում և թերթի իրավունքը չկորցնելու համար նորից Թիֆլիս եկավ. սակայն այս անգամ տերությունը իրեն էլ չէր ճանաչում իբր խմբագիր «Մշակ»-ի, առարկելով, թե մի տարվա դադարով հրատարակության իրավունքից զրկված է թերթը։ Արծրունին ստիպվեց բողոքել Պետերբուրգ և նորից իրավունք ստանալով՝ 1885 թվականի հոկտեմբերի 27-ից լույս ընծայվեց նոր համարը։ Այս նոր շրջանում սկսեց նա «Մի տարի Շվեյցարիայում» վերնագրով հոդվածների շարքը, որի մեջ տալիս էր զվիցերիական կյանքի մանրամասն նկարագրությունը։

1889 թվականի ամառը, Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի ժամանակ, բացվեց նաև «Գրողների միջազգային կոնգրեսը». Արծրունին հրավիրված լինելով նույն ժողովին՝ կարդաց ֆրանսերեն լեզվով մի տեսություն հայոց մտավոր շարժման և քաղաքակրթական ձգտումների մասին, որ կ

հրատարակվեց նույն ժողովի հավաքածուում։ Փարիզում եղած ժամանակ նա հրատարակում էր «Մշակ»-ում «Փարիզից» և «Տպավորություններ» վերնագրով հոդվածների երկար շարքը, որոնց մեջ նկարագրում էր ֆրանսիական ժողովրդի բարքն ու բնավորությունը։

1890 թվականին վերջացավ Արծրունու գրական գործունեության 25-ամյակը. «Տարազ» թերթի խմբագրությունը նախաձեռնող հանդիսանալով, կազմակերպեց մի մասնախումբ՝ տոնելու համար Արծրունու հոբելյանը։ Հոբելյանը տեղի ունեցավ մայիսի 6-ին և տոնվեց շատ մեծ հանդեսով։ Հազարավոր ժողովուրդ մասնակցեց այդ հոբելյանին՝ գործնականապես ցույց տալով իր հարգանքը դեպի այդ մեծ խմբագիրը։

1892 թվականը Արծրունու ամենատենդոտ, ամենագործունյա տարին է. այդ թվականին ծագեց կաթողիկոսական հարցը. Արծրունին ամբողջ ուժով նվիրվեց այդ հարցին. իր կրակոտ առաջնորդողներով և իր կուսակցության եռանդուն գործունեությամբ նա պաշտպանում էր Հայրիկի թեկնածությունը՝ մերժելով Աշըգյանին, որ հակառակ կուսակցության թեկնածուն էր և Հայրապետական Աթոռի ընտրելին. Արծրունուն հաջողվեց ընտրվել պատգամավոր։ Ս. Էջմիածնի ընտրական պայքարների մեջ կարելի եղավ վերջապես դեն շպրտել Աշըգյանի անունը և Հայրիկը միաձայն ընտրվեց Ամենայն Հայոց Հայրապետ։

Արծրունին Էջմիածնից վերադարձավ Թիֆլիս. ժողովրդական մի մեծ աղետ կանչում էր նրան. խոլերան էր դա, որի դեմ պետք էր կռվել՝ տգետ ժողովրդի մեջ տարածելով առողջապահական-բժշկական կարևոր միջոցները։ Արծրունու վերջին կռիվն էր սա. և նա երկար չապրեց այնուհետև. հիվանդանալով թոքերի բորբոքումից՝ վախճանվեց նա 1892 թվականի դեկտեմբերի 19-ին՝ 48 տարեկան գործունյա հասակում։ Թաղումը տեղի ունեցավ նույն ամսի 27-ին չտեսնված շքեղությամբ և ժողովրդական ցույց դարձավ. 40—50 հազար անձ հուղարկավոր էր դագաղին։ Յոթը դիակառքեր ծանրաբեռնված էին պսակներով, որոնց թիվը 300-ի էր հասնում. ցավակցական հեռագրերի թիվը 400-ից ավելի էր. Նա թաղվեց Թիֆլիսում, Խոջևանքի գերեզմանոցում. գերեզմանի վրա կանգնեցրին մի պարզ և հասարակ ժայռ՝ ցույց տալու համար նրա պարզ ու անվեհեր բնավորությունը։

Բացի հրապարակախոսականներից Արծրունին ունի և ֆելիետոններ, դասախոսություններ, վեպիկներ և մի վեպ «Էվելինա» անունով։ 1873 թվականից Արծրունին սկսեց գրել իր երգիծական ֆելիետոնները, որոնք ստորագրում էր «Ասիացի» ծածկանունով։ Այս ճյուղի մեջ նա ցույց տվեց մեծ առաջադիմություն և երգիծաբանական շնորհք։ Ասիացու ֆելիետոնները, որոնք մոտ 20 տարի զարդարեցին «Մշակ»-ի էջերը, մեր հասարակական կյանքի հայելին են. յուրաքանչյուր փոքրիշատե աչքի ընկնող հասարակական հարց արձագանք է գտել այդտեղ. բայց այդ երկար ժամանակի մեջ Ասիացին երբեք չի ստորացրել իրեն՝ դիմելով ռամիկ սրախոսությունների և անմիտ կատակների։

Ժողովրդական դասախոսություններից առաջինը տվեց Արծրունին 1875 թվականի նոյեմբերի 16-ին. սա հայերեն լեզվով առաջին դասախոսությունն էր Կովկասում և նրա նյութն էր միօրյա մարդահամարը. դասախոսությունը կրկնվեց Հավլաբարում։ Սրանից դուրս ուրիշ մի քանի դասախոսություններ էլ ունեցավ Արծրունին, որոնցից հիշենք «Մայրենի լեզուն և նրա նշանակությունը դպրոցում»՝ կարդացված ուսուցչական ժողովում 1882 թվականին, ուր հետևելով Կարլ Ֆոխտին, պաշտպանում է այն կարծիքը, թե մայրենի լեզուն ֆիզիոլոգիական պահանջ է ամեն մի ազգի համար՝ իբրև ստեղծագործող ինքնուրույնության գործիք։

Նշանավոր է «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» դասախոսությունը, որը տեղի ունեցավ Թիֆլիսում 1879 թվականին երկու անգամ և հետո «Մշակ»-ի խմբագրության կողմից հրատարակվեց 1894 թվականին առանձին տետրակով։ Գրվածքի մեջ թեև հեղինակը ցույց է տալիս Հայաստանի աշխարհագրության նույնիսկ տարրական մասերում բավականին տգիտություն (օրինակ գրում է Խնիս, Ցիսբիր, Արապկերտ, Զեյթունը կոչում է քաղաք. Հայաստան և հայաբնակ է համարում Ռիզեն, որ Լազիստանի քաղաք է և մեկ հատ հայ էլ չկա, Մեծ Հայք և Բարձր Հայք միևնույն բանն է կարծում և այլն). բայց տնտեսական տեղեկությունները բոլորն էլ ճիշտ են. Արծրունին շատ է բարձրացնում հայի քաղաքակրթությունը, մեզ համարում է Ասիայի գերմանացիներ. իսկ մեր թշվառության և օրեցօր պակասելու պատճառ համարում է միայն ազատ մրցման բացակայությունը և վարչական ճնշումը։ Ազգերն իրենց ազատությունը ապահովելու համար մի միջոց միայն ունեն՝ զինված ապստամբություն։ Եթե հայը մշակութային միջոցով կարողանա առանց զենքի ձեռք ձգել իր համար ազատ կյանք, նա այն ժամանակ աշխարհում պիտի լինի

առաջին բացառությունը և հայերը մի նոր քաղաքական սկզբունք ավետած պիտի լինեն մարդկության։

Այս դասախոսությունը հետո թարգմանվելով գերմաներեն և ռուսերեն լեզուների՝ մատչելի դարձավ նաև օտարներին։

«Այստեղ և այնտեղ» վիպակը հրատարակվեց «Մշակ»-ում 1878 թվականին. Նյութը վերցրած էր համալսարանական հայ ուսանողների կյանքից. այդպիսի մի հարուստ հայ ուսանող էր Սալիմյանը, որ չորս տարի ապրում է մի աղքատ աղջկա հետ, երեխաներ է ունենում, բայց ուսումը վերջացնելուց հետո երեսի վրա է ձգում թե՛ այդ աղջկան և թե՛ իր երեխաներին և Հայրենիքում ամուսնանում է մի հարուստ աղջկա հետ։

«Հավելինա»-ն մի փոքր վեպ է (Թիֆլիս, 1891 թ., 106 էջ), որով Արծրունին ներկայացնում է իր ուսանողական կյանքի պատկերը։ Վեպի հերոսը Արծրունին է, որ Նիցցայում ուսանողության ժամանակ սիրում է մի ֆրանսիացի օրիորդի և խոսք է առնում նրանից ամուսնության համար. բայց օրիորդը մի ուրիշ հարուստ երիտասարդ գտնելով՝ դրժում է իր ուխտը. երիտասարդն ընկնում է խորին հուսահատության մեջ. իր ընկերը, մի ռուս երիտասարդ Ումասով անուն՝ հասնում է նրան օգնության և հորդորում է մոռանալ ամեն ինչ, սիրել գիտությունը, դառնալ Հայրենիք, աշխատել քաղաքակրթության համար, աշխատել ամբողջ ժողովրդի թշվառությունը և այդ ընդհանուր թշվառների ցավի մեջ մոռանալ իր սեփական ցավը։ Երիտասարդը լսում է նրան, մոռանում է օրիորդին և համալսարան է մտնում։ Երբ ավարտում է համալսարանը հաջող քննությամբ, օրիորդը ինքն է դիմում այժմ մերժած սերը վերականգնելու համար. բայց երիտասարդը անողոք է այս անգամ. իր սիրո միակ առարկան հասարակությունն է այժմ։

Արծրունու վեպը գեղարվեստական արժանիքներից զուրկ է. ճոխ լեզու, հուզմունք, պատկերներ կամ բանաստեղծություն չկան այնտեղ. վեպի պատրվակի տակ Արծրունին դարձյալ քարոզում է հասարակական գործունեություն։

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ

«Բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

*Հայ ժողովրդի հեթանոսական շրջանի քանդակագործական արվեստի և պատմության մասին մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել։ Սակայն քրիստոնեության ժամանակաշրջանից սկսած ունենք արդեն բավականաչափ մատենագրական տեղեկություններ և նյութական մշակույթի հուշարձաններ, որոնք բավական լայն գաղափար են տալիս քանդակագործական մոտիվների առաջացման մասին։*

*Քանդակագործական արվեստի զարգացման համար Հայաստանում կային նյութական անհրաժեշտ պայմաններ։ Հայկական լեռնաշխարհը հարուստ է եղել շինաքարերի և շինանյութերի տարբեր տեսակներով (բազալտով, գրանիտով, մարմարով, տարբեր գույների ու տեսակների տուֆ քարերով, շինափայտով և զանազան մետաղներով)։ Այս հանգամանքը նպաստում էր որմնադրության, քարկոփության, քարտաշության, քանդակագործության, փայտամշակության և մետաղամշակության զարգացմանը։*

*Հեթանոսական շրջանում քանդակագործության մեջ օգտագործվում էին քարը, արծաթը, ոսկին, փայտը և այլն։ Գրիգոր Լուսավորիչը, դիմելով հայոց Տրդատ թագավորին, ասում է. «... և ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունս, զքարեղէն, զարծաթեղէն և զոսկեղէն պղնձաձոյլ պատկերացդ, զի սուտ են և սնոտիք»[1]։*

1 Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց»։ Տփղիս, 1909 թ., էջ 121։

*Քրիստոնեության շրջանում քանդակները հանդես են գալիս տարբեր հուշարձանների՝ կոթողների, տաճարների, աշխարհիկ և եկեղեցական շինությունների ու մահարձանների վրա։*

*Միջնադարում հանդես եկող քանդակային մոտիվները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի՝* բուսական, երկրաչափական, կենդանական և կենցաղային:

*Հայաստանում Դ—Է դարերում ծայր առած շինարարական ծավալուն աշխատանքները լայն թափ հաղորդեցին քանդակագործության հետագա զարգացման։ Բավական է նշել, որ սկսած Է դարից հայտնի է ճարտարապետների ու քանդակագործների մի պատկառելի սերունդ։ Այդ բույլքի մեջ փայլել են Զվարթնոցի Է դարի հոյակապ տաճարը կառուցող Հոհանը, Անիի Ժ—ԺԱ դարերի ճարտարապետ և Կոստանդնուպոլսի Այա-Սոֆիայի աշխարհահռչակ տաճարի գմբեթը վերականգնող անմահ Տրդատը, Վասպուրականի և հատկապես Աղթամարի ճարտարապետական կոմպլեքսի կառուցող-ճարտարապետ Մանվելը, Գեղարդա վանքի վիմափոր տաճարների կառուցող անվանի ճարտարապետ Գալձակը (ԺԳ) դ.), Վեցիկ ճարտարապետը Կեչառիսում (ԺԳ դ.), Պողոսը Գոշավանքում (ԺԳ դ.), բազմավաստակ ճարտարապետ, քանդակագործ և գրիչ, հայտնի գիտնական Մոմիկը Սյունիքում (ԺԳ—ԺԴ դ. դ.) և շատ ուրիշներ։*

*Այս շրջանում քանդակագործությունը և ճարտարապետությունը ինքնուրույն զբաղմունք էին դարձել և պատկանում էին ոչ*



Նկար 1

այնքան արհեստի, որքան արվեստի ճյուղին։

Խաչքարային արվեստի ամենածաղկուն շրջանը հանդիսանում է ԺԳ դարը, որպիսի հանգամանքը բացատրվում է երկրում տիրող խաղաղ ժամանակաշրջանում վերսկսած շինարարական աննախընթաց ծավալմամբ։

Թ. Թորամանյանը գրում է, որ ԺԳ դարից ամեզ ժառանգություն են մնում ոչ միայն շինարարական կատարելություններ, այլև ոճերի այնպիսի նշանակալից ու հանդուգն ձևակերպումներ, որոնց համար մենք միշտ հպարտ պիտի լինենք²։

ԺԶ—ԺԷ դարերում խաչքարային արվեստը ծաղկում է Հին Ջուղայում։

Արաքսի ափին պատմական Ջուղան Հայկական խոշոր կենտրոն էր հանդիսանում։ Ահա այստեղի գերեզմանոցում (որը փռված է Արաքսի ձախ ափին ընդարձակ տարածության վրա) գտնվում են կիսով չափ պահպանված, մի քանի հազարի հասնող և տասնյակ կառուցողական ձևերով, յուրահատուկ գեղարվեստական և պատմական արժեք ունեցող խաչքարեր։ Այստեղ մեծ տեղ են գրավում կենցաղային տիպի քանդակային մոտիվները, որոնք արտացոլում են ժամանակի հայկական, մասնավորապես Ջուղայի կենցաղը։

Աշխարհիկ մոտիվներով Ջուղայի խաչքարերը շատ հարուստ են ու արժեքավոր։

Դեռևս 1915 թվականին Հ. Ա. Օրբելին շատ մեծ գնահատական էր տվել Ջուղայի խաչքարերին և դրանց վրա հրավիրել արվեստի բնագավառի աշխատողների հատուկ ուշադրությունը։

Միջնադարյան Հայաստանում քանդակվել ու կանգնեցվել են անհամար քարձրարվեստ խաչքարեր և զանազան կոթողներ։

Հայկական քանդակագործության, մանավանդ խաչքարային արվեստի խոր ուսումնասիրությունն էլ ահա այս ուղղությամբ հետաքրքիր նորություններ կընծայեր միջնադարյան մեր մշակույթի մի շարք բնագավառների՝ ճարտարապետության, քանդակագործության, նկարչության, երաժշտության, ազգագրության և վերջապես մեր պատմության տարբեր բնագավառների ուսումնասիրության տեսակետից։



Նկար 2

² Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942 թ., Ա հատ., էջ 54։

*Բայց դժբախտաբար մեր արվեստի պատմության այս բնագավառը շատ քիչ է ուսումնասիրված։ Այդ մասին քիչ, բայց արժեքավոր դիտողություններ կան մեծանուն և վաստակավոր գիտնականներ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու, Կիլիկիայի Հանգուցյալ կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի, ճարտարապետ Թ. Թորամանյանի և այլոց աշխատություններում։*

*Ներկա աշխատությամբ փորձում ենք տալ Հայկական խաչքարային արվեստի ծագման, նրա զարգացման առանձնահատկությունների, քանդակագործական մոտիվների, նրանց կիրառական նշանակության և պատմության ավելի լայն մի ուրվագիծ։*

## ԽԱՉՔԱՐԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

*Խաչքարերը, որպես հայ արվեստի յուրահատուկ երևույթ, սպառիչ կերպով ուսումնասիրված չեն եղել։ Հայ գիտնականներից ոմանք տարբեր ենթադրություններ են արել խաչքարերի ծագման և նրանց կիրառական նշանակության մասին։*

*Մ. Աբեղյանը գտնում է, որ խաչքարերը և խաչերը կանգնեցվում էին վանքերի և կամ գյուղերի մոտ, կամ էլ բլուրների վրա, որպեսզի տարաժամ կարկուտը, ձյունը չվնասեն բերքին և կամ էլ երաշտ տարիներին պատուհաս հրեշտակը պատկառի խաչից և բերքին վնաս չհասցնի։ Իսկ հեթանոսության ժամանակ էլ նույն ձևով կանգնեցնում էին աստվածների արձանները, որոնք քրիստոնեության շրջանում վեր են ածվել ցասման խաչերի[3]։*

*Խոսելով խաչքարերի ձևի, հնագույն նմուշների մասին, Թ. Թորամանյանը գրում է. «Գալով գերեզմանների վրա կանգնված խաչքարերի ձևին, նրանք առհասարակ տապանաքարերի արևելյան կողմը խորանարդ կամ աստիճանավոր պատվանդանի վրա կանգնված երկար քառակուսի հաստ քարե տախտակներ են, որոնց արևմուտք նայող ճակատի վրա քանդակվում է խաչի պատկերը շրջապատված զանազան քանդակագործությամբ, դարի ճաշակի համաձայն։ Այս ձևի խաչքարերի մեջ իմ տեսածներից ամենից հինը հազիվ Ժ դարի սկզբին հասնի։ Իսկ նրանից առաջ հավանական է, որ եղած լինեին խորանարդ պատվանդանի վրա կանգ-*



Նկար 3



Նկար 4

---

3 Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողները իբրև «Աստղիկ-Դերկետո» դիցուհու արձաններ», Երևան, 1941 թ., էջ 25։



Նկար 5

նրված քառակուսի սյունանման կոթողներ զանազան բարձրությամբ[4]։

Թ. Թորամանյանը ենթադրում է, որ է դարից մինչև Ժ դարը քառակող կոթողներն էին «հայոց տապանաքարերի ձևը»։

Խաչքարերին և նրանց նախորդը հանդիսացող կոթողներին «հիթիթյան» կամ «հաթյան» ծագում է տալիս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, ավելացնելով, որ այդ փոխանցումը կարող է անմիջական լինել կամ միջնորդաբար[5]։

Ահա սրանք են մոտավորապես մեր պատմագրության մեջ մեզ հայտնի մտքերը։ Եղել են սակայն մի շարք այլ ենթադրություններ, ըստ որի խաչքարերը և նրանց նախորդ կոթողները առաջացել են մենհիրներից (երկար քարերից)։ Եվ հիրավի, խաչքարերը սկզբնական շրջանում հանդիսանալով միաժամանակ պաշտամունքային առարկաներ, ամենայն հավանականությամբ կարող էին սերվել մենհիրներից և կոթող արձանագրություններից։ Հայաստանում մեգալիթյան (մեծաքարային) հուշարձանները, հատկապես մենհիրները հանդիսացել են պաշտամունքային կոթողներ։ Այդպես է եղել այլուր՝ Ֆրանսիայում, Ջատկի կղզում, Իսպանիայում և այլն (Համբարձման կղզում ամենախոշոր մենհիրը 22 մ. բարձրություն ունի։ Նույնը և Եգիպտոսում) (Նկար 1)։

Սակայն մենհիրները ոչ միայն կանգնեցված են եղել կրոմլեխների (մեծ քարերի) կենտրոնում, ինչպես կարծում է Թ. Թորամանյանը[6], այլև առանձին կամ խմբերով։

Մեզանում պաշտվել է և ջրի աստվածությունը ի դեմս Աստղիկ-Դերկետո ցլցուհու արձանների՝ ձկնակերպ կոթողների[7]։

Հնագույն կոթող-արձանագրություններից մենք ունենք դեռևս ուրարտական շրջանից, որի նմուշներից լավագույնը հանդիսանում է 1916 թվականին Հ. Ա. Օրբելու հայտնաբերած ուրարտական Սարդուր Բ թագավորի խորանարդաձև պատվանդանի վրա կանգնեցրած քառակող կոթողը, որի 4 կողերի



Նկար 6

[4] Թ. Թորամանյան, «Տեկորի տաճարը», Թիֆլիս, 1911 թ., էջ 215։

[5] Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Գ, Նյու-Յորք, 1944 թ., էջ 125—126։

[6] Թ. Թորամանյան, «Նյութեր...», Ա հատ., էջ 10։

[7] Մ. Աբեղյան, «Վիշապներ», էջ 77—78։

*վրա քանդակված է 265 տող արձանագրություն, որն իր ձևով շատ նման է, թեև արտաքուստ, հայկական քառակող կոթողներին (ստելա) (Նկար 2)։*

*Որ Հայաստանում հեթանոսության շրջանում կանգնեցված են եղել քառակող կոթողներ, այդ մասին վկայում է Մ. Խորենացին իր աշխատության մեջ, որտեղ պատմըվում է, թե ինչպես Արտաշես Ա թագավորը հրամայում է. «Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել ի չորեքկուսի, և պնակաձև փոսել ընդմէջն, ծածկելով յերկրի, և չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»[8]։ Սրանք իհարկե մեզ ծանոթ քառակող կոթողները չեն, սակայն հիշեցնում են դրանց նախատիպերը։ Իսկ եթե դրանց ավելացնենք նաև մեզ հասած խորանարդաձև պատվանդանների վրա քառակող կոթողների այն հնագույն նմուշները, որոնց քրիստոնեական լինելը վիճելի է, ա-*



Նկար 7

8 Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 185։



Նկար 8

*պա և պարզվում է այն, որ խաչքարերի նախատիպերը հանդիսացող քառակող կոթողների գրեթե բոլոր աստիճանները մեզ մոտ Հայաստանում եղել են։ Հայաստանում ցարդ գտնված քառակող կոթողները համարվել են որպես քրիստոնեական շրջանի հուշարձաններ, բացի մի երկուսից, որոնք ըստ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, «կարող են հեթանոսական շրջանին պատկանել»[9]։*

*Քառակող կոթողները, ինչպես ճիշտ նկատել է Գ. արքեպիսկոպոս Հովսեփյանը, գրեթե միշտ էլ եղել են բազիլիկ եկեղեցիների, այսինքն հնագույն եկեղեցիների մոտերքում։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ այդ կոթողները քրիստոնեական շրջանի հուշարձաններ չէին կարող լինել միայն, այլև այն, որ այդ քրիստոնեական բազիլիկ եկեղեցական շինությունները էլ, դրանց շինարարական այդ ձևերն էլ հանդիսացել են հեթանոսական շրջանից մեզ փոխանցվող մշակույթ, սկզբում լոկ շինարարական ձև և ա-*

9 Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր...», Դ պրակ, էջ 125։

սույն օրինակ գործեաց և բազմացոյց զեկեղեցիս».— վկայում է Ագաթանգեղոսը[10]։

Նույն միտքն է հաստատում Փավստոս Բյուզանդ պատմիչը. «Քանզի այսպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն և ապա յանուն սստուածութեան սրբեցան և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք»[11]։

Այդ մասին է վկայում նաև Պրոկոպեոս Կեսարացին, ըստ որի Երիզայում «Ոսկի կոմունա կոչուէին երկու մեհեանքն, մին Արտեմեայ, միւսն Իփիգենեայ և առանց փոփոխութեան շինուածոյն փոխուեցան յեկեղեցիս»[12]։

Ելնելով վերոհիշյալ փաստերից, կարելի է համարձակորեն ենթադրել, որ վաղ քրիստոնեական շրջանում կանգնեցված քառակող կոթողներն էլ իրենց հիմքում, իրենց ձևերով



Նկար 9

պա որոշ չափով որպես պաշտամունքի բովանդակություն։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ երբ քրիստոնեությունը Հայաստանում Դ դարի սկզբին պետական կրոն հայտարարվեց, ինքնին հասկանալի է, որ միանգամից հնարավոր չէր անմիջապես ինչ որ նոր տիպի շինարարություններ, եկեղեցիների և կամ հնագույն կոթողների ձևեր ստեղծել։

Դրա համար էլ քրիստոնեական այդ ժամանակաշրջանի եկեղեցիները որոշ չափով նման էին լինելու, ճարտարապետական ձևի տեսակետից, նախկին կրոնական շինություններին, կամ էլ կառուցվելու էին նախկին տաճարների վայրերում, նրանց փլատակների և կամ նրանց հիմքերի վրա, իսկ որոշ դեպքերում էլ հնարավոր էր մի փոքր վերամշակումով մեհյանները հարմարեցնել Քրիստոնեական եկեղեցու պահանջներին։

Այդ մասին են վկայում մեր մի շարք պատմիչների արժեքավոր պատմական վկայությունները. «Սոյնպէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն, սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և յամենայն տեղիս, յաշխարհս և ի գաւառս առհասարակ,



Նկար 10

10 Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», էջ 439։

11 Փ. Բյուզանդ, «Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1883 թ., էջ 7։

12 Տես Ալիշանի, «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց», Վենետիկ, 1910 թ., էջ 293—294։

և չափելով (հիմնականում 1—3-ի համեմատությամբ) հանդիսանում են հեթանոսական շրջանում կանգնեցված նման կոթողների եթե ոչ պատճենները, այլ նրանց նմանօրինակները և կամ այլափոխված ձևերը։

Այս տեսակետից էլ, քիչ չեն այնպիսի կոթողները, որոնց վերաբերյալ հայտնված կարծիքները վերանայման, վերաուսումնասիրման կարիքն ունեն։ Վերցնենք, օրինակ, Թալինի շրջանի Գառնհովիտի քառակող ծանոթ կոթողը (Նկար 3), որն իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Ուսումնասիրողներից Գ. արքեպիսկոպոս Հովսեփյանն այն համարում է քրիստոնեական և կոթողի առաջին երեսի պատկերաքանդակը (Նկար 4) վերագրում է Աբրահամ նահապետի Իսահակ որդու զոհաբերությանը, իսկ երրորդ երեսի մոտիվը (Նկար 5) եզակի է համարում, որպիսին ոչ մի այլ տեղ չի հանդիպել[13]։

Հետաքրքիր է, որ նույն այդ կոթողի առաջին երեսի պատկերաքանդակը Ռ. Առաքելյանը վերագրում է Գրիգոր Լուսավորչին, որի առաջ գտնվող մարդկային մոտիվն էլ՝ Տասնաբանյա պատվիրանների տախտակի սիմվոլիկ պատկերին[14]։

Թ. Թորամանյանը այս կոթողը հեթանոսական է համարում։ Ուսումնասիրողներից Ա. Ճ. Մնացականյանը կոթողի երրորդ երեսի թեման թեև հեթանոսական, մինչև անգամ պտղաբերության աստվածուհին է համարում, ձեռքին բռնած որպես թե զույգ ծաղկի մոտիվը, բայց կոթողի քանդակման ժամանակաշրջանը քրիստոնեական է համարում, ելնելով կոթողի չորրորդ երեսին քանդակված խաչից (Նկար 6)[15]։

Վերլուծելով մինչև այժմ մեզ հայտնի քառակող կոթողների քանդակային մոտիվների արդյունքները, պետք է հեթանոսական մոտիվ համարել հիշյալ կոթողի չորրորդ երեսի պատկերաքանդակը, որովհետև ոչ մի այլ տեղ նման մոտիվի չենք հանդիպում և քրիստոնեական նման թեմա էլ չկա, որով կոթողը պետք է վերագրել Դ դարին։

Մինչև է դարը մեզանում գերիշխում էին նման քառակող կոթողները, նախքան խաչքարերին անցնելը։ Նման կոթողներ շատ կան Հայաստանում իրենց տարատեսակներով հանդերձ, որոնցից հետաքրքիր են Ավանի աստիճանաձև պատվանդանով կոթողը (այժմ կոթողն անհայտացած է, մնում է աստիճանաձև պատվանդանը), Ալավերդու Թումանյան գյուղի հայտնի կոթողը (Նկար 7)[16]։



Նկար 11

13 Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր...», պրակ Գ, էջ 85—86։

14 Ռ. Առաքելյան, «Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դ. դ.», Երևան, 1949 թ., էջ 49։

15 Ա. Ճ. Մնացականյան, «Հայկական զարդարվեստ», Երևան, 1955 թ., էջ 82։

16 Թումանյանի հիշյալ քառակող կոթողն ունի 2,71 մ. բարձրություն և 0,40—0,42 մ. լայնք, պատվանդանի հետ ընդհանուր բարձրությունը 4,61 մ. է։ Կոթողի վերին մասում փոքրիկ անցք կա, որի վրա ինչ որ խոյակ է դրվել։ Հետագայում, 1283 թ., պատվանդանի արևմտյան ճակատին քանդակել են խաչ և մի արձանագրություն այսպես՝ «Ես Վարհամ զաստառ շինար Գանն (շինականն?) թողի վկա ապենայնգ, կայ (?) և ես հորիշան։ Ով խափանէ, ՅԺԸ։ Հայրապետացն նզովեսցի։ Տր Ած ողորմի Մխիթար Զէթօ»։



Նկար 12

Աշտարակի Օհանավան գյուղի քառակող կոթողը (Նկար 8), Արդվիի, Անգեղակոթի, Կողբի կոթողները և այլն։

Կոթողները կերտվում էին բազալտ, ֆիլզիտ, տուֆ և այլ քարերից, իսկ նույն ժամանակներում թևավոր խաչարձանները՝ սկզբում փայտից և ապա զանազան քարերից, ոսկուց, արծաթից և այլ մետաղներից։ Վերջինները համեմատաբար փոքր էին և պահվում էին վանքերում, եկեղեցիներում։

Որ սկզբում խաչերը փայտից էին պատրաստվում և ոչ լավ մշակված, վկայում է Մ. Խորենացին. «բայց ի վերայ նոցա յարեաւ նախարարք քաղաքին, եթէ զով արդեք փոխանակ կռոցն երկրպագեմք. ուսան եթէ նշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնեցին ի վերայ վայելուչ բլրոյն յարեւելից կողմանէ քաղաքին, մեկուսի բաժանեալ և նա փոքրագոյն գետով։ Եւ երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւօտն նոյնպէս ի տանեաց իւրաքանչիւր։ Բայց յորժամ ելեալ ի բլուրն տեսին փայտ կոփեալ՝ ոչ ճարտարաց ինչ գործ, յոլովք քան զսակաւս արհամարհեցին, իբր թէ այսպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա. և թողեալ ի բաց գնացին»[17]։

Վերև հիշատակված քարե թևավոր խաչերից հայտնաբերված են Օձունում (Ալավերդու շրջան), Դվինում, Կողբում, Արզնիում, Ջրվեժում և այլն։ Թևավոր խաչերը բացի այն, որ դրվում էին խորանարդաձև և կամ աստիճանաձև պատվանդանների վրա, երբեմն էլ դրվում էին եկեղեցիների պատերի մեջ, որոնք, ըստ Կ. Ղաֆադարյանի, տարածված են եղել Ե—Է դարերում (Նկար 10)[18]։

Այս բոլորից հետո հարց է ծագում, թե ե՞րբ և ինչպե՞ս են առաջացել հիշյալ կոթողներից և թևավոր խաչերից մեզ ծանոթ խաչքարերը։

Թ. Թորամանյանը Ժ դարից այն կողմ չի տանում հնագույն խաչքարերը, իսկ կոթողներն էլ հասնում են մինչև Է դարը, կանգնեցված Ե—Է դարերի բազիլիկ եկեղեցիների մոտ։

Արաբական ավերիչ արշավանքները Է դարից սկսած մեծ հարված հասցրին նաև հայ ժողովրդի խաղաղ, շինարարական աշխատանքներին։ Ը դարը ևս նպաստավոր չէր ստեղծագործական աշխատանքին։ Արդեն Ը դարից գրավոր հիշատակարաններ ունենք, թե ինչպես արաբները խորտակում են «զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Տեառն մերոյ և Փրկչին և նորին աշակերտացն», կամ «զնմանութիւն պայ-

17 Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 233—234։

18 Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952 թ., էջ 146։

*ծառացեալ խաչին Քրիստոսի», որ հատկապես եկեղեցուց դուրս եղած արձաններին կամ կոթողներին կարող է վերաբերվել[19]։ Մատենագրական այս տեղեկությունները էլ պետք է իբրև լուսաբանություն ծառայեն մեր կոթողների վերջին շրջանը որոշելու համար։*

*Նյութական մշակույթի հուշարձանների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբական տիրապետության վերջին շրջանում և հատկապես Թ դարի սկզբին քառակող կոթողները, ինչպես նաև նախկինում տարածված թևավոր խաչերը զիջում են իրենց տեղերը խաչքարերին, որոնք արդեն տիրապետող են դառնում հետագա դարերում, երբ այլևս ասպարեզից ընդմիշտ հեռանում են քառակող կոթողները և թևավոր խաչերը։*

*Թ դարում, Բագրատունյաց թագավորության հաստատումով և հայ իշխանական տների հզորացման պայմաններում, Հայաստանում առաջանում են տնտեսական զարգացման և ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորություններ։ Ծայր առած շինարարական բուռն զարգացման հետ մեկտեղ, բնականաբար պետք է զարգանար նաև կոթողաշինությունը, այսպես կոչված խաչքարային արձանաշինությունը։ Սակայն դա հին ձևով չէր կարող զարգանալ։*

*Նախ, որ Դ—Է դարերի քառակող կոթողները, լինելով համեմատաբար երկարավուն 1—3-ի համեմատությամբ և նույնիսկ ավելի, մեծ անհարմարություն էին ներկայացնում բնականոն խաչի ձև ստանալու համար։ Այսպես, օրինակ, Նկար 11-ի քառակող կոթողի վրա խաչաձև քանդակելը խիստ դժվարանում է նրանով, որ խաչի ուղղահայաց թևերը, երկար լինելով, դժվարացնում են հորիզոնական թևերի համաչափ ստացումը։ Ինչպես տեսնում ենք նկարից, խաչի հորիզոնական թևերը խիստ կարճ լինելով, այն հազիվ նկատվում է և տգեղացնում խաչը։*

*Մի ուրիշ հանգամանք ևս պահանջում էր քառակող կոթողից անցնելու հետագա խաչքարային ձևին և չափերին։ Դա այն էր, որ քառակող կոթողը 4 հավասար ճակատներ ունենալով, զրկված էր գլխավոր ճակատ ունենալու և հարմար տեղադրվելու հնարավորությունից։ Հայկական եկեղեցու խորանը նայում էր դեպի արևմուտք, դեպի հավատացյալը։ Պահանջվում էր, որ քառակող կոթողը ևս նույնպիսի դիրք ընդուներ, որպեսզի մատչելի դառնար նայողին, բայց այդ հնարավոր չէր քառակող լինելու պատճառով։ Մինչդեռ խաչքարը, որն ունենալու էր միայն մի ճակատ, կարող էր բավարարել հավատացյալի պահանջը։ Ահա և խաչքարի այս նոր ձևն էլ հնարավորություն էր տալիս նրա ճակատը ավելի գեղեցիկ մշակելու և քանդակելու համար կենտրոնական խաչը։ Այսպիսով, խաչքարի համար պահանջվում էր քարե տախտակներ մոտավորապես 1—2-ի համեմատությամբ, որպիսի դեպքում խաչաքանդակը շատ հարմար կարող էր տեղավորվել իր բնական չափերով նրա վրա և այդ երեսը դարձնել դեպի արևմուտք, եկեղեցու խորանի դիրքով։ Հնարավորություն էր ստեղծվում նրա վրա քանդակել համապատասխան ավելի հարմար մոտիվներ, վիմական անհրաժեշտ արձանագրություններ։*

*Է—Ը դարերի քառակող կոթողներից գիտենք, որ նրա հիմնական երեսի վրա խաչաքանդակից բացի քանդակվում էին նաև բուսական և երկրաչափական մոտիվներ, ընդ որում խաչի հորիզոնական թևերի վերևից կախվում են խաղողի ողկույզ-քանդակներ, իսկ հորիզոնական թևերի ներքևից* տերևաքանդակներ (Նկար 12)։

*Հետևությունն այն է, որ արդեն մշակված, ձևավորված էին ապագա խաչքարի քանդակային հիմնական մոտիվները և խաչի ձևավորումը։ Խաչքարային քանդակագործության այս ձևն էլ ահա հետագայում դարձավ գերիշխող, բայց խիստ կերպով ոճավորված և որոշ բարեփոխության ենթարկված։*

*Սկզբնական շրջանում, այսինքն Թ դարից, խաչքարերը կերտվում էին բավականին կոպիտ, քանդակային աղքատիկ մոտիվներով. պարզ խաչը կանգնեցնում էին հողի մեջ խրած, իսկ հետագայում՝ հատուկ պատվանդանների վրա, երեսը դեպի արևմուտք դարձած, և կամ էլ եկեղեցիների արևմտյան պատերի մեջ ագուցված։*

*Եվ այսպես, երկարատև ու աստիճանական զարգացման հետևանքով, հնագույն կոթողները վերածվեցին խաչքարերի, որպես հայ արվեստին միայն հատուկ նոր և յուրահատուկ հուշարձանների, որոնցից հայտնաբերված հնագույն նմուշները թվակիր արձանագրությամբ պատկանում են Թ դարին, ինչպես կտեսնենք քիչ հետո։*

(Շարունակելի)

19 Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր...», Գ պրակ, էջ 127։

Ս. ՓԱՉԱՃՅԱՆ

# ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Սոֆիան (Հռոմեական Սերտիկան) շատ հին ժամանակներէ ի վեր եղած է ռազմագիտական կարևոր հանգրվան մը Արեւմուտքէն դէպի Արևելք գացող հռոմեական գլխավոր ճանապարհին վրա։ Իր այս հանգամանքին համար նախապես հռոմեական լեգեոնները, հետո բյուզանդական և ապա օսմանյան բանակները այս բերդաքաղաքը գործածեցին իբրև զինվորական կայան և ռազմական պարենավորման կեդրոն։

Սոֆիան իբրև վաճառականության կեդրոն միջին դարեն հետո է, որ կսկսի բարգավաճիլ։ Ապա հայ Թոնդրակեցի աղանդավորներ, գաղթականներ և զինվորականներ բյուզանդացիներու կողմե կբերվին և կբնակեցվին այս քաղաքի շրջաններուն մեջ՝ Մոկլեն, Դիվոլիա, Դրիագիցա և այլուր։ Այս պատմական իրողությունը կհաստատվի Օրխիդայի բուլղար արքեպիսկոպոս Թեոփիլակտի նամակներեն (1107) և հաջորդ տարիներուն Դրիագիցայի (հին Սոֆիայի) եպիսկոպոսին ուղղրված նամակներեն, ինչպես նաև Տիվան անուն հայ երեցի մը և Մոկլենի եպիսկոպոս Իլարիոնի վարքագրություններեն, ուր կշեշտվին Սոֆիայի, Մոկլենի և Դիվոլիայի շրջաններուն մեջ բազմաթիվ հայերու գոյությունը և նշանակելի թիվը ԺԲ դարուն և անոնց ունեցած եկեղեցիները[1]։

Բայց դժբախտաբար այդ դարաշրջաններու հայկական եկեղեցիներեն որևէ գրավոր հիշատակարան կամ արձանագրություն չէ հասած մեզ։ Այդ եկեղեցիներու դիրքն ալ ճշտել անհնարին եղավ մեզի։

1107 թվականեն հետո, մինչև ԺԶ դար, նորեն որևէ գրավոր հիշատակություն չկա արձանագրված Սոֆիայի հին հայերու մասին։

1559 թվականին Սոֆիայի մեջ հիշատակված հայ համայնքի մը առաջին հիշատակությունը կընե ճանապարհորդ Հանս Դերնշվամը, որ կանցնի Սոֆիայեն դեպի Կոնստանդնուպոլիս երթալու համար և Սոֆիայի մեջ կգտնե 1000-են ավելի հայեր[2]։

Օսմանյան թուրքերը, երբ 1387-ին Սոֆիան գրավեցին, հայերու խոսք չեն ըներ։ Թուրքերու հրամանատար Մուրադ փաշա և Կարաճա բեկ, սուլթանին ուղարկած իրենց զեկուցագրին մեջ, միայն բուլղարներու անուններ հիշած են։

1559-ին Դերնշվամսի Սոֆիայի մեջ տեսած ավելի քան 1000 հայերը գաղթականներ կամ օսմանցի սուլթաններու հրամանով բերված արհեստավոր հայեր պետք է ըլլան։ Օսմանցի սուլթաններն ալ Բյուզանդիոնի կայսրերու վարած քաղաքականության հետևելով՝ նոր նվաճած քաղաքներու բնակչության մեծամասնությունը նվազեցնելու և աշխատավոր ձեռքեր, արհեստավորներ ապահովելու համար Փոքր Ասիայեն ու միայն թուրք բազմություններ կբերեին, այլև հայեր և ուրիշ ժողովրդական տարրեր։

Շատ հավանական է, որ Սոֆիայի առաջին հայկական խումբը թուրքերու կողմե բերված

---

[1] «Писмата на Теофилакта Охридски, прев. от гръцки митр. Симеон Варненски и Преславски», София, 1931, стр. 22, 23, 28, 29:—Д. Цуклев, «История на Бьлгар. Церква», София, 1911, стр. 939, 943:—Проф. Иордан Иванов, «Богомилски книги и легенди», София, 1925, стр. 19.

[2] Hans Dernschwams, «Tägebuch einer Reisnach Konstantinopel und Kleinasien», edit. Fr. Babinger, 1923, p. 253:

*է՝ Սոֆիան շենցնելու և Թուրք բանակին այլևայլ ծառայություններ ընելու համար։*

*1610-ին նոր գաղթականություն մը Փոքր Ասիո Ջալալիներու խժդժություններեն փախչելով՝ եկած ապաստանած պետք է ըլլան նաև Սոֆիա, ըստ Գր. Դարանաղցիի ժամանակագրության։ Այս գաղթականներուն վրա հաջորդաբար եկած ավելցած են նաև Կաֆայեն եկող և Վառնայի վրայով Սոֆիա անցնող արևելահայերը։ Կաֆայի և Ղրիմի կողմերը մեծ սով կտիրեր, որով այնտեղի հայերը սովեն նեղվելով լվեցին դեպի հարավ, տարածվելով Բալկաններու մեջ, մինչև Բելգրադ։ «Եւ ի լինել սովին ոմանք Ստամբոլ եկին և ոմանք ի Պելըրդատ[3]։*

*Ճանապարհորդ Քիառոմանի Յոխան, որ 1623 թվականին անցած է Սոֆիայեն, իր նամակներուն մեջ կգրե, թե բազմաթիվ հայեր կապրին Սոֆիայի մեջ[4]։*

*Սոֆիայի մեջ առաջին հայկական եկեղեցիի մը գոյության մասին առաջին անգամ կխոսի կաթոլիկ եպիսկոպոս Պետր Բոգդանը, որ կըսե, թե 1640 թվականին Սոֆիայի մեջ կար 8000 բնակարան, որոնցմե 200 տունը հայեր էին (շուրջ 1000 հոգի)։ Այս հայերը ունեին իրենց առաջին եկեղեցիները, իրարմե բաժնված էին և մեկը մյուսին կմեղադրեր իբր հերետիկոս[5]։*

*Հետաքրքրական է գիտնալ, թե որոնք էին այս իրարու հակառակ և իրար իբրև հերետիկոս մեղադրող հայկական եկեղեցիներու համայնքները։ Շատ հավանաբար Սոֆիայի մեջ կապրեին եկեղեցիին հավատարիմ հավատացյալ հայեր, ինչպես նաև հայ-հռոմներ։*

*1600—1690 թվականներուն (ԺԷ դար) Սոֆիայի մեջ ապրող հայերու մասին արժեքավոր տեղեկություններ կուտա պրոֆ.-դոկտ. Ա. Իշիրկով՝ քաղելով Թրքական (սիճիլագ) արձանագրություններեն. «Թայց հայերը մասնավորապես շատ տարածվեցան մեր հայրենիքի (Բուլղարիա) գլխավոր քաղաքներուն մեջ Թրքական տիրապետության ժամանակ իբրև վաճառականներ, արհեստավորներ և պետական ծառայողներ։*

*ԺԷ դարուն Սոֆիայի զարգուն վաճառականությունը այստեղ քաշեց բերավ բազմաթիվ հայեր, որոնք Սոֆիայի մեջ ունեին իրենց սեփական համայնքը և եկեղեցին Տեր Գրիգոր անուն քահանայով* (էրմենի բայրֆասը վե ճեմաաթը վե էրմենի փափազը Գրիգոր):

*Հայերու մեծ մասը կզբաղեին արհեստներով, մասնավորապես ձուլագործությամբ* (դյոքմենիան էսնաֆը) *և հացագործությամբ* (ֆրունճիան էսնաֆը)*։ Այս վերջիններուն իբր պետ կհիշվի հայ երեցի մը՝ Վարդազարմյան։*

*Հացագործ արհեստավորներու անդամներն էին Թուրքեր, հայեր և ռայա (սերուկ) բուլղարներ։ Աթ-Բունար կոչվող վայրին (Թաղամաս) մեջ գործող հացագործներուն վարպետգլուխն էր «հայ Օհաննեսը»[6]։*

*Կաթոլիկ եպիսկոպոս Պետր Բոգդանի 1640-ին հիշած հայկական եկեղեցին և Թրքական* սիճիլադներու *մեջ հիշված եկեղեցին պետք է ըլլա այն գետնափոր մատուռ-եկեղեցին, որ 1673-ին հիշված է նաև Մարտիրոս վարդապետ Կաֆացիի կողմե ալ. Մարտիրոս վարդապետ Կաֆայեն Երուսաղեմ երթալու ժամանակ Սոֆիայեն կանցնի և կհանդիպի Սոֆիայի եկեղեցին։ Այնտեղ կգտնե Տեր Հովհան անունով քահանա մը, որուն եկեղեցականի անվայել վարքն ու բարքը կձաղկե հետևյալ քառյակով.*

*«Անուն իւրեան կոչեն Յունան,*
*Ի հաւատոյ դատարկ, ունայն,*
*Ջօրն ի բուն շրջի ի մեխանան,*
*Տգմաթաւալ խոզի նմանն»[7]։*

*Սոֆիայի հայոց այդ հին եկեղեցիի մասին պատմագիր Իրեչեկ ալ կխոսի 1883-ին. «Սոֆիայի մեջ, կան յոթը եկեղեցիներ, որոնցմե ամենագետնափորը հայկական եկեղեցին է, որ յոթ սանդղամատով վար կիջնե»։*

*Հայկական եկեղեցիին գտնված վայրը նախապես կկոչվեր* «Արմենսկա մանալա» *(հայկական Թաղ), ուր 1934-ին շինված են բուլղարական հոգևոր ճեմարանը և գատական պալատը։ Այս հայկական հին եկեղեցիին փոխարեն հետո, Սոֆիայի միտրոպոլիտ Ստեֆան Սոֆիրոքիի համառ պահանջքներուն հետևանքով, Սոֆիայի հայերուն տրվեցավ Նիշքա և Դրագոման փողոցներու անկյունը պարապ հողամաս մը 750 քառ. մետր տարածությամբ, որտեղ հայեր կառուցին իրենց երկրորդ եկեղեցին և դպրոցը (այժմ՝ Ազգային տունը և Հովակիմյան դպրոցը, որ նախապես Արամյան կկոչվեր և հիմնված էր 1896-ին)։ Սոֆիա հաստատված հայերուն մեկ մասն ալ գաղթած է 1700—1710 թվականներուն, Ակնա շրջանեն (Արուչեխ գյուղ)։ Սակայն հետաքրքրական է, որ հայոց հին գերեզմանոցեն եկեղեցվո բակը բերված տապանաքա-*

---

3 Գրիգոր Դարանաղեցի, էջ 86։

4 *Տե՛ս* Յոխան Վիլդի *տպագրած նամակներու գիրքը, էջ 37, 1659 թ., Նյուրնբերգ։*

5 *Տե՛ս* Спис. «Архив за поселищни проучвания год», II, кн. 2, 1930—1940 гг., стр. 182, 183.

6 *Տե՛ս* «Град София през 17 век». София, 1912, стр. 48, 61:

7 Տե՛ս Հ. Մ. Պոտուրյան, *«Նավասարդ» տարեգիրք, Բուքրեշ, 1923—1924։*

րերուն վրա բնավ Ակն կամ Արաբկիր անուն-ները չեն հիշատակված։

Հին եկեղեցվո բակին մեջ կան սալարկված 10—11 տապանաքարեր, որոնցմե ութը հա-տը մարմարիոն, իսկ մնացյալները տեղա-կան պարզ քարեր էին։ Մարմարյա տապա-նաքարերեն միայն հետևյալ երեք հատը ըն-թեռնելի էին.

1) Նայեցարուք ծնունդ յերկրի
Ի սոյն տապանս որ տեսանի.
Ծածեալ կայ աստ ի պահեստի
Մարմին առն բարեպաշտի։
Սա էր երկրէն Նախիջևանցի.
Տօլօնց Աւետիքի որդի Ծատուրի,
Որ փոխեցաւ առ Աստուած
Ի թվին ՌՃՀԹ սեպտ. ԺԲ։
(1730 սեպտ. 12):

2) Այս է տապան հանգստեան
Շառօթեցի Ծավրումենց
Աւետիսի որդի Ալեքսանի,
Որ փոխեցաւ ի թվին ՌՄԲ
Դեկտեմբեր ամսու ԻԲ։
(1753 դեկտ. 22):

3) Այս է տապան հանգստեան
Կանանիոսի որդի հանգուցեալ
Օյաննէսի, որ փոխեցաւ աստէն
Ի կեանս թվին հայոց ՌՄԿԳ
Յուլիս ԺԵ-ին։
(1814 հուլիս 15):

Առաջին երկու տապանաքարերը կպատկա-նին արևելյան Հայաստանեն եկած և Սոֆիա հաստատված հայերու. թեև արհեստ և զբա-ղում չէ հիշված, սակայն քարերուն մարմար-յա ըլլալը ցույց կուտա, որ անոնք վաճառա-կաններ կամ բարեկեցիկ հայեր եղած են, իսկ մնացյալ պարզ քարերը պետք է եղած ըլ-լան աշխատավոր հայերու տապանաքարերը, որոնք անընթեռնելի են՝ մաշված լինելով։

Այդ երեք մարմարյա տապանաքարերեն մին զետեղված է նոր եկեղեցվո աջակողմյան պահարանին մեջ կառուցված մկրտության ավազանին քով, երկրորդը հայոց գերեզմա-նատան մեջ կծառայե հանգստաքար, որ դըր-ված է մատուռի արևելյան պատին առջևը, իսկ երրորդը ձգված է Ազգային տան բակին աղբյուրին քովիկը, մի քանի պարզ տապա-նաքարերու հետ խառնիխուռն։

Սոֆիայի հայոց հին եկեղեցվո շինության ճշգրիտ թվականին մասին որևէ արձանա-գրություն կամ փաստաթուղթ գոյություն չու-նի, սակայն հավանական է, որ շինված է 1600-ական թվականներուն։ Ուրեմն հայոց եկեղեցիի գոյության իբր հաստատ թվական կրնանք հիշել 1640 թվականը։ Կենթադրվի, թե հայոց առաջին եկեղեցիի շինության ար-տոնությունը և սուլթանական արտոնագիրը (իրադեն) առնված է ԺԷ դարուն ապրող նշա-նավոր Աբրո Չելեբիի (Աբրահամ) կողմե։ Սակայն այստեղ կա պարզապես պատմա-կան շփոթություն մը, որովհետև Ֆիլիպե (Պլովդիվ) հաստատվող կամենացի լեհահա-յերու շինած (1675-ին) առաջին եկեղեցիի սուլթանական արտոնագիրը իսկապես Աբրո Չելեբին հաջողցուցած է, տրված ըլլալով, որ ան այդ թվականներուն Օսմանյան գահին վրա գտնվող սուլթան Մեհմեդ Դ-ի բանակին մատակարարությունը հաջողցուցած էր Կրե-տե կղզիին գրավման ժամանակ, իսկ սուլ-թան Իբրահիմի կողմե ալ խաքքը շերիֆով ազատ վաճառական հռչակված էր ռուսաց և եվրոպական երկրներու համար[8]։ Սակայն Աբրո կամ Աբրահամ Չելեբին ապրած է 1626—1681 թվականներուն, իսկ Սոֆիայի հայոց եկեղեցին գոյություն ունի արդեն 1640-ին, որով եթե նույնիսկ 1640-ին կա-ռուցված ըլլա եկեղեցին, դարձյալ Աբրո Չե-լեբի չի կրնար այդպիսի արտոնություն մը ձեռք բերել, քանի որ ինքը հազիվ 14 տարե-կան եղած կըլլա 1640-ին։

1800-ական թվականներուն Սոֆիայի հա-յերը իբրև վաճառականներ[9] և արհեստավոր-ներ կաշխատին և կմասնակցին քաղաքի բարգավաճման և առևտուրի զարգացման։ Բայց դժբախտաբար 1814—1815 թվական-ներեն սկսյալ հայ համայնքի անդամներուն թիվը կսկսի նվազիլ, 1816—1827 թվական-ներուն պատահած սոսկալի համաճարակի մը հետևանքով։

1841-ին մի քանի ընտանիքներ հազիվ կվերադառնան Սոֆիա, բայց եկեղեցին կմնա առանց քահանայի։ Այս թվականներուն սո-ֆիացի նշանավոր հայ երևելի մը կհիշվի Սոֆիայի հրեական վավերաթուղթերուն մեջ։ Հրեաները Այրապետյան կոչած են այս հայը, որ անտարակույս Հայրապետյան պետք է ըլլա, սուլթան Մահմուդ Դ-ի բարձր պաշտո-նատար, որ 1841—1842-ին Սոֆիայի և Սա-մաքովի մեջ կզբաղեր նաև լումայափոխու-թյամբ։

Սոֆիայի հայ համայնքը աչքի կիյնա հատկապես Բուլղարիո ազատագրության թվականներուն՝ 1878-ին։

1881-ին կատարված առաջին բուլղարա-կան պետական մարդահամարին համաձայն,

8 Տե՛ս Զարդարյան, «Հիշատակարան», էջ 267—268։

9 Տե՛ս Հ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», հատ. Զ, Վենետիկ, 1804, էջ 6։

Սոֆիայի լուսավորչական հայերու թիվը 73 էր[10]։

Այս առաջին մարդահամարեն հետո Սոֆիայի բնակչությունը կսկսի աճիլ, երբ Սոֆիան մայրաքաղաք կդառնա։ Հայ պաշտոնյաներ, վաճառականներ և արհեստավորներ կսկսին գալ և վերահաստատվիլ Սոֆիայի մեջ։ Այդ թվականներուն Սոֆիա եկողներեն են Թելեկրաֆճի պապա Մինաս (էդիրնեցի), Քյուրքճի Սենեքերիմ (պոլսեցի), Թորոս Վարագճյան (կնյազ Ալեքսանդր Բատենբերգի երբեմնի սափրիչը), Թյուֆենքճի Հաջի Ավագ, Այվազ Հովհաննես (վանեցի, Սոֆիայի վալի Մազհար փաշայի ծառայողը), Գույումճի Աստուր, Շոպ Գևորգ, Ցրունճի Մանուկ (պոլսեցի), Ստեփան Գասպարյան (հեռագրատան պաշտոնյա), Մինաս Ջայլյան (ճարտարապետ), Հայրապետյան (ճարտարապետ), Մաքսիմ Սահակով (հնագետ), Սուքիասյան (ոսկերիչ), Արամյան (ժամագործ) և ուրիշներ։

Այս հայերը հետզհետե կփայլին արհեստներու և առևտրական ասպարեզի վրա։ Կբացվին մանիֆակտուրայի և մանածի հայ վաճառատուներ Սարգիս Գույումճյանի, Պեզազյանի, Գևորգ Մուրադյանի և ուրիշներու կողմե։ Կհիմնվին Ջենոբովի և Բըլըկովի առաջին բուլղարական գրածուխարանը, Սուքիասյանի և Ստեփանյանի առաջին բուլղարական ոսկերչական գործարանը, Ա. Մարգարյանի կոշկարարական գործարանը և ժամագործարան։

1894 թվականի Կոստանդնոպոլսո Բանկ Օտտոմանի դեպքեն հետո, Բուլղարիա եկող հայերեն ոմանք կհաստատվին Սոֆիա։ Այս թվականին է, որ Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքարանը կհետաքրքրվի Սոֆիայի հայոց վիճակով և հոգևոր հովվության համար կուղարկե Տեր Արիստակես Ցեսլյան քահանան։ Այս վերջինը թափուր մնացած եկեղեցին կարգի կանոնի դնելե հետո, քաջալեր կհանդիսանա դպրոց մը բանալու գործին և գետնափոր եկեղեցիին կից, հին տախտակաշեն սենյակի մը մեջ, ինք կըլլա Սոֆիայի հայոց դպրոցի առաջին ուսուցիչը։

Բալկանյան պատերազմեն և առաջին համաշխարհային պատերազմեն հետո հայ գաղթականության հոսանքը կուժեղնա դեպի Բուլղարիա։ 1920—1922-ի թուրք-հույն պատերազմի ժամանակ նոր գաղթականություն մը կուգա հաստատվելու Բուլղարիա[11], Մարմարա ծովու ասիակողմյան եզերքեն, Բրուսայի նահանգեն և Բանդրմայեն կուգան թիվով շուրջ 16 000—18 000 հայեր։

Միայն Սոֆիայի հայ համայնքի թիվը 1927—1928-ին կհասնի շուրջ 32 000 հոգիի։ Այս թվականեն սկսյալ հայ համայնքի աճումը ցույց կուտա հետևյալ պատկերը.

| Տարի | Պսակ | Ծնունդ | Մահ[12] | Աճում |
|---|---|---|---|---|
| 1928 | 23 | 49 | 40 | 9 |
| 1929 | 26 | 42 | 34 | 8 |
| 1930 | 5 | 7 | 8 | — |
| 1931 | 22 | 37 | 30 | 7 |
| 1932 | 30 | 32 | 36 | — |
| 1933 | 33 | 45 | 42 | 3 |

Հետևաբար կարելի է ըսել, որ եկեղեցական տոմարներու մեջ ցույց տրված աճման թիվը այդ տարիներուն քիչ մը ավելի բարձր եղած է։ Իսկ պսակներուն թիվին մեջ արձանագրըված չեն այն ամուսնությունները, որոնք կատարված են բուլղարներու հետ (խառն ամուսնություն) և պսակը եղած է Բուլղարական եկեղեցվո մեջ։

Բուլղարահայոց առաջին թեմակալ առաջնորդը կըլլա Բյութանիո թեմի նախկին առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանը, որ մինչև իր մահը՝ 1934 թվականը այդ պաշտոնը կվարե։ Իր կյանքի վերջին տարիներուն խնայած իր բոլոր հարըստությունը, շուրջ 200 000 լևա, կնվիրե Նորաշեն Ազգային տան մեջ կառուցվելիք դպրոցին, որով այդ շենքին մեկ հարկը կկոչվի Հովակիմյան դպրոց։ Այս շրջանին դպրոցի աշակերտության թիվը կհասնի շուրջ 300—320-ի, մեկ տնօրենով և չորս ուսուցիչներով։ Դպրոցի բյուջեն կմատակարարվի հայ համայնքի անդամներեն հավաքված ազգային-կրթական տուրքե-րով։

10 Սույն մարդահամարը կատարված է ոչ թե ազգության, այլ դավանանքի հիման վրա։ Այսպես, օրթոդոքսներ 14052 հոգի, մահմեդականներ՝ 1258, հրեաներ՝ 4274, կաթոլիկներ՝ 714, բողոքականներ՝ 163, լուսավորչականներ՝ 73։ Ուստի կաթոլիկ և բողոքական հայեր մտած չեն այս 73-ին մեջ։

11 Միայն Ռոդոստոյի վրայով Բուլղարիա անցնող հայ գաղթականներու թիվը (Իզմիրեն և Ադաբազարեն) եղած է 3434 հոգի կամ 931 ընտանիք (տե՛ս Ս. Փաչանճյան, «Ռոդոստոյի հայերը», Սոֆիա, 1929, էջ 121)։ Իսկ Բուլղարիա ապաստանած ռոդոստոցիներու թիվը եղած է 596 ընտանիք կամ 2078 հոգի (տե՛ս անդ, էջ 128)։

12 Մահվան այս թվերուն մեջ արձանագրված են նաև այն հայերը, որոնք գավառներեն Սոֆիա եկած են դարմանվելու և սակայն մեռած և Սոֆիա թաղված են։

Մանուֆակտուրայի, մանածի, յաղմայի և այլ ճյուղերու վրա գործող հայ վաճառականներու թիվը կբազմանա։ Կբացվին «Բանկա Թրակիա» և «Սևան» համագործակցական հայկական դրամատունները։

Բուլղարահայ թեմի առաջնորդներ կըլլան՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյան 1926—1934, Երվանդ եպիսկոպոս Փերտահճյան 1934—1938, Գրիգորիս ծայրագույն վարդապետ Կարապետյան 1938—1953, Վազգեն եպիսկոպոս Պալճյան 1954—1955։

Իսկ 1640-ական թվականներեն սկսյալ Սոֆիայի մեջ պաշտոնավարող հայ քահանաները հետևյալները եղած են՝ 1640—1670 Տեր Գրիգոր, 1673—...-ին Տեր Հովնան, 1880—1888-ին Տեր Կարապետ Սահակյան, 1888—...-ին Տեր Հարություն Հակոբյան, 1890—1904-ին Տեր Արիստակես Ֆեսլյան, 1904—1912-ին Տեր Հովհան Մանդակունի, 1904—1924-ին Տեր Մեսրոպ Տեր-Մեսրոպյան, 1922—1931-ին Տեր Խորեն Ճամճյան, 1924—1926-ին Տեր Եղիշե Ութուճյան, 1927—1934-ին Տեր Մեսրոպ Անտոնյան, 1931—1937-ին Տեր Ստեփան Կարապետյան (հետո մեկնած Ամերիկա), 1937—1942-ին Տեր Աթանաս Այվազյան, 1937-են՝ Տեր Վահան Փափազյան։

Սոֆիայի մեջ 1922-են մինչև 1944 լույս տեսած են հետևյալ թերթերը՝ «Պալքանյան մամուլ», «Հայաստան», «Արաքս», «Ջանք», «Մշակույթ», «Բուլկարահայ ձայն», «Ռազմիկ», «Փարոս», «Ազատ խոսք» և «Մեղու», որոնցմե միայն «Ազատ խոսք» և «Պալքանյան մամուլ» 10—15 տարի տևականապես լույս տեսած են, մնացյալները շատ կարճ կյանք ունեցած են։

1944 թվականին Սոֆիայի հայության թիվը 4700 էր։

1947 թվականին Սոֆիայեն ես բազմաթիվ հայեր ներգաղթեցին Սովետական Հայաստան։



# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

*ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ.—Գիտությունների ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի նախագահությամբ տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։*

*Նախագահի ներածական խոսքից հետո կենսաբանական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար Վ. Գուլքանյանը ամփոփեց անցած տարվա Ակադեմիայի բոլոր բաժանմունքների գործունեության տվյալները։*

*Հաշվետու շրջանում Ակադեմիայի բոլոր բաժանմունքները ձգտել են լուծել Հայաստանի տնտեսության և կուլտուրայի հետագա վերելքի հետ կապված հրատապ մի շարք հարցեր։ Հատուկ ուշադրություն է նվիրված ֆիզիկո-մաթեմատիկական, քիմիական, երկրաբանական, տեխնիկական, կենսաբանական և հասարակական գիտություններին։ Գիտական այդ բազմապիսի աշխատությունները մեկ կողմից ամուր հիմքերի վրա են դնում մեր ժողովրդի տնտեսությունը, մյուս կողմից նպաստում են մեր երկրի հզորացմանը։*

*Ակադեմիայի բոլոր բաժանմունքներում տարված գիտական աշխատանքները ծառայելու են մեր հայրենիքի հետագա հարաճուն վերելքին, որի շնորհիվ յուրքը առաջընթաց են ապրում մեր արտադրությունը, տեխնիկան, գյուղատնտեսությունը, բժշկությունը։*

*Արժե անդրադառնալ նաև հայոց լեզվի մասնագետների կատարած շնորհակալ աշխատանքին հայոց լեզվի ուսումնասիրության գործում։ Մասնագետների տևական աշխատանքի շնորհիվ կազմվել են հայերենի բարբառագիտության քարտեզները, մայրենի լեզվի լիակատար բառարան։ Շուտով տպագրության կհանձնվի արդի հայերենի բացատրական բառարանի առաջին հատորը։ Պատրաստության մեջ են հայ-ռուսերեն բառարանը և հոմանիշների բառարանը։*

*Հայաստանի Գիտությունների ակադեմիան կապ է պահպանում ավելի քան 30 երկրների շուրջ 200 գիտական հաստատությունների հետ, նրանց հետ ունենում է փորձի փոխանակում։*

*Հաշվետու շրջանում ստեղծվել են նոր ինստիտուտներ, ինչպես հոգեբանության, ազգագրության և այլն։ Ակադեմիայի գիտական աշխատողների թիվը աճել է 459 մարդով։ 70 գիտաշխատող ստացել են գիտությունների թեկնածուի և դոկտորի աստիճան։*

*Տեղի ունեցավ նաև Գիտությունների ակադեմիայի իսկական և թղթակից անդամների ընտրություն։ Նոր ակադեմիկոս ընտրվեցին Աշոտ Հովհաննիսյանը, Արարատ Ղարիբյանը և Ա. Առաքելյանը։*

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐԸ.— Սոֆիայի բնակիչ Աստուր Պետիկյանը, բուլղարահայ «Երևան» մշակութային միության միջոցով Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանին է նվիրել իր անձնական հոխ գրադարանը՝ բաղկացած 500 ընտիր գրքերից և 300 պարբերականներից ու կերպարվեստի առանձին նյութերից։ Արժեքավոր են հատկապես Հայկազյան բառարանի երկհատորյակը (տպ. 1836—1837 թ. թ.), Հ. Ղ. Ալիշանի «Սիսուան»-ն ու «Այրարատ»-ը (1885—1890 թ. թ.)։*

*Նույնպիսի ազնիվ նախաձեռնություն էր հանդես բերել նաև Մոսկվայում բնակվող Սերգեյ Տեր Ստեփանյանցը՝ կլասիկ գրականության իր գրքերի նվիրատվությամբ։*

*ԱՅԳԻ ԼՃԻ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՍՈՎԽՈԶԸ.— Մեծամոր գետի ափերին, հարյուր հեկտար տարածությամբ, ստեղծվել է ընդարձակ կենդանաբուծական սովխոզ։ Այնտեղ բուծվում են ճահճակուղբեր և սև ճագարներ, որոնց մորթին արդեն սկսել է մեծ համբավ հանել։*

*Սովխոզը իրենից ներկայացնում է շամբուտների, լճակների մի անվերջ ցանց, փռված Մեծամոր գետի հոսանքն ի վար։ Հատուկ արգելանոցներում այստեղ բուծվում են Հարավային Ամերիկայից բերված ճահճակուղբերը, որոնք շատ լավ են հարմարված իրենց նոր հայրենիքին։ Շատ հարգի է նրանց մորթին, որն ուղարկվում է Լենինգրադի № 1 ֆաբրիկային՝ վերամշակվելու համար։*

*Ճահճակուղբը մարդամոտ չէ։ Դիմանում է կլիմայական փոփոխություններին, Գետնատարած ցածրադիր բների միջով ամենուրեք հոսում են մանր առվակ-*

տական առումներ։ Նրանցում, ժանրակրկիտ ուսումնասիրությանց հետև պարզվեց, ստեղծվել են բոլոր հնարավորությունները, բնականին հար և նման, որպեսզի ապահովեն ճահճակուղբի համար կյանքի բոլոր պայմանները՝ կյանքի ապահովության և ցեղի բազմացման տեսակետից։ Այժմ նրանց թիվը հասնում է 2 200-ի. մոտ ապագայում ծրագրված է այդ թիվը բարձրացնել 20 000-ի։

Բացի կուղբերից սովխոզում բուծվում են նաև սև ճագարներ, որոնց մորթին նույնպես թանկ է գնահատվում։ Նրանք էլ ունեն բոլոր պայմանները՝ կարճ ժամկետում մեծ եկամուտով տնտեսություն զարգացնելու։ Ամուր հիմքերի վրա դնելու համար կենդանաբանական սովխոզը՝ նրան կից ստեղծված են օժանդակ տնտեսություններ։ Մուշտակի արտադրությանն է նվիրված նաև Կիրովականի աղվեսաբուծական սովխոզը։

ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Հայ արվեստի պատմության մեջ հայտնի է Հովնաթանյանների ընտանիքը։ Հակոբ Հովնաթանյանը անվանի նկարիչների սերնդի վերջին ներկայացուցիչն է, որի նկարների ցուցահանդեսը կազմակերպվեց վերջերս Երևանում։

Աչքառու են Հակոբի դիմանկարները իրենց ռեալիստական նուրբ արվեստով։ Նրանք բացի այն հանգամանքից, որ մեզ հասցրել են պատմական կամ անհայտ որոշ մարդկանց դիմանկարները, նշանավոր են նրանով էլ, որ շատ նուրբ մի արվեստի միջոցով պահպանել են այդ շրջանի հագուստ-կապուստի վերաբերյալ տվյալներ։ Այդ նկարները ունեն կատարման հաջողություն, գույների ճաշակավոր և ճիշտ ընտրություն, հոգեբանական պահի ընկալում և դրան ներդաշնակ շրջապատի մեջ տեղադրում, որի շնորհիվ ոչ մեկ դիմանկար չի կրկնում մյուսը։

ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ սովետահայ արձակագիր և հրապարակախոս Հրաչյա Քոչարի ծննդյան հիսուն տարին։

Քոչարը գրել է սկսել 1931 թվից։ Այդ օրից էլ բոլորի համար պարզ էր, որ գործ ունեին մի գրողի հետ, որը գիտե խորհել, վերլուծել, պատահականի մեջ գտնել մնայունը, արտաքինի մեջ բացահայտել ներքինը, առօրյայի մեջ նշմարել հավերժականը։ Քոչարը ժամանակի հետ ապրող և ստեղծագործող գրող է։ Գեղարվեստական գրականությունը նրա համար կյանքի ուսուցիչ է, բարքերի դաստիարակման և ազնվացման միջոց, ժողովուրդների եղբայրացման կամուրջ։

Հայրենական պատերազմից հետո սկսվում է Քոչարի ստեղծագործության ամենաբուռն շրջանը, երբ նա տվեց հաջողված գեղարվեստական, հրապարակախոսական և գրական-քննադատական լավագույն երկեր ու հոդվածներ։ Քոչարը ակնարկի և պատմվածքի խոշոր վարպետ է։ Լավագույն պատմվածքներից են նրա «Գեներալի քույրը» և «Մայրը»։

Քոչարի գեղարվեստական ստեղծագործության պսակն է կազմում «Մեծ տան զավակները» ծավալուն վեպը, որն արդեն ունեցել է մի քանի հրատարակություն։

Քոչարի գրչին են պատկանում «Մեծ տարեգրության էջերից» հրապարակախոսական հոդվածաշարը, «Հյուսիսային ծիածան» կինոֆիլմի սցենարը, գրական-քննադատական բազմաթիվ արժեքավոր հոդվածներ։

ՌԱԴԻՈԲԻՈԼՈԳԻԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ռադիոբիոլոգիայի բաժանմունքը ամփոփեց իր անցած տարում կատարած աշխատանքը։ Զեկուցումով հանդես եկավ դոցենտ Կ. Քյանդարյանը, որից հետո լսվեցին 20 տարբեր զեկուցումներ՝ նվիրված ռադիոբիոլոգիայի սահմաններում այժմեական հարցերի։ Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին պրոֆեսորներ Թ. Ֆանարջյանը, Հ. Սաղաթելյանը, Ա. Հակոբյանը և շատ ուրիշներ։ Գիտական սեսիայում լսվեցին նաև ռենտգենոլոգիային, ռադիոլոգիային և ոնկոլոգիային նվիրված զեկուցումներ։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.— Ապրիլի 29-ին լրացավ ճարտարապետ Մ. Գրիգորյանի ծննդյան 60 տարին։ Այդ առթիվ Հայաստանի ճարտարապետների տանը տեղի ունեցավ մեծարանքի երեկո։

Հոբելյանական երեկոն բաց արեց ճարտարապետ Վ. Հարությունյանը, որը հանգամանորեն ծանրացավ արվեստի վաստակավոր գործիչ ճարտարապետ Մ. Գրիգորյանի ներդրման վրա սովետահայ ճարտարապետության զարգացման գործում։ «Հայպետնախագիծ» ինստիտուտի դիրեկտոր ճարտարապետ Կ. Հակոբյանը զեկուցեց Մ. Գրիգորյանի ստեղծագործության և հասարակական գործունեության մասին։ Այնուհետև ընթերցվեցին բազմաթիվ հիմնարկներից և անհատներից ստացված շնորհավորական հեռագրերը։

Ջերմ և սրտագին ծափահարությունների տակ խոսք առնելով, հոբելյարը շնորհակալություն հայտնեց, խոստանալով, որ այսուհետև էլ ուժ ու եռանդ չի խնայի՝ ծառայելու համար հարազատ Հայրենիքին և հայ ժողովրդին։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 40 ՏԱՐԻՆ.— Վերջերս Երևանի թատերական հասարակայնությունը նշեց սովետահայ թատրոնի 40 տարին։

1920 թվականի դեկտեմբերի 30-ին պետականացվում է Երևանի անհատական դրամատիկական ստուդիան, որից հետո սկսվում է թատերական եռուն կյանք։ Բեմադրվում են հին արժեքավոր և նոր պիեսներ։ Հետաքրքիր է, որ սկզբնական շրջանում թատերական նախաձեռնությունը գալիս է շրջաններից (Դիլիջան, Լենինական, Կիրովական), մինչև որ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից Երևան

է հրավիրվում Աժո Խարազյանը։ Նա Երևանում կազմում է իր խումբը։ Այդ արդեն հիմնադրումն էր Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի Երևանում։

Նորաստեղծ թատրոնի առաջ խնդիր էր դրված՝ դառնալ աշխատավոր ժողովրդի հոգևոր ստեղծարար ուժերի զարգացմանը նպաստող մշակութային կաճառ մի լինել, ստեղծել հայ ժողովրդի մեջ թատերական նոր մշակույթ և ավանդություն, դաստիարակել առողջ հայրենասիրություն, աշխատանքի սեր, նվիրվածություն։ Այդ անելու համար ձեռնարկվեց ներգրավել բոլոր տրամադրելի մասնագետներին Սովետական Միությունում կամ արտասահմանում։ Կոչ արվեց դերասաններին՝ հավաքվել Հայաստան և լծվել աշխատանքի։ Իր հերթին Հայաստանի կառավարությունը 1921 թվականի հոկտեմբերի 26-ին հրատարակեց մի դեկրետ «Գրական-գեղարվեստական աշխատավորների ապահովության մասին», որը լայն հնարավորություններ էր ընձեռում դերասաններին լիիրավ ապրելու և ստեղծագործելու համար։

Այժմյան կազմակերպվածությամբ և իբրև ռեսպուբլիկական թատրոն՝ Սունդուկյանի անվան թատրոնը գոյություն առավ 1921 թվականի օգոստոսի 16-ի որոշումից հետո միայն։ 1922 թվականի հունվարի 25-ին, չորեքշաբթի օրը, հանդիսականների խանդավառ բազմության ներկայությամբ, տոնական հանդիսավորությամբ, առաջին անգամ բարձրացավ Երևանի պետական թատրոնի վարագույրը՝ ներկայացնելու համար անմահ Սունդուկյանի «Պեպո»-ն։

ԿԼԱՈՒԴԻՈ ՎԻԼԼԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ։— Վերջերս Երևանում հյուր էր իտալացի երիտասարդ երգիչ և կինոդերասան Կլաուդիո Վիլլան։ Սովետական Միության տարբեր քաղաքներում ունեցած հաջող ելույթներից հետո, իտալացի տաղանդավոր արվեստագետը, իր իտալական և մեքսիկական երգերի թովիչ կատարմամբ, մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնության գեղարվեստական անխառն հաճույք պատճառեց։ Նա հանրածանոթ երգիչ է միջազգային համբավով և արժանացել է բազմաթիվ արծաթ և ոսկի մեդալների։ Կ. Վիլլան ամենուրեք լսվել է հաճույքով և մեծ հիացմունքով։



# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Եղնիկ ավագ քահանա Վարդանյան. «ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ», օրագրություն, 1959 թ., Սան-Պաոլո, Բրազիլիա, տպարան «Արարատ», Բուենոս-Այրես, 274 էջ։**

*1959 թվականի հոկտեմբերին Սան-Պավլոյի հայ գաղութի հոգևոր հովիվ Տեր Եղնիկ ավագ քահանա Վարդանյանը, որպես պատգամավոր, ներկա եղավ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետի ծննդյան և գահակալության հանդիսություններին։ Արժանապատիվ Տեր հայրը, վերադառնալուց հետո իր հովվությունը, գովելի գաղափարն է ունեցել առանձին գրքի մեջ ամփոփելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Վեհափառ Հայրապետից և Մայր Հայրենիքից ստացած իր տպավորությունները, օրինակելի հայրենասիրությամբ, օրագրի ձևով։*

*«Դեպի Հայաստան» օրագրությունը ընդգրկում է 1958 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև նույն տարվա նոյեմբերի 10-ը ընկած ժամանակաշրջանը։*

*Ճանապարհորդական այդ օրագրությունը կազմելիս հեղինակի նպատակն է եղել պատմել, «թե ես ի՞նչ տեսա կամ ի՞նչ օրեր ու վայրկյաններ անցուցի» (էջ 9) Էջմիածնում, Հայաստանում։*

*Հեղինակը ծանոթ դեմք է Սփյուռքի գրական շրջանակներում, որպես նախկին հասարակական գործիչ, ուսուցիչ և գրող, և ապա, որպես Հայ Եկեղեցու համեստ սպասավոր։*

*Հեղինակը առաջին անգամ 1915 թվականին, որպես վանեցի գաղթական, տեսել է հին Երևանը. «Ես Երևանը կճանչնայի առաջին մեծ պատերազմեն առաջ, ան մեծ գյուղաքաղաքե մը անդին չէր անցներ, իսկ անոր բնակարանները հարյուրին իննիսունհինգը կոշտ քարերով ու ցեխով շինված ցած ու տձև տնակներ էին, իսկ այսօրվան Երևանը գեղակերտ ու միջակ մեծությամբ քաղաք մըն է, հոյակապ շենքերով, մաքուր հրապարակներով ու փողոցներով, զմայլելի գոհար մըն է դարձեր ան։ Հայկական ճարտարապետությունը Երևանին տված է նմանը չտեսնված գեղեցկություն մը, որու մեջեն հայու ստեղծագործական հանճարն է որ կփայլի» (էջ 117)։ «Այլշած չորս կողմս կնայիմ, 1915-ին տեսած Երևանի հետքն անգամ չկար, իսկ երբ Լենինի հրապարակը հասանք, ես այլևս աչքերուս չէի հավատար, ինձի այնպես կուգար, որ կերազեի. Երևանի գեղեցկությունը ապշեցուցիչ էր» (էջ 73)։*

*Իրապաշտ և առողջ է Տեր հոր հայրենասիրությունը։ Քառասուներեք տարիներից հետո, երբ նա այցելում է իր տեսած նախկին Հայաստանը, չի հավատում իր աչքերին, նրա սիրտը լցվում է ազգային հպարտության անուշ զգացմունքով, ի տես մեր Հայրենիքի, մեր ժողովրդի մշակութային, տնտեսական նվաճումների։*

*Ըստ հեղինակի արդար դատողության, հայրենասերները նրանք չեն, որոնք Սփյուռքում նստած ամեն օր ճառ են ասում հայրենասիրության մասին, այլ, մեր այն «եղբայրներն ու քույրերը Հայրենիքի, որոնք քրտինք թափած են Հայրենի հողի վրա, անոնք են իսկական հայրենասեր հայերը, մեր երկիրը վերաշինողները, մեր երկիրը ծաղկեցնողները» (էջ 76)։*

*Օրագրության մեջ հեղինակը առանձին ջերմությամբ է խոսում իր առաջին տպավորությունների մասին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Վեհափառ Հայրապետից. «որու համակրելի դեմքին վրա թրթռացող ժպիտը հայրական գորով մը ունի իր մեջ, որ սեր և հարգանք կպարտադրե» (էջ 80)։ Հեղինակը խանդավառությամբ է խոսում Էջմիածնում կատարված եկեղեցական «վեհաշուք և տպավորիչ» հանդիսությանց մասին, որոնց մեջ, ասում է, կա «հավատքի շունչը և մեծության հով մը», երբ Ամենայն Հայոց Հայրապետը «իր ավագանիով, հաղթական մուտք կգործեր Էջմիածնա Մայր Տաճարեն ներս, ուրտեղ ամեն ինչ հայկական էր, հայ ժողովուրդն է, որ իր ազատ հողին վրա, իր ազատ կառավարության շունչին տակ, իր կրոնական արարողությունը կկատարեր, իր փառավոր սովորության համաձայն, իր հնավանդ ու փառավոր շուքով։ Որքա՜ն երջանիկ եմ ես, որ Ազգիս ու Եկեղեցիիս մեծությունը կտեսնեմ իր ամբողջ փառքին մեջ։ ...Ս. Էջմիածինն էր, է և պիտի շարունակե մնալ որպես անխորտակելի վահանը հայու հավատքին, անառիկ բերդը մեր ազգային գոյության» (էջ 92)։*

*Վառ ու խանդավառ են նաև հեղինակի տպավորությունները Մայր Հայրենիքից։ Նա խոսում է Երևանում կատարած իր բազմաթիվ այցելությունների մասին, իր հարազատներին, բարեկամներին, անգամ անծանոթներին, որոնք սակայն հայ են և ապրում են Հայրենի հողում։ Տեր հայրը պատմում է, որ ինքը ազատ մտնում էր «հայկական հարկերեն ներս» (էջ 113), այցելել է «մոտավորապես հարյուրե ավելի տուներ, ներս կմըտնեի հանկարծակի և աչքերովս տեսա մեր ժողովրդյան կյանքը... կմտնեի բոլոր սենյակները, ավելի լավ գաղափար մը կազմելու համար» (էջ 114)։ Հեղինակը այդ բոլոր*

տներից ներս գտել է միշտ տիրող մաքրություն մը» (էջ 115), հայկական ավանդական սրտաբաց «հյուրասիրություն» (էջ 116) և ամեն տեղ, հայրենի բարիքներով ծանրաբեռնված, հանպատրաստից սեղաններ. «և զարմանալին այն էր, որ գրեթե բոլոր տուներուն մեջ ալ տանտիկինը աջ կդառնար խաղող կհաներ, ձախ կդառնար դեղձ կհաներ, իսկ ասոնց մեջտեղ Հայաստանի պատվական կոնյակի շիշը» (էջ 116—117)։

Հեղինակը ամեն ինչ սակայն վառ ու պայծառ չէ որ տեսնում է. Նա խոսում է նաև մեր Հայրենիքի և ժողովրդի առավել առաջադիմության անհրաժեշտության մասին և անաչառորեն շեշտում է մեր կառավարության և ժողովրդի վճռականությունը կյանքը է՛լ ավելի բարգավաճ, ունևոր դարձնելու առնչությամբ. «Տակավին բազմապիսի դժվարություններ կան հարթվելիք, որ ժողովրդյան կյանքը դեռ նոր սկսած է շտկվիլ... Ես խորապես համոզված եմ, որ ոչինչեն այսքան խոշոր գործեր մեջտեղ բերող մեր կառավարությունը պիտի հարթե բոլոր դժվարությունները։ Լավագույնը ընելու մտադրություն, կամք և ծրագիր կա, մնացյալը ժամանակի խնդիր է այլևս» (էջ 10)։

Հեղինակը 18 օր միայն կարողանում է մնալ էջմիածնում և Հայրենիքում. «Բայց քառասուն տարվա կարոտի համար տասնութը օրը այնքան քիչ, այնքան կարճ է, որ երազի պես անցավ» (էջ 225)։ Մոտենում է հրաժեշտի պահը, շատ տխուր, հուսահատ լինելու աստիճան տրտում է հեղինակը, երբ հիշում է մանավանդ, որ ինքը, տարիների ծանրության տակ կքած, այլևս չպիտի կարողանա այցելել Հայաստան։ Նրան խորունկ վիշտ է պատճառում Հայրենիքից հեռու, օտար հողի մեջ թաղվելու տխուր ճակատագիրը. «Պիտի մեկնիմ... ամենայն հավանականությամբ այս անգամ ընդմիշտ... տարիքս չպիտի թողու... Ես դատապարտված եմ օտարության մեջ փակել աչքերս։ Գերեզմանիս անհայտանալը չէ որ ինձի կսոսկացնե, այդ գերեզմանը պիտի անհետանա ուր ալ որ լինի, ես կվախնամ օտար հողեն, որովհետև ցուրտ է ան, շատ ցուրտ, օտար հողի տակ հայրենակարոտի մը ոսկորները հանգիստ քուն չեն կրնար ունենալ, մահվընես վերջ ալ տառապանքս պիտի շարունակվի» (էջ 225)։

Ավելի քան սրտառուչ է պատկերը ու միաժամանակ ողբերգական. դա ողջ գաղթաշխարհի ողբերգությունն է. լինել ջերմ հայրենասեր ու մեռնել օտար հողի մեջ, գեթ մի անգամ Հայրենիքը չտեսած և կամ մեռնել՝ երբե՛ք չհամբուրած Հայրենի հողը։

Հրաժեշտի վերջին րոպեն։ Հեղինակը Ս. էջմիածնում է, ստանում է Վեհափառ Հայրապետի վերջին օրհնությունը, և հանկարծ հիշում է մի ձայն, ձայնը Սփյուռքի հայրենակարոտ իր զավակների. «Պտղունց մը հող, Տե՛ր հայր, Հայաստանի հողեն պտղունց մը հող բերել չմոռնաս»։

Քահանան չի մոռանում հազարների սրտագին այդ աղերսանքը. «Պայուսակիս մեջ զետեղված քսակը, գանձ մըն է ան հայրենակարոտի մը համար, Ս. էջմիածնի պարտեզեն վերցված ափ մը հող... Ես ալ պետք ունիմ անոր, ես ալ կուզեմ, որ դագաղիս մեջ այդ հողով ծածկվին իմ աչքերը» (էջ 225)։

Օրագրության լեզուն սահուն է, պատկերավոր, ժողովրդական համով ու հոտով գրված։ Հեղինակը խոսում է պարզ ու ինքնաբուխ, բառեր չի փնտրում, իր զգացմունքներն ու մտածումները գրական վերամշակված ձևով տալու մտահոգությունը չունի, գրում է բնական, հարազատ։ Օրագրությունը մի տեսակ ի «խորոց սրտի խոսք» է, ուղղված Սան-Պավլոյի իր հավատացյալ և հայրենասեր զավակներին և դրանց միջոցով՝ գաղթաշխարհի էջմիածնասեր, հայրենաբաղձ հայորդիներին։

Օրագրությունը կարդացվում է հաճույքով։ Ծերունազարդ հայ քահանան կատարել է շնորհակալ աշխատանք։ Ծերունի հասակում կտրել է հազարավոր կիլոմետրեր Սան-Պավլոյից մինչև էջմիածին, Հայաստան, գրի առել իր խոհերը և մատուցել ընթերցողներին։

Վարձքդ կատար, Տե՛ր հայր։

Ա. Հ.

# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

*Էջմիածին ամսագրի 1950 թվականի մայիս-հունիս միացյալ համարից սկսյալ մինչև 1952 թվականի ապրիլի համարում լույս տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան ձեռագրաց ցուցակը։*

*1952 թվականից հետո Մայր Աթոռի ձեռագրատունը հարստացել է բազմաթիվ այլ ձեռագրերով, որոնք նվեր են ստացվել զանազան ազգայիններից, որոնք նախանձախնդիր լինելով մեր գրասեր պապերից ժառանգ մնացած ազգային այս հարստությունները ապահով և անկորուստ պահելու, սիրով նվեր են ուղարկել սույն ձեռագրերը Ս. Էջմիածին, քաջ գիտենալով, որ դրանք կպահպանվեն լավագույն կերպով և նվիրատուների հիշատակն էլ միշտ վառ կմնա Մայր Աթոռում և Հայրենիքում։*

*Ամսագրի այս համարից սկսյալ հրատարակության ենք հանձնում Մայր Աթոռի 1952 թվականից հետո ստացված նոր ձեռագրաց ցուցակը։*

*Մեր նպատակը լինելով բանասերների ուշադրությանը հանձնել Մայր Աթոռում ստացվող ձեռագրերը, այս ցուցակում տալիս ենք մինչև 1800 թվականը հասնող ձեռագրերի ամփոփ աննոտացիաները՝ առանց գիտահետազոտական մանրակրկիտ ուսումնասիրության, բերում ենք հիշատակարաններն ու հիշատակագրությունները հարազատորեն, պահելով նրանց սխալագրությունները, և նշում նաև բովանդակությունները։*

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ձեռագրատան վարիչ)

## № 102

### ԱՒԵՏԱՐԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 227.— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 22, յուրաքանչյուրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր քանակի թերթերից՝ ԺԳ և ԺԵ (4 թերթ), ԺԴ և ԻԲ (6), ԺԷ (7), ԺԸ (9), Ա (10), Ժ (11) և ԻԱ (14).— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 26×20,5×5,5 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնավուն թուղթ, որոնցից 130, 133, 135, 136, 138, 141, 156, 161, 162, 167, 168, 169, 174, 175, 179, 180, 196, 199, 204, 207, 208 և 221-րդ թերթերը մագաղաթ են։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նկարված են խաչ և այլ զարդաքանդակներ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար։ Միջից թափվել են 23-ից ավելի թերթեր և բավականին թերթեր էլ պոկվել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 22։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ խորաններ, լուսանցազարդեր, մարդագրեր, զարդագրեր, թռչնագրեր և այլն։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԶ դար։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրը համարակալված է մի անգամ (աջակողմյան վերևի անկյունում), որից երևում է, որ հետագայում մի քանի թերթեր թափվել են։ Ձեռագիրը ստացված է Վեհափառ Հայրապետի միջոցով։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Թ. 227բ.— Փառք հզօրի և անմահի, ահաւորի վեհի և մեծի, անճառի և անհասի, և անպատմելի և անորակի, անքանակի և անձևի, անչափի, և անժամանակի, եզականի, և եռակի պարզ, և անշարունակ, սուրբ և յըստակ, անվճիռ և մաքուր, համագոյ Սուրբ Երրորդութեանն։ (Հիշատակարանի մնացյալ մասը թափվել է։)*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 71ա.— Փառք Ամենայսուրբ Երրորդութեան և մի մի աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ վայել է փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

*Ես Աւետիս քահանայս առայ զՍուրբ Աւետարանս մեր հոգոյս յիշատակ և կողակցին իմոյ Հեղինարին և որդոցն իմոց, Նազարէթին, Թաթէոսին, Մարութին, Նիազին և դստերացն իմոց Փարին, Գաւհարին, Նազլուխանին, և հարսներն իմ Նազլուխանին, Թառանին, և թոռն իմ Սողայթէյին, և ծնօղացն իմոց Յովանիսին և մայրն իմ Պակին, և պապ՝ իմ Մալխասին, և զառն իմ Փաշայղէկին, և ընդանեաց իմոց, և որդոց, և դըստերաց իմոց, և ասկայկանաց իմոց։ Յիշեցէք առ Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք. Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալըստեանն, ամէն։ Հայր մեր որ երկ.։*

*Թ. 71բ.— Դարձեալ յիշեցէք պապն իմ Տէր Կարապետն, և հայրն իմ Տէր Դանելն, և մայրն իմ Հոռոմսիմէն, և կողակիցն Նարին խաթունն։ Յիշեցէք, Աստուած ողորմի ասէք, ամէն։ Հայր մեր որ երկինս։*

## № 103

### ՔԱՐՈԶԳԻՐՔ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 102։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 10 (Թ և Ժ 8-ական թերթ, Ա, Գ, Ե, Ը՝ 10-ական, Բ և Զ՝ 11-ական, Դ և Է՝ 12-ական)։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 25×19×2,1 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ քայքայվել և ընկել է։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար։ Սկզբից և վերջից թերի, ցեցակեր։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 29—31։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։— ԳՐԻՉԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Կյուրեղ աբեղա։— Ժամանակը՝ ԺԸ դար։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— ...և հանգուցէ Տէր Աստուած զհոգիս ստացողի գրոցս․ Ամէն։

Թ. 5ա.—... ողորմեա Տէր Աստուած ամենայն աստացելոյ․ Ամէն։

Թ. 9բ.— Ով սիրելի Հայրք և եղբայրք․ որժամ ընթեռնուք և օրինակէք մէկ բերան ողորմի ասացէք, Աստուած ձեզ ողորմի իւր աՀեղ ատենին․ Հայր մեղայ։

Թ. 32ա.— ... և մեղսամած գրիչս յիշեա։

Թ. 59բ.— Յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած այսպիսի չար աղքատութեան, եւ առաւել զեղկելի գրիչս սուտ և անարժան մեղաւոր Կիւրեղ յարեղաս․ Ամէն։

Թ. 65բ.— Յորոց մ[ա]կեալ զմեզ Քրիստոս Աստուած ըստացօղ Սուրբ Գրոցս մեղսամած Կիւրեղ յարեղէս։

Թ. 77ա.— Որում արժանի արասցէ Տէր Աստուած զստացօղ գրոյս Կիւրեղ յարեղայս․ այսպէս փառցս ուրախութեանցս․ Ամէն։

Թ. 89բ.— Մանաւանդ Աստուած ողորմի ըստացողիս մեզ լի Կիւրեղ արեղայն և իւր ծնօղացն․ Ամէն։

Թ. 95ա.— Որում և զմեզ արժանիս արասցէ Յիսուս Քրիստոս խայեալ թագաւորն մեր․ Մանաւանդ զըստացող լուսազարդ գրոյս, մեզօք լի տառապեալ Կիւրեղ սուտ Հաբեղին և զծընողքն Յարութիւնն և Հանձրևարդն, և կենակիցն Եղիսաբեթն, և կարդացօքնս և լսողքդ․ Ամէն։

Թ. 100ա.— Որով և զմեզ կեցուսցէ և Հաստատեսցէ ողորմութեամբն իւրով Քրիստոս Աստուած մեր․ Մանաւանդ զստացող գրոյս մեղօք լի Կիւրեղ Հաբեղէն և իւր ծնողքն Յարութիւնն և Հանձրեվարդն և կենակիցն Եղիսաբեթն և ողորմի ասացողացդ, Ամէն։

## № 104

## ՄԱՇՏՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 252։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 21, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 25×18,5×6 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ ողորկած թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, վատ վիճակում։— ԳԱՀԳԱՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ սկզբից և միջից որոշ թերթեր ընկել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 29—30։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։—ԳԻՐԸ՝ բոլորգիր։—ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան թերթի մեծությամբ երկու նկարներ՝ 86բ և 146բ, երկու խորաններ՝ 147ա և 203ա, ինչպես նաև մի քանի կիսախորաններ, լուսանցազարդեր, ծաղկագրեր և թռչնագրեր, որոնց բոլորն էլ միջակ արժեք ունեն։— ԳՐԻՉԸ՝ Հովհաննես քահանա։— ԳԱՏԿԻՐԱՏՈՒՆ՝ Նալբանդ Սարու Ղոյա։— ՏԵՂԻՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1486 թ.։— ՎԱՅՐԸ՝ Արճեշ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Մայր Աթոռի զինվանատան արխիվից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Ծաղկագիր սյունագիր․




Թ. 10բ.— Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ստացաւղի Սուրբ Գրոցս Նալբանդ Սարու Ղաւչին և իւր ծնաւղացն և ինձ անարժանիս Յովանէս գրչի և իմ ծնաւղացն և ձեզ կարդացաւղացդ և լսաւղացդ առՀասարակ․ Ամէն, եղիցի եղիցի։

Թ. 36ա.— Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա ստացաւղի գրոցս Նալբանդ Սարուի Ղաւչին և իւր ծնաւղացն և ինձ անարժան գրչիս Յովանիսի և իմ ծնօղացն․ Եւ ձեզ կարդացաւղացդ և լսաւղացդ․ Ամէն, եղիցի եղիցի․ ԱՀեալ և Աստուած։

Թ. 140բ.— ԱՀեսցէ Տէր Տէր Աստուած զգրաւղ գրոյս զՅովանէս և զստացաւղս սորա (մի տող պարապ է թողնված) և արասցէ թողութիւն մեղաց իւրոց ի միւս անգամ գալըստեանն իւրոյ և ծնաւղացն (երկու տող պարապ է թողնված) և ննջեցելոցն իւրոց․ Ամէն։

Թ. 173բ.— Քրիստոս Աստուած ողորմեա ստաացաւղի գրոցս Նալբանդ Սարու Խաւչին և ծնաւղացն նորին և ինձ անարժան գրչիս Յովանիսի և իմ ծնաւղացն և ձեզ լսաւղացդ և կարդացաւղացդ․ Ամէն։

Թ. 184բ.— Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացօղի Սուրբ Գրոցս Նալբանդ Սարու Ղաւչին և ծնաւղացն նորին և ամենայն արեան մերձաւորացն․ Ամէն։

Թ. 234բ.— Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ալ Սուրբ Խաչի բարեխօսութեամբն ողորմի Նալբանդ Սարու Ղաւչին և իւր ծնաւղացն։

Թ. 250ա.— Փառք եռակի Համակամ, անորիչ, անբաժանելի, և անքակ միասնական Սուրբ Երրորդութեանն Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ․ ԱՀութիւն, գոՀութիւն, փառաւորութիւն զթածին, ողորմածին և մարդասիրին Աստուծոյ․ Որ ետ կարողութիւն սխալամիտ և մատնաղէտ և մեղսա-

մած գրչի Յովանէս անարժան քահանայի յանկ հանել զաստուածախաւս կտակարանս աւծրնդակութեամբ Սուրբ Աստուածածնին, ամէնաւրհնեալ և գերագով կուսին Մարիամու Զնա կալեալ բարեխօս առ Միածինն և Աստուածն իմ Յիսուս Քրիստոս, աւարտեցաւ սուրբ տառս որ այժմ Մաշթոց կոչի բոլոր յամի ՋԼԵ (1486) Թուի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս, ի յԱրճէշ քաղաքիս, ի հայրապետութեան Տեառն Տէր Սարգիսի և ի Թագաւորութեան Յաղուպ ղանին, և յեպիսկոպոսութեան երկրիս Տէր Յովնիսի և Տէր Կարապետի և Գրիգոր վարդապետի։ Ծաղկեցուցէ զնոսա Տէր Աստուած ի վերայ ծաղկեալ գաւազանաց, և եւս ազգեացս եղանելոյ սուրբ վարդապետացն դասակից և պսակակից արասցէ, ամէն։ Որ եղև լրումն և կատարումն աստուածապաշտում Սուրբ Մաշթոցիս ձեռամբ սուտանուն Յովանիսի աշխարհի իրիցու Եւ արդ, ո՞վ պատուական քահանայք և աստուածասէր ժողովուրդք, յիշեցէք ի Քրիստոս զստացօղ Սուրբ Գրոցս զուսթա Սարու Ղաւչն և զծնօղսն (ք. 250բ) զԱստուածատուր և զեղբայրն իւր զՏիրատուրն և զՄեծատուրն և զմեծ պապն զՍարուն, և կողակիցն իւր զխէրմելիքն։ Եւ դարձեալ Աստուած ողորմի ասացէք Սարու Ղաւչին, և ծնաւղացն հաւրն Աստուածատրուն, և մօրն Ուսթիանին, և եղբօրն Սարու Ղաւչին, և որդին Խալիֆին. ամէն։ Եւ դարձեալ կրկին յիշեցէք ի Քրիստոս զՍարու Ղօչն և զքուերքն իւր զՍոլթան Խաթունն, և զՍայիպ Սօլթանն և զՂամար Խաթունն և զԹաթար Խաթունն և զՔիչի Խաթունն որ փոխեալ են առ Քրիստոս, և զպարոն Գորքն, և զմայրն իւր զՈւսթիանէն և ծնաւղսն նորին զՅոհաննէսն, ամէն։ Եւ դարձեալ Աստուած ողորմի ասէք պարոն Գորգուն և ծնաւղացն նորին, ամէն։ Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Գորքն և զամուսինն իւր զՓաշախաթունն և զծաղկեալ որդիքն իւր զԳաւզալ Ղաւչն, Շահ Մեծատուրն և զդստերքն իւր Պշտիխաթունն և զՄուլքին, և գնացելոցն առ Աստուած Մուլքի Բեկուն և զԽալիֆէն և զամուսինն իւր զԹաթարխաթունն և զդուստրն իւր զՇախփարիխանն և զՏուրիխանն։

Թ. 251ա.— Այլ և աղաչեմ զձեզ, ո՞վ եղբայրք, որ սիրով կարդայք և կարդալ տայք, նա զվարձս ի Քրիստոսէ առնու և զգրոց շնորհս։ Քանզի սա է լուսերանգ և վարդափթիթ և ծաղկաւէտ բուրաստան։ Սա է փարթամութիւն և անառիկ մեծութիւն։ Սա է պայծառութիւն Սուրբ Եկեղեցոյ։ Սա է հաց կենաց և ջուր անմահութեան։ Սա է գաւազան կաղաց և ճրագ կուրաց։ Սա է մեծութիւն աղքատաց և հանգիստ տառապելոց։ Սա է կերակրիչ քաղցելոց և լցուցիչ կարաւտելոց։ Սա է բժիշկ հոգոց և խրախութիւն մարմնոց։

Վասն որոյ աղաչեմ զձեզ լի բերանով Աստուած ողորմի ասցէք Նալբանդ պարոն Գորգուն և իւր ծնաւղացն, և հօր եղբաւրորդուն Ստեփանոս քահանային. և եղբօրն Աւդլմուսեխին և Խամաւչին. և Գուլչինարին. ամէն։

Եւ արդ, ես յետինս ի քահանայից և անիմաստըս ի գիրս գրչութեան Յովհաննէս սուտանուն քահանայ զիմ անարժան երեսս ի գետին գնելով աղաչեմ զձեզ, ո՞վ սուրբ քահանայք և ժողովուրդք։ Աստուած ողորմի ասել ինձ անարժանիս (ք. 251բ.) և իմ ծնաւղացն, հօրն իմոյ Աստուածատրուն և մաւրն իմոյ Գուլխասին, և երախտաւոր ուսուցչին իմոյ Տէր Յովհաննիսին և ծնաւղացն նորին Մանգասարին, ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 36ա.— Այս թվին, որ գրեց իմ 607 տարի առաջ է գրված ի Ղազվին 1890 թվ. 12 հոկտբր. իմ սիրելի միակ որդիակս իմ Յովանէս Տր. Զաքարիա Մարտիրոսեանց այս գրչահին Մաշտոցն ընծաեց Ղազվինու սբ. եկեղեցուն։ Որ հանդիպիք այս գրութեան խոնարաբար երեսանկեալ աղաչանօք խնդրեմ ձեր սբ. աղօթիւքն յիշէք մեր միակ միամօր սիրելի որդիակին յիշեալ Յովանէսին։ Գրեց իմ Տր. Զաքարիա Մարտիրոսեանց։

Թ. 89ա.— Վայ ինձ մեղաւոր քհնյ. Գրիգորիս Տ. Ստեփանոսին չարմըհայեցի ի գեօղն Մամուզայ 1906։

Թ. 116բ.— Տր. Ածատուրն։

Թ. 117ա.— Ես Տր. Մինաս գրեցի։

Թ. 128ա.— Այս է Վազգան Տր. Մինասին ՌՆ 18 դ. չ.-ին։

Թ. 187ա.— Ի թվին հայոց հազար ԲՀԱ։

Թ. 208բ.— 1897 Յովհաննէս քհնյ. Տէր Սուքիասեան քհնյ.։

Թ. 209ա.— Արշակի պսակն է։

Թ. 251բ.— Ես Ծատուրս այս Մաշտոցս ընձայեցի Տր. Օհանին որ բանացենի։

Թ. 252ա.— Դարձեալ, ո՞վ պատուական հայրք և եղբարք ընթերցողք այսմ Աստուածաշունչ գրոցս, յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ըստացողք Սուրբ Գրոցս զՄարտիրոս քահանայն և զորէս Մարտիրոսն և զամենայն արեան մերձաւորքն իւրեանց և լի բերանով Աստուած ողորմի ասացէք նոցա, ամէն։ Դարձեալ վերստին յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մարտիրոսն և զծնօղսն իւր զՄկրտիչն և զՄելէքխաթունն և զեղբայրն իւր զՄիոն քահանայն և զորդիքն իւր զՏէր Փարսամն և զԿարապետն և զայլ ամենայն արեան մերձաւորքն իւր զկենդանիսն և զհանգուցեալսն առհասարակ, և զորէս Մարտիրոսն և զնորին ծնօղսն զՄկրտիչն և զՕղխասբեթն և զեղբայրն իւր զՎարդան և զկենակիցն իւր զՕովինար, և զորդիքն իւր զՅակոբ, զՅովսէփ և զՄիրաք և զԳրիգոր և այլ ամենայն մերձաւորսն իւր զկենդանիսն և զհանգուց-

ծայսն և լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք Նոցա որ ստացան սորայ երկուքս զայս Սուրբ Գիրքս և ետուն ի դուռն Սուրբ Վարդապետին և Սուրբ Ստեփանոսին, յիշատակ հոգոց իւրեանց, որոյ Տէր Աստուած զերկնից արքայութիւնն Նոցա պարգևէ, ամէն։ Եւ մի ոք իշխեսցէ զսա հեռացուցանել ի դրանէ սուրբ եկեղեցեացս և որք յանդգնին և տանեն նա պատժին ի սրբոցս Աստուծոյ, ամէն։ Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զջոջս Մարտիրոսն, զՆերսէսն և զԱմիրազիզն և զՏէր Մարտիրոսն, որ բարութիւն արարին Կուսթայ և Ստեփանոս վարդապետի և Զաքարիայ գրողի վկայութեամբն Ջ.ՇԹ (1540 թ.) ի խարճէն ի յորութէն վերացուցին յիշատակ իւրեանց հոգոյն, որոյ Տէր Աստուած փոխարէն Նոցա զերկնից արքայութիւն Նոցա պարգևէ, ամէն (կտրված է այստեղ) առնուլ սայ ն... (կտրված է այստեղ)։

Թ. 252բ.— Տէր Յովանէսն փոխեցաւ ի Քրիստոս փոքր թիվն Հ.ԴՄՑ-րումն թիվն հայոց ՌՃՂԴ (1745) յունվար Ժ-ումն ի վերայ կացութեան լուսայորչայդավան սրբոյն Վեհին էջմիածնայ Ղազար Կաթողիկոսին, որ է քահանայապետ ընդ ամենայն հայոց. ի ժամանակս թագաւորութիւն պարսիցն էր Նադր Շային, որ Ջուղայու Սուրբ Ամենափրկչին յառաջնորդն, որ է որդյրունի և քայլ աստուածայեան Աստուածաստուր վարդապետն հացեավ ի Քրիստոս յանաց յուան որ է օրհնեալ յավիտեան, ամէն։ Թիվն փոքրն ՌՃԻԹ (1680) տրմ. իդ. լուսայհոգի յառաջնորդիս յառաջի յանդուցեալն ես անպիտան սուտանուն մհտ. Զաքարէայի Սարգի յիշեցի Սուրբ Բեթղայէմի եկեղեցուն և այս Երալամէ գրեցի կարդայցող էսս բերան յիշեցէք անարժանիս և դուք օրհնեալ լիջիք ի Քրիստոսէ և ամենայն սուրբ Նորայ որ օրհնեալ յաւիտեանս։ Հայր մեր։

## № 105

## ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 276։— ԳՐԱԿՆԵՐԸ՝ 24, յուրաքանչյուրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր քանակի թերթերից՝ ԻԴ(6), Ա(9), ԺԲ և ԺԹ (10), Է (11)։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 25×18×7 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, քայքայված։ Առաջին երեսում ճնշումով նկարված է մեծ խաչ, իսկ վերջում՝ զարդարանքներ։ — ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբից և վերջից մեկական թերթ խունացած մագաղաթ, ուղղագիծ երկաթագիր գրությամբ, Գործք Առաքելոցից, հավանաբար Ժ—ԺԱ դարերից մնացած։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն որոշ թերթեր թափվել են։ Կազմի կռնակը քայքայվել է։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 21։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ ոճով նկարված մի քանի խորաններ և բազմաթիվ լուսանցազարդեր, գազաններ, սրբեր, մարդագրեր, թռչնագրեր, ծաղկագրեր, գազանագրեր և այլն։ Կան նաև մի քանի թռչունների նկարներ մարդկային գլխով։— ԳՐԻՉԸ՝ Հովհաննես։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Պարոն Սքանդար։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1468 թ.։— ՎԱՅՐԸ՝ Արծկե քաղաքի Ս. Աստվածածին տաճար։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրը ստացված է Վեհափառ Հայրապետի միջոցով։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 274ա.— Աւրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն՝ գթածին, ողորմածին և մարդասիրին Աստուծոյ...

Թ. 274բ.— ...Եւ այլ բազում պատճառք են յորս գազափարին չորեքեան Աւետարանքս։ Որոյ ցանկացող եղեալ Սուրբ Աւետարա(բ. 275ա)նիս, հաւատարիմ և աստուածասէր տանուտէրն Սքանդար և բարեմիտ ամուսինն իւր Փաշամելիք, և ստացան զսա յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ հոգւոց և ծնաւղաց իւրեանց Տէր Աւագ քահանայի և Խութլումելիքին, և ծնաւղաց Փաշամելիքին, Կարապետին և ամուսնոյն իւրոյ Հռիփսիմէին։ Յիշելով զասացեալն ի մարգարէէն, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ։ Ուստի շարժեալ Նոցա ի սէր աստուածային զանձուցս և ստացան զանառիկ մեծութիւնս և զգանձս անկողոպտելի ի փրկութիւն հոգւոց իւրեանց։

Եւ արդ յերեսս անկեալ աղաչեմ զմանկունս Սուրբ Եկեղեցւոյ, որք հանդիպիք Սուրբ Աւետարանիս և ընթեռնուք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոյ ասացեալ. ստացող գրոցս զպարոն ըՍքանդար և զՓաշամելիքն և զորդիք Նոցա զՏէր Աւագ քահանայն, և զԽուփիար, և զԹաղթիար և զ(բ. 275)ծաղկեալ որդիք Նոցա, մանաւանդ զՏէր Գրիգոր Նորընծայ քահանայն յորոյ անուն գրեցաւ Սուրբ Աւետարանս զոր Տէր Աստուած վայելել տացէ Նրմա ընդ երկայն աւուրս, ամէն։

(Երեք տող բաց է թողնված այստեղ)։

Եւ ես անպիտանս յամենայնի, մեղուցեալ գրիչս Յովանէս, տեսի զեռափափագ սէր և զլան զոր ունէին սորա հետ սուրբ Աւետարանիս, ձեռնարկեալ գրեցի զսա, ի քաղաքս Արծկե, ընդ հովանեաւ ամենամաքուր Սուրբ Աստուածածնի տաճարիս և Սուրբ Ստեփանոսի Նախավկայիս, ի հայրապետութեան Տեառն Արիստակէսի ընդհանուր հայոց կաթողիկոսի, ի թըւականութեանս մերում Ջ և ի ԺԷ (1468) ամի։ Եւ արդ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Քրիստոս և լի բերանով Աստուած ողորմի ասել Ըռէս Սքանդարին և ամուսնոյն իւրոյ Փաշամելիքին և ծնաւղաց իւրեանց Տէր Աւագ քահանայի և Խութլումելիքին։ Այլև զծաղկեալ որդիք... (հաջորդ թերթերը թափվել են)։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 212բ.— Յիշատակ է սուրբ կարմիր Աւետարանս Տէր Սարգիսին և ծնողաց իւրոց Հռոմին և որդիք Նորին Տէր Ավետիսին և ծաղկաեալ որդիք Նորին Յովա-

գիմին, Յոհանին, Ղուկասին և ձեռքն իւր եաթունին, և սուրբ Թէհանին, Գալճհանին, Սարիկին և Հանգուցեալ եղբայրն իւր գիրայցու Յարութիւնին, գիրայցու Եռային, և նախապուղպոզ Դանիէլին, որ աղայական հասակաւ սա Աստուած փոխեցաւ։ Եւ ով ընթեռնուք Սուրբ Աւետարանս կարդալով զամ օրհնակելով մի մի բերան ողորմի ասէք, Քրիստոս Աստուածքն ձեզ ողորմի ի աւուրքն դատաստանին, եւ ասաւել Սուրբ Աւետարանս ծախէ կամ գրաւէ ի պառինն կայէնի արցէ և մասնակից Յուդային... ցի ԳճԺԸ (318) Հայրապետաց նզովեալ լինի։ Եւ անարժան գիրայցու Յովայգիմս նկարեցի թվին ՌՃ մէկին (1652) ամսեայն մայիսի Ի-ումն գրեցաւ։

## № 106

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱՂՕԹԻՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 215։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 17, յուրաքանչյուրը 12 թերթից։ Միայն հետևյալ պրակները բաղկացած են տարբեր քանակի թերթերից՝ ԺԷ (3), Ա (11), Դ և Զ (14), Ե և Է (16), ԺԵ (20)։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 28,2×17×2,2 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ ստվարաթուղթ։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ մի թուղթ ձեռագրի սկզբում։— ՎԻՃԱԿԸ՝ բավարար։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 25։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան հասարակ ոճով նկարված մի քանի թռչնագրեր և մարդագրեր։— ԳՐԻՉԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ դար։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ա) ձեռագիրը ստացված է Վեհափառ Հայրապետի միջոցով, բ) բնագիրը գրված է 1177 թվականին Կիլիկիայում Ս. Ներսես Լամբրոնացու կողմից, որի հիշատակարանը գրված է 197ա—բ և 215ա թերթերում։ Իսկ 198ա—214բ թերթերում գրված են Ս. Ներսեսի երկու նամակները՝ ուղղված Լևոն թագավորին և Անտիոքի Հուսիկ հույն կրոնավորին։

## № 107

## ԱՒԵՏԱՐԱՆ

ԹԵՐԹԵՐԸ՝ 298։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 24, յուրաքանչյուրը 12 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 22×16,5×6 սմ։— ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդանկարներ են նկարված։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբից և վերջից կան երկուական թերթ սպիտակ հաստ թուղթ, ինչպես նաև մեկական թերթ խունացած մագաղաթ, Նոր Կտակարանի տեքստով, գրված ուղղագիծ երկաթագրով (Թ—Ժ դ. դ.)։— ՎԻՃԱԿԸ՝ շատ լավ։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 20։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան գեղեցիկ բազմաթիվ խորաններ և կիսախորաններ, չորս ավետարանիչների մեծ նկարները, լուսանցազարդեր և խաչեր, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և կենդանիներ. թռչնագրեր և զարդագրեր, մի հատ հրեշտակագիր (թ. 17ա), և երկու հատ էլ գազանագրեր (թ. թ. 85ա և 147ա)։ Օգտագործված են միայն երկու գույներ՝ կարմիրը և կապույտը. որոնցից առաջինը շատ, իսկ երկրորդը քիչ քանակությամբ։— ԳՐԻՉԸ՝ տիրացու Մարգարա։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Թագուհի։— ՏԱՂԿՈՂԸ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1742 թ։— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրը նվեր է առաքված Նոր-Նախիջևանի ծխատեր Տ. Մկրտիչ ավագ քահանա Զարչաֆյանի կողմից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 289ա.— Փառք անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգի, ամենայն արարածոց և ի բնաւից եղականաց, ամէն։

Որ ետուր կարողութիւն և սատար եղեր տկարութեան իմոյ հասանել ըղձալի մասին։ Աւրհնութիւն քեզ Սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, որ ես պատճառ ամենայն ծրից և մակացութեան արհեստից սկիզբն և կատարումն, այժմ և անզրաւ և անսպառ, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Շնորհիւ ամենախնամ ողորմութեամբն Աստուծոյ, սկսեալ ես բազմամեղ և թերավարժ գրիչս անարժան և անպիտան տիրացու Մարգարս, սակայն ոչ կասեցայ ի յուսոյ, վստահացեալ ի մարդասիրութիւնն Աստուծոյ, որ ասէ խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, և այլն։ Ապաւինելով հոգս և փոշիս ձեռնարկեցի յայամ պատուելի և պաշտելի և երկրպագելի մատենիս, և յանգ ելեալ աւարտեցի, և հասի ի գրաւ սորայ։ Որոյ ցանկացող եղ(բ. 289բ)եալ յայամ աստուածապատում և փրկական Սուրբ Աւետարանիս, աստուածասէր և մեծահաւատ կինս այս Թագուհի անուամբ, յիշելով զհրամանն Տեառն որ ասէ, զամենայն զոր ինչ ունէր երթեալ վաճառեաց և գնեաց զմարգարիտն զայն, որ է սուրբ և պատուական տնօրինականն Քրիստոսի Սուրբ Աւետարանս զայս։ Եւ դարձեալ ասէ թէ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականեն, զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։

Եւ Սողոմոն երկրորդէ և երանի տայ յիշատակ տըւողացն, որ ի մէջ ծոցոյ սուրբ եկեղեցւոյ, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանի Երուսաղէմ։ Արդ ստացաւ Սուրբ Աւետարանս զայս օրհնեալ և բարի արմատ կինս այս Թագուհիս, առ մահտեսի Աստուածատուրին, որդոյն խօճայ Մարտիրոսին, և այլ կանխաւ ննջեցեալք եղիսաբեթ, և Յարութիւն, և հօրն Յովաննէս աղային, և մօրն Կիւլպիքէ, եղբօրն խօճայ

*Գէորգին, անհրաժեշտ մահտեսի Մարտիրոսին, և մահտեսի Այգի(ք. 290ա)քէին, և այլ ամենայն զարմիցն, սերտ սիրով և կատարեալ հաւատով ետ գրել և եդ յիշատակ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն, վասն քաւութեան և թողութեան և ի սխալանացն բարեխօսութիւն։ Արդ, գրեցաւ սա ի յամի թուաբերութեան Աւգոստեան տումարի ՌՃՂԱ-ին (1742), ձեռամբ անարժան տիրացու Մարգար, և զուսուցիչն իմ զՏէր Վարդան, և զհայրն իմ Մարկոս, և զմայրն իմ։ Եւ են բազմաւորք սուրբ տաճարիս, զՏէր Մինասն, և զՏէր Գաբրիէլն, և զՏէր Մարտիրոսն, և զՏէր Յովհաննէսն, և այլ միաբան օրհնեալ ժողովք, և ասացէք Աստուած ողորմեսցի, ամէն։ Եւ է սա ազատ ամենայն շարեաց, ոչ ոք չունի իշխանութիւն հանելոյ, կամ ծախելոյ, և կամ գրաւելոյ, ի ծոց սուրբ եկեղեցւոյս, եթէ ոք յանդգնի, հանէ կամ զողանայ, ձեռնամուխ լինի Սրբոյ Աւետարանիս զօրութենէն, և զպատիժն Կայենի, և Յուդայի առցէ, և ԳՃԺԸ (318) հայրապետաց անէծքն վրան եղիցի, ամէն։ Իսկ խնամօք և զգուշութեամբ պահօղքն աւրհնեալ եղիցին, ամէն, Հայր մեր։*

**№ 108**

**ՄԱՇՏՈՑ**

**ԹԵՐԹԵՐԸ՝** 90։—**ԳՐԱԿՆԵՐԸ՝** 7, յուրաքանչյուրը 12 թերթից։—**ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝** 21,5×16,2×2 սմ.։—**ՆՅՈՒԹԸ՝** սպիտակ փայլուն թուղթ։—**ԿԱԶՄԸ՝** կաշեպատ տախտակ։ Կաշվի վրա ճնշումով զարդանկարներ կան նկարված։—**ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝** վերջում կա մի հատ թերթ։—**ՎԻՃԱԿԸ՝** բավարար։—**ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝** միասյուն։—**ՏՈՂԵՐԸ՝** 23։—**ԳԾՈՒՄՆԵՐԸ՝** ճնշումով։—**ԳԻՐԸ՝** բոլորգիր։—**ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝** կան հասարակ ոճով նկարված կիսախորաններ և լուսանցազարդեր, թռչնագրեր և զարդագրեր։ Գործ է ածված միայն կարմիր գույնը։—**ԳՐԻՉԸ՝** տիրացու Հակոբ։—**ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝** Պետրոս վարդապետ Ջահկեցի։—**ԾԱՂԿՈՂԸ՝** տիրացու Հակոբ։—**ԺԱՄԱՆԱԿԸ՝** 1732։—**ՎԱՅՐԸ՝** Թոխաթ (Եվդոկիա)։—**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝** սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 22ա.—(Կիսախորանի ներքև գրված է). Տիրացու Յակոբ թվ. ՌՃՁԱ (1732)։*

*Թ. 88ա.— Յիշեցէք զմեղաւոր գրիչս։*

*Թ. 88բ.— [Օ]րհնութիւն Հօր ծնօղի, փառութիւն Որդւոյն Միածնի, բարեբանութիւն Սրբոյ Հոգւոյն փառակցի և երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեան և միոյ աստուածութեան այժմ և անզրաւ յաւիտենիւ, ամէն։ Որ մշտաառատ ողորմութեամբն իւրով ետ կարողութիւն ամենամեղ և թշուառ անձին Ակոբ սուտանուն դպրիս հասուցանել աւարտ զվայելչագիր տառս որ է քաւազանագիր և թուին Հայոց ՌՃՁԱ (1732) ամին, իսկ ամսեանն յունիսի, ի խնդրոյ Ջահուկեցւոյ Պետրոս վարդապետի, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ իւրայնոցն։ Արդ, որք հանդիպիք սմա տեսանելով կամ ընթեռնելով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեալ բարունին հանդերձ ծնողիւքն, և զարմիւքն։ Նաև հուսկ յետոյ զտառապեալ և թափուրս գործոց բարեաց և ոտից հող պատժապարտ Ակոբ անորդա զգրիչս յիշեսջիք, և դրադում (ք. 89ա) մեղանացս խնոց թողութիւն հայցեսջիք, և դուք զվարձս բարեաց, ի բարի Արարչէն ընդունեսջիք, ամէն։ Արդ, կրկին երեսս անկեալ աղաչեմ և արտասուաթոր աչօք մաղթեմ զսրբասնունդ հայրքդ և բարեմիտ եղբայրքդ իմ ներել յոլով սխալանացս, նաև զթերին լցուցանել և զյաւելորդսն հանել անվրդով, քանզի ինքն է միայն անսխալ որ է ուղղիչ ամենայնի, ամէն։ Հայր մեր որ։*

*Փա՜ռք քեզ Տէր Յիսուս որ հասուցիր աւարտ այս գրոյս։*

*Թ. 89ա.— Ծածկագիր սյունագիր.*



*Գ ր ե ց ա ւ ի ք ա զ ա ր Ն Թ ո խ ա թ*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 6բ.—* Your most obedient nep[h]ew.

*Ձեր ամենահնազանդ բարեկամ։*

Your most obedient relation.

*Թ. 21ա— 1948։ Այս գիրքն որպէս գրչագիր նուիրում եմ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի գրադարանին, ի յիշատակ հանգուցեալ եղբօրս Թովմաս Միքայէլեանի։ Ով որ կարդայ և ողորմի ասի ինքն յիշեալ լինի առաջի Քրիստոսի Աստուծոյ, ամէն։*

*Գառնիկ որդի հաշակիր Վահան քահանայ Միքայէլեանի, Իսպահան շրջանի, Փերիայ գաւառի Նամակերտ գիւղաւանի։*

*Թ. 21բ.—Գրեցաւ ի Ջուղայ Բարոն շատ բարոն, 1876 Ա։*

Rev. Vahan T. Michaelianz, Armenian:

*Թ. 71ա.— Ցրանց Այրէրտ Փրեանդիան Աննա Աննա։*

*Թ. 76ա.—* Rev. Vahan T. Michaelianz. Armenian church:

## № 109
## ՆԱՐԵԿ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 257։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 21, յուրաքանչյուրը 12 թերթից, սակայն տեղ-տեղ խառնված է։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 21,8×16×7 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և խունացած հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որոշ մասը քայքայված։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից և վերջից չորսական թերթ դեղնած և խունացած մագաղաթ, սարերեն լեզվով, որոնք ունեն մոտ հազար տարվա հնություն։ Տեքստը բստ երևույթին Աստվածաշնչից է։— ՎԻՃԱԿԸ՝ անբավարար, թերթերը դեղնել են և կազմը մաշվել։ Սկզբից, միջից և վերջից թերթ է ձեռագիրը։ Որոշ թերթի մասերում ավելացված է հետագայում, տարբեր ձեռագրով ու թանաքով։ 251ա—253բ էջերի ձեռագիրը բոլորովին տարբեր է և թերթերը ավելի փոքր։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն՝ 5ա—39բ, 41ա—42ա, 47ա—47բ, 55ա—55բ, 94ա—94բ, 101ա—101բ, 153ա—153բ, 159ա—162ա, 180ա—181բ, 191ա—191բ, 199ա—199բ, 204ա—213բ, 218ա—218բ, 221ա—237բ, 240ա—244բ, 246ա—247բ, 250ա—253բ, իսկ մնացյալ բոլոր թերթերը երկսյուն են։— ՏՈՂԵՐԸ՝ փոփոխական, միասյունը՝ 23—34 տող, իսկ երկսյունը՝ 21—23 տող։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ կան միայն երեք հատ անարժեք զարդագրեր, (196ա, 237ա, 247ա)։ Տեղ-տեղ մեծատառեր և որոշ տողեր գրված են կարմիր թանաքով։— ԳՐԻՉԸ՝ Գրիգոր։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Սարգիս վարդապետ։—ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԷ դար։— ՎԱՅՐԸ՝ Մոկաց լեռ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 153բ.— Ողորմութեամբ քո Տէր խնայեայ ի տարակուսեալ ոգի գրողիս Գրիգորի այժմ նուազարանի աղաւթիւք Սրբոյն Գրիգորի հսկողանուն վարդապետի, երանեալ և մեծ կրաւնաւորի Նարեկայ վանից վանականի և քեզ փառք յամենայնի։ Վերստին յաւելուած, կրկին հեծութիւն, նորին հսկողի առ նոյն աղերս մաղթ.։*

*Թ. 183բ.— Ողորմութեամբ Տէր Քրիստոս աշխատիս և ծնաւղաց իմոց և որոց գթացին ի կեանս մեր և քեզ փառք ընդ Հաւր և Սուրբ Հոգւոյդ յաւիտեանս, ամէն։*

*Թ. 213բ.— Ցիշեայ Տէր գթութեանց սիրողտ իրաւանց նայեայ վերստին ի բնութեանս կերպարան, միշտ սխալական աւգնեայ ինձ զարժեալ զամէն ընթաց։*

*Թ. 215ա.— Ով մեծդ Գրիգորիս՝ զվայն որ ինձ է վիճակեալ զի...*

*Թ. 237ա.— Քրիստոս Աստուած բարեխոսութեամբ սուրբ ծնաւղիտ քո և միշտ կուսիտ, աւգնեայ ստացողի սորա Սարգիս վարդապետին և դու օհնիս միշտ յաւիտեանն։ Ցիշատակագիր պատասխանո սորին ընծաական գրոյ երջանկի և շնորհընկալ Տեառն Ստեփանոսի յերիցս աննման հոգէբուխ վարդապետի։*

*Շնորհակիր էին և հոգոյ նորա ընդունակ ընտրեալտ և ներանձնացեալտ այցելու ըստ հայցման հաճութեան բարէսէր կամաց երջանկիդ և դրութեանն նամակ ի ձեռում պատճենին յաւրինեալ շարադրեցի ի վեհիս գովեստ հիւսուածս բանից, և նկարեցի, մատուցի ի գեղ պատկերի դիմաց սոփեստիտ և սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտինիդ, և արձանացուցի ի շրթունս գրչիս, անշունչ խաւսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հաչողիս, անգուլ պատմողիս և անսայթաքելի քարոզչիս, զանուն տենչալի ձեռուղմ կոչման Տէր Ստեփանոս լերինդ Մոկաց հզաւր դիտապետ մնալ յարակա ի սոյն համառաւտայգիծ մատեն (բ. 237բ) աւուրս անթիւս և յամս հազարաւորս։ Իմովս ապաւ. Այ. գնեա իմաստիւս ի Գրիգոր յե... վարժապետաց և... եր բանասիրաց, որդի դստեր հաւրն Անանի... հո է արդ և հմտավարժ փիլիսոփաի և ըստ վարուց մաքրուկրաւնից յոյժ հոչակելո և ընծաեցի քումդ եկեղեցեալք զայս նուէրս բարեաց բանից ցանկալեաց։*

*Արդ վաելեա յայսմ բերկրութեան յամեալ և յարակաեալ ի հոգեոր հրճուանս ազաւթից և ընկալեալ խառնեսցես ի յոքնահամբար զարդս ամենագեղս երկնային գանձուցտ զտարազ տեսակի տառիտ և յիշատակեսցես զանուն իմ զտրուպ ի գաւիթ սենեկի անձկութեան սրտիդ և նորոգեա զմերս ի ձեռումտ սուրբ խորանի աստուածարնակի հանդէպ սեղանոյտ արարչընկալ ի զերկոսին զմեզ ի միում կարգի զիս և զեղբայրն իմ զանդրանիկ զՑովաննէս, ցանկալի անուն, հանճարեղ գիտնական և իմաստայսէր առաւել քան զիս որպէս ընդ Եւաէրի երգագրի անն Պանփիւլեայ և յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ, որպէս և քոյդ հոգի միացեալ ընդ մեզ միջնորդաւ բանին էութիւն ի մի հալոց ընտրութեան քրաի անբաժին տեսմամբ և անորիշ շնչով և անայլայլակ խորհրդով, և անանչրպետ ամաւք, և խարըսխեալ, հաստատեալ և հիմնաւորեալ խորհրրդովք ի Քրիստոս Ցիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։*

*Այլ քանզի անընտել գոլ ու տեսութեամբ բաղձալի վայրիցդ և սրբոց խորանցդ զթերին լիութեան, և զպակասն աճելութեան, յարմար անգրութեանդ աղերսեմ շնհլ։*

*Ներբողեան գովեստի ասացեալ ի համաւրէն գունդս սրբոց առաքելոցն երկոտասանիցն նախապատիւ պետութեանց... ՀԹ.ուցն սրբազան աշակերտացն Քրիստոսի երգ...*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 65ա.— Տէր Պետրոս յիշեցէք Քրիստոս։*

*Թ. 179բ.— Ով եղբայրք։*

*Տէր Աստուած ողորմի Յակոբոս կրօնաւորին, որ զգիրքս Աւետիս կրօնաւորին երետ։*

*Թ. 246ա.— ...ակամ, անորից, անանցրպետ Սուրբ Երրորդութեանն այժմ և միշտ յաւիտեանս յաւիտեննից. ամէն։ Ով եղբայրք. որք հանգիպիք այսմ հոգէմատենի յիսեսցիք յողաւթս զատացաւղ սորա զԱւետիս քահանայ որդոյ և փափագանաց եւ նորոգել զսա ի վայելումն անձին իւրոյ. և եղբաւր իւրում Աւետուորին և զիս զԳրիգոր սուտանուն կրաւնաւորս որ զետին գիրս գրեցի։ Աղաչեմ զձեզ սխալանացս անմեղադիր լերուք և Աստուած զյիշողքս յիշէ յիւր թագաւորութեանն. ամէն։*

*Թ. 253բ.— Զմեղապարտ գրիչ էլեզման Յիսուս ի Քրիստոս։ ԳԺԴ։*

## № 110

## ԱՒԵՏԱՐԱՆ

**ԹԵՐԹԵՐԸ՝** 299։—**ԳՐԱՆՆԵՐԸ՝** 25, յուրաքանչյուրը 12 թերթից։—**ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝** 21×15×5,5 սմ։—**ՆՅՈՒԹԸ՝** սեացած և կեղտոտած թուղթ։—**ԿԱԶՄԸ՝** կաշեպատ տախտակ։ Կաշվի վրա ճնշումով նկարված են զարդեր։ Կաշին հնացել և տեղ-տեղ պոկվել է։ Կողքի առաջին երեսին զամերով ամրացված են բրոնզյա մի հատ խաչ, մի հատ զարդ և բազմաթիվ կլորագլուխ մեխեր։ Ներքևում եղել է մի հատ մեծ խաչ, որն ընկել է։ Չորս անկյուններում կան մեկական հրեշտակներ, իսկ կենտրոնում կա ձուլածո մի խաչ, որի վրա քանդակված են չորս ավետարանիչները, կենտրոնում ունենալով Մարիամ Աստվածածնին և Հիսուսին։ Կազմի երկու քանիլները ընկել են։—**ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝** սկզբում կա երկու թերթ թուղթ։—**ՎԻՃԱԿԸ՝** բավարար, թեպետ կողքը հնացել է։—**ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝** երկսյուն։—**ՏՈՂԵՐԸ՝** 23։— **ԳԾՈՒՄՆԵՐԸ՝** ճնշումով։— **ԳԻՐԸ՝** բոլորգիր։— **ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝** կան շատ հասարակ և անարժեք կիսախորաններ և լուսանցազարդեր, զարդագրեր և թռչնագրեր, խաչեր և թռչուններ։—**ԳՐԻՉԸ՝** Պապ քահանա։—**ԾԱՂԿՈՂԸ՝** անհայտ։—**ԺԱՄԱՆԱԿԸ՝** 1670 թ.։—**ՎԱՅՐԸ՝** անհայտ։—**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝** սույն ձեռագիրը ստացված է Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցուց։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 73բ.—Զտառապեալ գծողս Տէր Պապ անիմաստս։*

*Թ. 100ա.—Ով եղբայր+ թողութիւն արարէք։ Թանակ նոր զուգեցի. մինչև ի յայս հին էր։*

*Թ. 299ա.— Յիշատակ է աւետարանս Ղազարոսին և իւր կենակցուն Եազութին և հանգուցեալ որդոյն Մարկոսին և ամենայն զարմիցն և զաւակացն և համաւրէն ննջեցելոցն, որ գնեց սարկաւագ Ղազարոսն զայս Սուրբ Աւետարանս ի հալալ ընչիցն իւրոց. իւր հոգոյն յիշատակ. և որ յիշէ. յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ամէն։ Հայր մեր որ յերկ.։*

*Թվին ՌՃԺԹ (1670) գրեցաւ։*

*Կրկին յիշեցէք զեազութին հոգին որ է ամաց փոխեցաւ առ Քրիստոս Աստուած, իւր մեզացն թողութիւն շնորհէ, ամէն։ Հայր Մեր։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 2ա.— Յիշատակ է այս Սուրբ Պապ Աւետարան հանգուցեալ Նողեսին, կողակցուն հանգուցեալ Եզսիկին, որդուն Աթօին, Յօհանէսին, Ոսկանին, դստերացն Մարգրիտին, Մարամին, Անային, իւր փեսա որդի հարազատ Աթօին, իւր հանգեալ հօրն Արթենին, կողակցուն Կուլային, կողակցուն, հօրն հանգեալ Սարգիսին, իւրանց հայալ առան յիշակատ ուին որ կարգա յիշակատ է. յիշա յինչի անմա զառին Աստուծոյ. յիշակատ։ Հայր մեր աւէ ուին յիշատակ Տէր Աւետիսին. թվին ՌՄԾԴ-ին (1805)։*

*Թ. 218ա.—... Րզկալահ...*

*Աստուած Միշատր Դիրխասից հոգոն. ծեերեծ ով ոէսուցն։*

*Թ. 213բ.—յԱւետարան ըստ Յօհաննու*

*Թ. 299բ.— Մեյրիսէթ երէց։*

*Թագաւոր փառաց Աստուած, հոգիտ կենդանանար ի շնորհարաշզ յաւուր մեծի ծնընդեան Մարիամու դըստեր Դաւթի թագաւոր նորոգեա զկենդանութիւն մերոյ թագաւորի Զի օրհնեսցուք ըզքեզ Տէր յայժմ և յաւիտեանս։*

*Ի թվականութեան մերում հայոց՝ Ռ-երորդ. Մ-երորդ և է-երորդի (1858), ի հայրապետութեան Տեառն Յակոբա կաթողիկի յԱթոռն Սրբոյ Էջմիածնոյ, փառք յաւիտեանս. ամէն։*

(Շարունակելի)